


Ն. ԶԱՐՅԱՆ

ՌՌԻՇԱՆԻ
ՔԱՐԱՓԸ

891. 99

2-39





$\frac{891.99}{2-39}$ *uy*

ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ

19 NOV 2011

ՌՈՒՇԱՆԻ ՔԱՐԱՓԸ

Յերբող վերաձեռնված հրատարակություն




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1936

29457

12.04.2013

Շապիկը՝ Մհեր Աբեղյանի

Ռ Ո Ւ Շ Ա Ն Ի Ք Ա Ր Ա Փ Շ



Մաթևոսյան՝ Ս. Արզումանյան

Գլավ. № 290, սրատվ. № 1267, Հրատ. № 3530, տիրած 3000

Պետերատի տպարան—Յերեվան

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԱԼԵԿՍԱՆԸ ՎԵՐԱԳԱՌՆՈՒՄ Ե ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՑ

Նա տուն եր գալիս Կարմիր բանակից:
Են ջահել տղեն — անունն Ալեքսան:
Գրքերով լեցուն տալրակ շալակին
Ու գոշին կարմիր, աստղածև նշան:
Մի ծիրանագույն աշնան յերեկո
Փովել եր դեմի լեռների վրա:
Յեղ Ալեքսանի սիրտը թե առած՝
Ուզում եր թռչել մաշինի հեքով
Ու տուն սլանալ իրենից առաջ:
Նա քանի գնում, մոտենում եր տան,
Անցնում եր ծանոթ արտերի մոտով, —
Լցվում եր ենքան անհուն կարոտով
Ու սիրտն անհամբեր զարկում եր ենքան:
Կարմիր բանակից նա գալիս եր տուն,
Խորունկ մտքերով վառված են տղեն:
Սրտում յերկու բոց, յերկու վառ յերդում,
Շուրջը յերեկո, մշուշ վոսկեղեն:
Առաջին յերդումն նա անցյալ տարի

Տվալ Լաչինի չինար աղջկան
 Ռուշանի կապույտ քարափի քարին,
 Յերբ հանդում հովիվ ու չիվոր չկար:
 — Արուս, անիրավ, չգնաս մարդու,
 Յես կգամ հենց վոր տարին լրանա... —
 Ու ջերմ խոստումի կրակը սրտում՝
 Սիրահար տղին վերցրին բանակ:
 Նա յերկրորդ անգամ յերգվեց յերեկ:
 Բանակում հանգես ու միտինգ արին .
 — Յես խոսք եմ տալիս կյանքս նվիրել
 Ընկեր Լենինի մեծ ճանապարհին:
 Յեվ նրա քարե արձանի առաջ,
 Լենինյան կարմիր դրոշներն առած՝
 Նրանք յերգվեցին պայքարել համառ
 Սոցիալիստական նոր գյուղի համար:
 Ու վողջույն տալով ընկեր-ծանոթի՝
 Հին ճանապարհով իջնում եր նա ձոր,
 Ուր գյուղը, փռված գետափին մոտիկ,
 Յեվ նույն եր թվում, և թվում եր նոր:
 Նույն է ժամի մոտ, ընկուղենու տակ
 Բերդի դարավոր պարիսպի ստվերում,
 Չաթնանց Սանթրոսի շենը լայնաբակ
 Բերդի պես քարե թանձր պատերով:
 Նույն է Լաչինի խարխուլ արարան,
 Աթար ամրոցն ու մարտը հին.
 Բրդե քրքրված փափախի նման
 Խոտի դեզն է նույն կտուրի գլխին:
 Յեվ գյուղի ծայրին, ցածլիկ ու բարակ,
 Իրենց հողաշեն հյուղն է յերևում,
 Վոր վոչ բակ ունի, վոչ լիքը մարագ,

Վոչ ել խոտի դեզ կտրան վերևում...
 Նույն է. բայց կարծես նա նոր է տեսնում
 Այդ խառնափնթոր խրճիթների մեջ
 Դասակարգային մի սուր բաժանում,
 Անանցանի խորխորատ մի մեծ:
 «Այս հին, ծուռ ու մուռ գյուղը կործանել,
 Շինել կոլեկտիվ, պլանավոր տներ —
 Բաղաքի նման լայն փողոցներով,
 Ու լինել եղ մեծ պայքարում հերոս —
 Ահա թե յերեկ ինչ յերգվեցիր դու,
 Առաջդ դրիր ինչ մեծ նպատակ...» —
 Ես մեծ մտքերի կրակը սրտում՝
 Ընկեր Ալեքսանն իրենց գյուղ մտավ:

— Բարե, սյա, բարե ա հեր,
 Վերջացրի, յեկա տուն:
 Վճնց եք իրար շահել, պահել,
 Վճնց եք ապրում, աշխատում:
 — Վճյ, — վեր թռան հեր ու նանի,
 Մեկ-մեկի փեշ ձեզ տալով:
 Մեջտեղ առան Ալեքսանին
 Համբուրելով ու լալով:
 Մայրը հետո թաղիք փռեց
 Հողե խոնավ թոնրատան
 Ու կեղտակուր բարձր դրեց
 Աղիգ հյուրի մեջքի տակ:
 — Ա՛յ մարդ, ձեն տուր, գա խնամին,
 Յես ձվածեղ, չայ շինեմ:
 Կտուր յելավ Հովաս տմին.
 — Դուրս յեկ, Լաչին, Լաչին, Էյ...

Աղգ, հարեան, ընկեր, ծանոթ
 Իրար աշխուժ ձեն տվին:
 Հավաքվեցին. — բարի գալուստ
 Ձորացրված մեր տղին:
 Հավաքվեցին հետզհետե,
 Ով կար մոտիկ, սիրելի.
 Բայց յեկվորի աչքերը թեժ
 Դռան մեխված են ելի:
 Ա՛խ, մեկը կա, նա չի գալիս,
 Ա՛խ, հին աղաթ դու հիմար.
 Նա ել գուցե կարոտալից
 Լալիս է տանը հիմա:
 — Բաղդ բերեց, Հովաս քեռի...
 — Թեկում քիքիր, աչքդ լիս.
 Տղեդ յեկավ գիրը ձեռին
 Արտդ գրչով կցելի:
 — Եսպես խոսել, բան հասկանալ,
 Եսքան կարգալ, սովորե՛լ...
 Ձուր չեն ասել կարմիր բանակ,
 Խորհրդային նոր որենք:
 Հարցեր տվին հեռվից հեռու,
 Պատասխանեց նա ձեռաց.
 — Ի՞նչ կա արդյոք քաղաքներում,
 Խաղաղությո՞ւն, պատերա՞ղմ...
 — Վախենում են մեր բանակից,
 Ձեն կարա գալ մեզ վրա.
 Շողաց աչքում հաղթանակի
 Հերոսական մի կրակ. —
 Իսկ դու, հայրենի, մինչև հիմա
 Ձեռ ել մտել կոլեկտիվ:

Յես գրել եմ քսան նամակ,
 Յես գրել եմ, թե մտիլ:
 Եսպես է ճարն, ես է ճանփան
 Դուրս գալու նեղ վիճակից:
 Եսպես է մեր իշխանության
 Գիծն ու կամքը գիտակից:
 Ի՞նչ էս ասում, Լաչին ամի,
 Ի՞նչ էք ասում հեր ու մեր:
 Կոլեկտիվ է լսալիսը հիմի,
 Վախտը մերն է, հերթը մեր:
 Ձեռքը տարան ծոծրակներին,
 Տիրեց խորին լուսթյուն:
 Մեջքը քորեց Հովաս քեռին
 Ու յետ դառավ իր վորդուն:
 — Հաստատ կենա իշխանությունը,
 Լավ ես ասում, բալա ջան,
 Մեղ համար է հա աշխատում,
 Հո չե՞նք լինի դավաճան:
 Վարկ ել տվավ անցյալ տարի,
 Յես ել առի մի աչառ,
 Դու ել յեկար, գալդ բարի,
 Դու ել, կարաս, մի հատ առ...
 Եզուց, ելոր դարնան վարին
 Ձութ կլծեմ սեփական:
 Դու ուրիշ մարդ, կարաս, ճարի,
 Յես չքավոր, յես հա կամ:
 Մանկությունից հոտաղ, մշակ,
 Տկլոր, անտուն ու անտեր,
 Իշխանության արևը շատ,
 Ինձ դարձրեց յեզան տեր:
 Վճնց եմ շահել, վճնց եմ սահել,

Քորփա, ջահել եղ դանեն.
Իսկ դու եսոր վեր ես կալի,
Թե կոլլեկտիվ կտանեմ:
Թույլ տուր, վորդի, պարզաբանեմ,
Համաձայն չեմ եղ բանին:
Յես չլծած յեղս տանեմ
Խալիսը քչի, սպանի:
Թույլ տուր ախար, ինքս լծեմ,
Մուրազս առնեմ մի տարի:
Ինքս ել հետո չեմ լինի դեմ,
Առ տար ու տուր ոտաբին:
Վերջացրեց Հովաս քեռին
Մեջքը կրկին քորելով,
Հետո նայեց ներկաներին
Տարակուսած ու մոլոր:
— Ի՞նչ եք ասում, հարևաններ,
Ի՞նչ եք ասում, ա կաչին...
Հաչինը լուռ գլուխն առել
Միտք ե անում առանձին:
Խոսքը կալավ Թելում բաջին,
Քիթը սրբեց գոգնոցով:
Ու աչքերում շողշողացին
Յերկու կաթիլ, յերկու ծով:
— Ալեքսանիս աղիղ խաթեր
Դեմ մի գնա, այ Հովաս.
Խալիսի դռան շատ ես դատել
Ու մնացել հա սոված:
Կգամ, բալա ընչի՞ չգամ,
Ի՞նչս պիտի կորցնեմ,
Հարստությո՞ւն, լծկա՞ն, կթա՞ն,

Բարիքով լի նոր տներ:
— Ձե, այ քիքիւր, — ծիծաղելով
Գարսեանը ձեն տվավ. —
Ունեցողն ել կոլլեկտ գալով
Ձի կորցնի վոչ մի հավ:
Կոլլեկտիվը չի մնացել
Հովաս քեռու աչառին:
Բայց մի աչառ, Թեկուզ մի յեղ.
Աբաղ մենակ չի վարի:
Միայն մի բան, Թելում քիքիւր,
Կկորցրենես կոլլեկտում,
Եդ — վիճակդ տաժանակիր,
Եդ — կարիքներդ բազում:
Ել ուրիշ բան չես կորցնի,
Այլ կգտնես ճանապարհ
Դուրս գալու այս մկան բնից
Դեպի նոր կյանք, նոր աշխարհ:
— Եդ եմ ասում յես ել, բալա,
Խի՞, աչքերս քո՞ւ կուզեն: —
Թելում բաջին խոսքը կալավ
Ու շուռ տվավ դեպի դեն, —
Խի՞ չեմ ուզում մարդավարի
Ապրեմ, մաքրեմ ու հագնեմ,
Քաղաք գնամ ամեն տարի,
Չուզողները տրաքվեն:
Յես ել մեր եմ, վորդու տեր եմ,
Մուրաղ ունեմ իմ սրտում:
Ասի Թառլան հարսըս բերեմ,
Տղիս անեմ տեղ ու տուն:
Հարսըս բերեմ հարսանիքով,

Փառք ու պատիւ տեղ լինի,
 Ծաղով, ծաղսով, թաղարիքով,
 Շաղ տամ արաղ ու գինի...
 Համ ասում ե, համ շողոքորթ
 Աչքով անում Լաչինին.
 Լաչինը լուռ միտք ե անում,
 Չի իմանում ինչ անի:
 — Չե, այա ջան, եղ կներես,
 Ասավ վորդին կարմրած,
 Շողոքացին աչք ու յերես,
 Միրտը թաքուն թրթռաց: —
 Չե, այա, ջան խելքից հանի,
 Հին սովորույթ, հին կենցաղ.
 Ինչի՞ս ե պետք մեծ հարսանիք,
 Արաղ գինի, ծախս ու ծաղ:
 Սեր ունենամ յի ծիծաղով,
 Սերն ե արաղ ու գինի,
 Մերը չեղավ, ծախսով, ծաղով
 Ուրախություն չի լինի:
 Քեֆ չեմ անի ջերս դարդակ,
 Վեր չեմ տնի յեղ ու կով:
 Յարիս կառնեմ կոլխոզ կերթամ
 Կարմիր, կարմիր պսակով:
 Կոլեկտիվում կապրենք սիրով
 Ու կաշխատենք միասին:
 Սուտ ե, այա, կուլակի խոսք,
 Ծաղ ու արաղ մի ասի:
 Մարդ ու կնիկ տարակուսած
 Մտիկ տվին խնամուն:
 Խնամացուն ծանր աղաց

Յեւ ասավ.

— Չեմ իմանում:

Հավանել եմ Ալեքսանին,
 Խելոք, հալալ կաթնակեր:
 Կսպասենք մի յերկու ամիս,
 Մինչև մի քիչ մտածեմ:
 Ու վեր կացավ ծմրտալով,
 Լաչն ու յերկար հորանջեց,
 Սովերն անցավ պատի վրայով,
 Հսկայական ամպի պես:
 Դուրս գնացին ընկերները
 Ալեքսանին սիրտ տալով,
 Նրանք — իրենց, մենք ել՝ մերը՝
 Տեսնենք ռվ ե հաղթելու:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ա. Ռ. Ա. Ջ. Ի. Ն. Բ. Ե. Ր. Ք. Ը.

Բիմիական մատիտ ու բլուկնոտ ձեռքին,
Դեմը մի խարխուլ, կեղտակուր սեղան,
Դպրոցում նստած հաշվում ե կրկին
Կոլխոզի նախագահ ընկեր Գարսեանը:
Քսան ինն թվի գարնանացանին
Նա ինն ընտանիք հավաքեց իրար,
Կոլլեկտիվ հիմնեց: Հետո շրջանից
Ստացավ գույքան ու լծկանավարկ:
Յեվ կուսըջիջի իբրև քարտուղար
Բջիջի ուժերն այդ կողմը տարավ,
Գյուղփոխի ֆոնտից կոլխոզի համար
Ամենաընտիր հողերն ել առավ:
Համառ համողեց տատանվողներին,
Կռվեց սեփական ծնողներն զեմ,
Շրջկոմը հասավ նեղ բողոքներին
Ու խնդիրները դժվարին՝ հարթեց:
Ու վարեց — ցանեց կոլլեկտիվ ուժով,
Աշնան ել հաջող բերք հավաքեցին:
Ինն ընտանիք արդեն ապահով,

2
3

64-1874

եւ կարիք չունեն կուլակի հացին:
Բայց ասես չկա, չի յերևում այդ,
Աչքի չի դարկում զբսից նայողին,
Առաջվա նման անջատ ու ցրված,
Չուլված են ասես ելի հին գյուղին:
Ամեն մեկի յեզն ելի իր գոմում,
Ամեն կտուրին անջատ խոտի զեղ,
Չկա մի մարագ, մի գոմ ընդհանուր,
Վոր վողջն հավաքես ու մի տեղ կիտես:
Վոր այն ժամանակ յերևա վորոշ,
Կոնկրետ, զրավիչ, իսկը քո ասած,
Վոր պարզես վրան մի կարմիր դրոշ,
Ու տեսնողն ասի. — «կոլլեկտիվն ե սա»:
Կտեսնեն մարդիկ, վոր գործ ես արել,
Վոր ույժ ունես զու գիղված ու կուտակ,
Այլ վոչ թե դատարկ հեքյաթ հնարել,
Պատմում ես նրանց ամեն պատի տակ:
Այ, են ժամանակ քեզ կհավատան,
Կմտնեն կոլխոզ, կոլխոզը կաճի,
Կդիմես կենտրոն, տրակտոր կտան,
Կփոխվեն արագ գյուղն ու գյուղացին:
Այո, պետք ե մեզ վորոշակի զեմք:
Խնդիրը պարզ ե և շատ հասարակ:
Պետք ե կառուցել մի ընդհանուր շենք:
Առաջին հերթին մի գոմ կամ մորագ:
Ասես խայթված սեփական գյուղից՝
Դարսեանն արագ վեր յեկավ ու շտապ
Ծաղեց, վերցրեց բլուկնոտ ու մատիտ՝
Զգալով սրտում նոր կորով ու թափ:
Գնաց զեղամեջ: Գտավ Սողոյին:

Կոռսերատիվում կանգնած եր Սողոն:
 Մարդիկ նրա շուրջ խոնովել էյին:
 Սովորական վեճ աղմուկ ու բողոք:
 — Վերջացրու, Սողո, դուրս չեկ մի բողոք:
 Խոսելիք ունեմ քեզ հետ առանձին:
 Ահից Սողոյի սիրտը արեփեց:
 «Արդյոք ելի նոր մի հրահանգ չի...»:
 Պատմեց Գարսեանն իրա ծրագիրն:
 Ու Սողոն լսեց, լսեց մի վարկյան,
 Հետո մտազբաղ ու անհամակիր
 Ասավ:
 — Չի լինի, ընկեր Գարսեան:
 — Լսիր ե՛, Սողո, ամեն մի շնչին
 Հասնում ե ուղիղ քսան փուլից ցորեն:
 Եղբան մի տարում ուտելու բան չի:
 Պիտի մասնավոր շուկա դուրս բերեն:
 Գալոն կտանի, արաղի կտա
 Վաղոյի մերն ել պատարագ կանի:
 Իսկ մենք կշինենք մի գոմ ածղահա,
 Վոր կոլխոզի վողջ տավարը տանի:
 x — Յես համաձայն չեմ, — տատանվեց Սողոն, —
 Գոմ ես կառուցում, ուղում ես մարագ,
 Եգուց կկանչես կոլխոզի ժողով,
 Հարցը կքննես ժողովի առաջ:
 x — Առանց քննելու հարցը բջիջում
 Չենք կարող դնել կոլխոզի նիստին:
 Կհամաձայնվեն, դու գուր ես վիճում,
 Լավ ե դու պնդիր ինձ հետ միասին:
 — Յես համաձայն չեմ: Վարկն ենտեղ թողած
 Դու աչք ես դրել կոլխոզի հացին:

Թե ինչ ե՛ ունենք մի ճանկ ափել հաց...
 Տո՛, աղամարդ ես, դու վարկ ստացիր:
 — Վարկ ստացել եմ, ելի կստանամ,
 Բայց ինչո՞ւ դիմեմ, յերբ կոլխոզն ունի:
 Վարկն ել հո սարում ձրի չի՞ ցանած:
 Չե՞ վոր պոկում ես քո պետութ՝յունից:
 — Յես համաձայն չեմ, — համառեց Սողոն, —
 Մեր պետութ՝յունն ե, ուրեմն կտա:
 Բաս հըր ենք մարդկանց գլուխը յեղում,
 Կոլխոզ գրավում, յերբ ոգուտ չկա:
 — Կոմունիստ մարդուն, Սողո, չի սաղում
 Ուտել ու հաշիվ չտալ ինքնիրեն:
 Քո կոլտ Գալոն, թեկուզ յերազում,
 Տեսե՞լ եր սկի քսան փուլից ցորեն:
 — «Քսան փուլից ցորեն», «քսան փուլից ցորեն»:
 Բայց խլում ես ե՛, չես թողնում ուտի:
 — Սողո, չենք խլում, գուր ես պղտորվել,
 Գոմ ենք կառուցում մենք նրա ոգտին:
 Ասում ես, վարկով: Վարկ չեմ ստանա,
 Կոլխոզ ես հիմնել ե վոչ թե ուրեմ,
 Վոր կուտակելու ախորժակ բանաս
 Ու պետութ՝յունից անընդհատ պոկես:
 Տիրեց լուրթյուն: Յեվ անհամակիր
 Սառնութ՝յամբ Սողոն ուտերը շարժեց:
 — Լավ, վոր պնդում ես՝ ժողով հավաքիր:
 Բայց իմացիր հո՛, յես համաձայն չեմ:

Բոլոր անդամներն ինն ընտանիքի
 Հավաքվել էյին Սողոյենց հողեն:
 Հավաքվել էյին ու ծալապատիկ

Հին փառանքներն Վրա նստոտեի:
Ամենից վերև, բուխարիկի մոտ
Հերն եր Սողոյի, Զուռնաչի Զաքին:
Գլխին՝ ահագին մի լոռխարի մորթ;
Բրդե, տնադորժ արխալուխ հագին:
Իսկ նրա դիմաց՝ Գարսեանի հեր
Քեռի Բարթոն եր հենվել կռպալին:
Նայում եր վորդուն ու հարսին ջահել,
Մտքում ինքնիրեն յերանի տալիս:
Բարթոյի կողքին Շիրինն եր շտապ
Ճմռում գոմշենի իր արեխացուն,
Բեխերի միջից խոսում եր անկապ
Ու մեկ-մեկ թքով տրեխը թացում:
Շիրինի դիմաց նստել եր Գալոն,
Կոճղի նման հաստ ու կարճ գլուղացի,
Վորը խժռում եր արագ կուլ տալով
Զեռքի ահագին դուռումը հացի:
Հետո Աղասին, սափրված, մաքուր,
Ուսին՝ քսան թվից բերած մի շինել:
Աշխատել է նա յերկար քաղաքում
Ու գյուղում սիրուն սենյակ է շինել:
Աղասու կողքին, փոքրիկ ու լղար,
« Պուճուր » — Վաղոն եր քամակը քորում:
Վոնց վոր տասներկու տարեկան տղա,
Վոր ունի օակայն է բեխ է մորուք:
Վաղոյի դիմաց, մոր հետ միասին,
Նստել եր Արտոն, շալվարը պատռած:
Բատրակ եր Արտոն: Նրան գլուղացիք
Անվանում էյին « Յերամի բատրակ »:
Հողի կենտրոնում՝ փոքրիկ մի սեղան,

Վրան՝ մի մատյան կոտրված կողով:
Նստել եր Վասոն վորպես քարտուղար,
Իրըն նախագահ նստել եր Սողոն:
Զրույց եր անում հորաքույր Սառան,
Ներկա չեր նրա Սարիբեկ վորդին,
Կուսգյուրոց էյին գործողել նրան:
Իսկ հողի փայտե խաբխուլ ճաղերին
Կրթնել էյին յերեխեք, կանաչք,
Ու փափսալով սղասում էյին,
Վոր կոլլեկտիվի ժողովը բանան:
Վեր կացավ Սողոն: Գլխին հին կասկա,
Շինելից կարած պինջակը հագին,
Կախած գալիֆե շալվարի վրա
Կաշեկար պատյանն ատրճառակի:
Մեր որակարգում մի հարց կա այսօր,
Ու ձեռքը Սողոն խփեց սեղանին —
Մի հարց, ընկերներ, բացք խիստ կարևոր,
Յես տալիս եմ խոսքն ընկեր Սևանին:
Գարսեանն յեղավ, ժպտաց խորամանկ:
Հանեց գրպանից բլոկնոտ ու մատիտ:
Հետո՝ թանաքոտ մի մեծ թաշկինակ,
Ու սրբեց քրտինքն այրված ճակատից:
Հեռվից սկսեց: Ու զգուշ, մանեման,
Մոտենում է նա վտանգավոր տեղին,
Ծանոթ եր ամեն մեկի թուլությանն —
Ու գիտեր, թե հարցն ով ուր կշեղի:
— Ուրեմն, ընկերներ, ինչպես վոր ասի,
Կոլլեկտը տարավ խոշոր հաղթանակ:
Ինչքան թշնամին վռնա, տրաքի,

Մենք հաղթանակով առաջ կընթանանք:
 Դիմել են արդեն մեր կոլլեկտիվին
 Տասը չքավոր ու յոթը միջակ:
 Մեզ հետ ե արդեն միջակ գյուղացին՝
 Մաղաքանց Մուքոն ու Գարաս բիձան:
 Բայց կոլլեկտիվում մի քանի կանայք
 Սիրում են ելի ուտել ուրանալ:
 Շրջում են տներ, գանգատվում, խոսում,
 Թե այլան-թալան, սով ե կոլխոզում:
 — Եդ հւմն ես ասում ուտող-ուրացող, —
 Ճշաց Սողոյի ալան անկյունից: —
 Ո՞վ ե եղպիսի խոսքեր տարածող,
 Եդ խի՞ յես եղպես մտիկ անում ինձ:
 — Դու յես տարածում, Փառանձեմ քիքի՛ր:
 Ժամում, կիրակի, Մուքոյի կնկան
 Ասել ես միթամ տունդ քանդեցիր,
 Խորհուրդ ես տվիլ, վոր նրանք չգան:
 Հետո, ընկերներ, պետք ե ընդգրծիլ,
 Վոր մենք չունենք դեռ կոլլեկտիվ հոգի:
 Կոլխոզի լծկանն անխնամ քցել՝
 Զրույց ենք անում պատերի տակին:
 Նոր Վասակն ու յես դոմերը մտանք,
 Յեվ ինչե՛ր տեսանք... ինչի՛ յե՛ր նման.
 Վաղոյի գոմում լծկանների տակ
 Խառնըվել եյին ազր, խոտ ու դարման:
 Իսկ ինչ եր արել Գալոն (ահա ձեզ
 Խայտառակ մի փաստ: Հանցանք հիմնովին):
 Յեղան առջևից խոտը հավաքել
 Ու կերցրել եր սեփական կովին:
 Ես ճանապարհով հետու չենք գնա:

Վորպեսզի եսպես չլինի իմ — քոն
 Ու ես բացերը արագ վերանան՝
 Պետք ե կառուցել մի ընդհանուր գոմ:
 Ու Գարսեվանը յերկար ծավալեց
 Բերքի բաժանման ծրագիրն իրա:
 Յերբ վերջացնելով բոկնոտը ծալեց,
 Մարդիկ մտազբաղ նայեցին իրար:
 Կոկորդը մաքրեց Զուռնաչի Զաքին
 Յեվ ընկավ խուրոռնկ մտածմունքի մեջ:
 — Ո՞վ ե համաձայն ես առաջարկին, —
 Սողոն հարցական ժողովին դիմեց: —
 Վոչով չի խոսում: Թեր ու դեմ չկա...
 Դեմ արտահայտվել հենց ինքն եր ուզում:
 Սակայն բջիջի վորոշումը կար
 Յեվ կապում եր այդ Սողոյի լեզուն:
 — Ընկերներ, Սեանն իրավ ե ասում: —
 Վեր յելա՛վ տեղից կոմսոմոլ Վասոն: —
 Ամեն մի շնչին քսան փուլթ ցորեն:
 Պարզ ե, վոր պիտի շուկա դուրս բերեն,
 Ծախեն շուկայում կուլակի գնով,
 Կամ տան կուլակին, վոր նա ամբարի:
 Կենտկումը խնդիրն եղպես չի դնում,
 Հացի պրոբլեմ կա մեր դեմ ես տարի:
 Կամ մենք կուլակից կխլենք շուկան,
 Կամ նա կխլի ու մեզ կհաղթի:
 Յեթե մենք չոգնենք մեր իշխանության,
 Ո՞վ պիտի ոգնի առաջին հերթին:
 Ոգնել ե նա մեզ վարկով, լծկանով,
 Ուրեմն ել ինչո՞ւ նորից վարկ ուզենք.
 Յես հարցն, ընկերներ, եսպես եմ դնում,

Մեր միջոցներով գոմը կառուցենք:
Կոկորդը մաքրեց Զուռնաչի Զաքին,
— Եդ վհնց կլի յե, թնչ և գուրս տալիս:
Յես համաձայն չեմ ընկեր Վասակին:
Իմ փայլըս տվեք, յես գուրս եմ գալիս:

— Դուրս ես գալիս... հալբաթ կգաս, —
Գուռաց Շիրինը տեղից:
Ու նետեցով արքեիսը թաց՝
Յեւով կանգնեց կատաղի:
— Դուրս և գալիս ուսթա-Զաքին,
Վոչ գատեի ե վոչ բաներ:
Ամբողջ ամբանս դեղի տակին՝
Իր բոստանն ե պահպանել:
Հիմի մեզ հետ, մեզ հավասար,
Բերքը պիտի բաժանի:
Նա ել շնչից շատ և, ախար,
Բերքի կեսը կտանի:
Իսկ յես, իմ կինն ու իմ աղես
Տրորվել ենք վողջ ամառ.
Ես դատաստան չի, ընկերներ,
Մենք աշխատենք նրա համար:
— Ագա, տեղոր, — գուռաց Զաքին՝
Խեղդվելով հաղալուց, —
Վոր ճառում ես, դու կոխողին
Ի՞նչ ես ասել, յեզ թե լուծ:
— Տո, տեղոր եմ, չքավոր եմ,
Զուռնեմ, վոր տամ լուծ ու յեզ,
Հո քեզ տալիք չ'մ մնացել:
Այ թե ինչ եմ ասել յես:
Ու Շիրինը թափահարեց

Յերկու ձեռքերը ողում: —
Ես ձեռքերով ցանք եմ արել,
Խոտ եմ հարել որնիբուն:
Համաձայն եմ Գարսեանին,
Կոլլեկտիվին գոմ շինենք:
Մնացածն ել հերիք կանի,
Մնացածը բաժանենք:
Զուռնաչի-Զաքին սաստիկ վրդովված՝
Խճըճից նորից մռայլ մաքերում:
Հացի խնդիրը մի կողմը թողած՝
Նա համաձայն չեր գոմ կառուցելուն:
«Կոմմունիստ վորդու պատիվը» չըլներ,
Իհարկե, կոխող չեր մանի Զաքին,
Մտնելիս ել նա թաքուն հույս ուներ,
Վոր գործը շուտով ներսից կճաքի:
Բայց արի ու տես, թարսը պատահեց.
Մարդիկ ցանք արին առանց կովելու:
Սատանի կամքով բերքն ել կատաղեց.
Հաց եր, վոր բերին, դիզեցին կալում:
Հաշտվեց մի կերպ Զուռնաչի-Զաքին:
Նա մինչև անգամ ուրախ եր սրտում:
Աշնանն ել գուցե տղին պսակի,
Սիրուն, նամուսով մի հարս բերի տուն:
Եղպես վոր գնար, լավ եր կոխողում:
Քչվոր, իննը տուն եղքան վարկ ու հող...
Բայց Սևանն ուրիշ հեքյաթ և ասում —
Կոխող գրավել ժողովուրդը վողջ:
Դրեկ և մաքում կառուցել նոր գոմ:
Ասել և, կանի, գլուխ կբերի:
Ուրեմն՝ կորար գլխով ու վտաքով:

Ձկա վերադարձ ես ճանապարհից...

Դե մարալ յեղնեիր զոմիցդ դուրս հան,
Ինքդ տար կապիր «ընդհանուր» զոմում...

Զու մի տա խելքիդ, չե, ընկեր Սեան,

Զաքին ջրի հետ խելքը չի խմում:

— Յես համաձայն չեմ,— կրկնեց նա ելի,—

իմ վայս ամեք, յես դուրս եմ գալի:

Կապեմ ինձ համար Սողոյից բաժան.

Յես հնի սովոր, նա՛ կուսակցական...

— Դու սուս կաց, ա հեր, քո խոսքովը չի,—

Սաստիկ ջղային բղավեց Սողոն,—

Քո դուրս գալը դու մեջտեղ մի քցի,

Հարցը կվճռի ընդհանուր ժողովը:

Բվեարկում ես— ո՞վ է համաձայն

կուսֆրակցիայի ես առաջարկին.

«Յերեքհարյուր փութ հանձնել պետության

Ու գոմ կառուցել առանց նոր վարկի»:

Յեվ կուսակցական ձեռներից բացի,

Զեռ բարձրացրին չորս հոգի միայն:

Կանայք մեծ մասով չեղոք մնացին:

Աչքով են անում իրար լուելյայն:

— Ո՞վ է դեմ,— կանչեց Սողոն բարձրաձայն,—

Ընկեր Սեանի ես առաջարկին:

Սակայն վոչ մի մատ վեր չբարձրացավ:

Նայում են լարված տղամարդ ու կին:

— Ո՞վ է ձեռնպահ,— բղավեց Սողոն:

Ելի վոչ մի ձեռք: Ու ծպտուն չկա:

— Եսպես ել պասսիվ, յեկիլ են ժողով,

Վոչ թեր են, վոչ դեմ և վոչ ձեռնպահ:

Վոր խաղն ես անգամ տարել եր Սողոն,

Վոր տարել եր նա վերոջ «աշխատանք»,

Ահ եր սերմանել իր մոր բերանով:

Իսկ ինքը լավ չեք նախապատրաստվել:

Հարցը ինքնահոս բաղդին եր թողած:

Բայց պայքարը մեր դեռ չի ավարտվել...» —

Այս միտքը նրա գլխում շողողաց:

Սակայն Գարսեանն արդեն հասկացավ,

ԳՅՈՒՂԽՈՐԷՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՈՂՈՆ

Նորից անձրև: Աշուն: Քամի:
 Ձանգուն իր հին ճառն է ասում:
 — Ժողով է, հեյ, Լաչին ամի —
 Ձայն է տալիս կատարածուն:
 Ու աներում, ժողովներում,
 Փողոցներում, պատերի տակ,
 Կյանքն է գյուղի հուղիում, յետում
 Ու շուռ գալիս հիմնահատակ:
 Տնքում է խոր ընկեր Սողոն —
 Նախագահը գյուղխորհրդի:
 X — Եսպիսի տեմպ, եսքան ժողով,
 Հրահանգներ եսքան խրթին:
 Հուպ են տալիս վերից, վարից՝
 Իշխանություն ու ժողովուրդ:
 Արի, Սողոն, կառավարի,
 Տար ուղիղ գիծ ես ժողովում:
 Վեջ քուն ունես և վոչ հանդիստ,
 Վոչ ել կարգին աշխատավարձ,
 Ձեռ ես քաշել տանից, կյանքից:

Գործ ես անում մերկ ու սոված:
 Գոնե տեսնեն, գնահատեն
 Ու խոնարհվեն քո առաջին: —
 Ու մի սև ամպ դեմքը պատեց.
 — Ախ, Լաչինի չինար աղջիկ:
 Ախ դու սիրուն, դու լիրբ Արուն,
 Ինչ պատահեց, ես ի՞նչ արիր...
 Հերզ ասավ՝ յերկու տարուց,
 Դու Ռուշանանց տղին առիր:
 Յեվ յես լինեմ Չաթնանց Սողոն,
 Եսքան տարվա կուսակցական
 Ու ես գյուղի մասշտաբով
 Համ փեսացու, համ նախագահ,
 Դու ինձ մերժե՞ս, խայտառակե՞ս:
 Խոսք տաս քոսոտ Ալեքսանին...
 Տո, աննամուս, յես առեմ քեզ,
 Բո թագն եմ, յես քո արժանին...
 Լավ, սպասիր, որիորդ Արուն,
 X Չոփուր Լաչին, չես մարսի դու,
 Միտք է անում ընկեր Սողոն
 Դեռ չհասած ժողովատուն:
 Չափազանց բարդ, աղմկալի
 Հարց է դրված եղ ժողովում:
 Սողոն հուզված գանգ է տալիս,
 Սաստում, գոռում ու վրդովվում:
 — Այ քեզ բջիջ, այ քեզ ժողով,
 Սուս արա է, ընկեր Վասակ:
 Յերբ լռեցին, ընկեր Սողոն
 Շարունակեց խոսքը կիսատ:
 «Բեղոյան Լաչին, ունեոր միջակ,

✕ Բատրակ ե պահել, կիսու ցանք արել,
Գյուղխորհուրդն ունի ես, ես առաջարկ՝
Ընկեր Լաչինին կուլակ համարել,
Գանձել նրանից հարյուր փութ ցորեն,
Վորպես պարտադիր հացամթերում,
Նրան միջակի ցուցակից հանել
✕ Ու հարցը զնե՝ ձայնազրկելու՝
— Եգ շատ գնացիր, ընկեր նախագահ, —
Կանչեց աշխուժով կոմսոմոլ Վասոն:
Մեր ժարդն ե Լաչինն, արևս վրկա,
Կոլխոզ կմտնի եգուց մյուս որ:
Բայց ընկեր Սողոն հուպ տվեց նրան
«Դասակարգային անարատ գծով»,
Անվանեց «հակա», «կուլակի բերան»
Ու կոմսոմոլի անունը գցող:
— Այդ չի կարելի, ախալ ե, Սողոն, —
Գոռաց Սևանի կինը, Զարուհին: —
Դու դեն ես վանում Լաչինին զոռով,
Չե՞ վոր մերն ե նա, միջակ գյուղացի:

Գոմի գործերով մեկնել եր Սևան,
Ուշանում եր նա դեռ Յերեվանում
Յեվ Սողոն նրա բացակայությամբ
Նաե բջիջի գործերն եր վարում:
Ժողովում կային յերեք կոմունիստ՝
Զարեհն, Աղասին ու ինքը — Սողոն.
Սակայն Աղասին ձեռնպահ եր միշտ՝
Իր կուսակցական ադաթին սովոր:
Մասնակցում էին ժողովին նաե
Յերեք թեկնածու, տաս կոմսոմոլիստ:
Նրանց ել, սակայն, Սողոն հրամայեց

«Դասակարգային գծի» անունից:
Ո՞վ դասակարգին ընդդեմ կգնար:
Նրանք մի մասով չեղոք մնացին
Դվեարկելիս (ինչ «խելոք», հնար...),
Ու Սողոն հասավ սրտի ուղածին:
Դվեարկեցին տասնեմեկ հոգի.
Վեցը կողմնակից, հինգը հակառակ,
Եսպես մի մատով հարցը վճռեցին,
Դրին գյուղխորհուրդ, ժողովի առաջ:

— Տո չեմ կարա ե, այ գլխիդ մատաղ, —
Դոռաց հուսահատ Լաչինը տեղից, —
Հարյուր փութ ցորեն յես վճեց տամ, ախար,
Ո՞ւր եք ինձ, ախար, ճնշում անտեղի:
Յես թն չեմ խոսել իշխանության դեմ,
Վոր զրկում եք ինձ ձայնից, խոսալուց:
Ես իշխանության շնորհիվ չեմ,
Վոր յես ձեռք բերի յեղներ յերկու լուծ:
Ալեքսանն յելավ, վոր հակաճառի:
Բայց Սողոն սաստիկ հուպ տվեց նրան.
— Կարձիր բանակում դու յերկու տարի
Ե՞դ ես սովորել, ընկեր Ալեքսան,
Վոր դաս, պաշտպանե՞ս դու քո աներոջ.
Յեվ ինքդ լսիր, թող մասսան ասի: —
Ու ձգձգվում եր հարցը ժամերով,
Սաստում եր Սողոն քեռի Հովասին:
— Տո թնլ տուր, թնլ տուր յես պարզաբանեմ,
Յեռում ե Հովասն ու չի դադարում. —
Ախար, յես դրա տան հարևանն եմ,
Հովիվ եմք յեղել մեկտեղ, մի տարում...

— Տո թույլ տո՛ւր, թույլ տո՛ւր... — Ու ժողովն ելի
Հուզվեց, աղմկեց Լաչինի համար:
Բայց Սողոմ մնաց պինդ անդրդլի՛ւ:
Ու շարունակեց իր գործը համառ:

ԶՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԶԱԹՆԱՆՅ ՍԱՆԹՐՈՍԸ ՅԵՎ ՆՐԱ ՀՈԴԱՆ

Յեվ գյուղխորհրդից՝ կոտրված սրտով
Լաչինը յեւով հայացքով մթին.
— Բեֆ արա, Լաչին, սրանից հետո
Կուլակ ե՛ գրված քո տան ճակատին:
Գնա, ա Լաչին,՞ յեղներդ ծախիր,
Ցանքդ կրճատիր, լողրություն արա.
Աշխատածդ տուր գինու, արաղի, —
Հարբիր ու պառկիր ճամփեքի վրա...
Այ, են ժամանակ կըլիս չքավոր,
Մոտիկ, հարադատ Չաթնանց Սողոյին:
Թե չե բանելուց ի՞նչ ոգուտ կա վոր...
Եսպես ել կրակ... եսպես ել ոյ՛՛ն...
Այ ոճ, անորեն, յես ի՞նչ եմ արել:
Աղջիկ եր, չուզեց, աչք եր, չմտալ,
Դուք եք եղպխի որենք հնարել,
Յես կարճդ եյի զուռով աղջիկ տալ...»

Լաչինը մռայլ ուրվականի պես
Ներս մտավ Չաթնանց Սանթրոսի հողան:

—Այ հազար բարձր... արի, արի դես,
 Նստի՛ր, մի քաշվի՛ր, տերն ես դու ես տան:
 Ես վճնց պատահեց, սանահեր Լաչին...
 Բաս «միջակ» եյի՛ր, նրանց «հարազատ»,
 Հարյուր փութ ցորեն... դե հարստացիր,
 Զայնագուրկ Լաչին... հն, հն, հն, - հազաց,
 Իսկ «հընկեր» փեսադ ինչո՞ւ տազ արավ,
 Բեզ չէ՛ր ճանչում, թե՛ լեզու՛ չուներ:
 Թողնես ճառ ասի յերկար ու բարակ,
 «Կոլխոզ, հա կոլխոզ, աներ, հեր ու մեր...»:
 Ել ի՛նչ դարդ ունես, սանահեր Լաչին,
 «Հընկեր» փեսադ քեզ կոլխոզ կտանի
 Ու եդ յերջանիկ կոլխոզի միջին
 Կապրեք վոնց մի տուն ու մի ընտանիք...
 Հարյուր մետրանոց յորդանի տակին...
 Հա, հա, հա... հի-հի... իստակ թամաշա...
 Կապրեցընեն տղամարդ ու կին...
 Եհ, նամուսն ել հո չհալած մաշավ...
 Ես գիշեր դու իմ կնկա մոտ քնես,
 Վաղն՝ յես քո կնկա, մյուս որ՝ ուրիշի.
 Մի գիշերում տաս անգամ փոխս կընկնես,
 Բաս... գիշեր, կոլխոզ... արի ու հիշի...
 Ել ի՛նչ իմ, ի՛նչ քոն—սեփականություն,
 Ինչքան վոր կարաս, դու տու վաստակի:
 Յերեխաներին կժողվեն մի տուն—
 «Մանկական մսուր»... և կամ սեղակի
 Կուղարկեն Մոսկով ու... Ամերիկա:
 Վոր Ամերիկան սրանց ճանաչի:
 Համ ել հին պարտքեր ունեն, պիտի տան...
 Հն, հն, հն... ասա, խոսիր ե՛, Լաչին:

Հաչինն ամպամած գիշերվա նման
 Կծկվել է լուռ բուխարիկի մոտ,
 Շարունակում է Սանթրոսը համառ
 Հյուսել նրա շուրջ իր ցանցը թունոտ:
 —Յե՛րբ կպսակեք, սանահեր Լաչին...
 Ասում են փեսադ պսակ չի ուզում:
 Վորոշել է գա աղջկադ կանչի,
 Ու ձեռից բռնած քաշ տա տանի տուն:
 Այ լավ հարսանիք... իսկական պատիվ...
 Պատվավոր փեսա, պատվավոր անի...
 Ո՛վ եր եդ գրել քորփիդ ճակատին,
 Եղպիսի որենք ո՞վ է սահմանի:
 —Ո՛Ք, Սանթրոս ապեր, սիրտս մի դադի,—
 Մոլտաց Լաչինն անհույս տրտմությամբ:
 Ու Լեհի, Հետո Ֆշլաց կատաղի.
 —Յես աղջկի չունեմ, վոր շներին տամ:

Գիշեր եր, Լցվեց Սանթրոսի հոգան
 Իր ամենորյա հաճախորդներով:
 Սկսեց զրույց, վեճ ու դալմադալ
 Նոր հարցերի շուրջ ունուր հոգսերով:
 Նույն են սարերը—հսկա ու հերոս:
 Ժայռ ու ապառաժ կախված են ոդում:
 Յեվ աղոնդախոր մթին ձորերով
 Նույն Զանգուն է հին յերգը վորոտում:
 Նույն խրճիթներն են ցրիվ մակաղել
 Զորում, ծերպերում, քարափի ծայրին:
 Ահա մի մատուռ՝ վորպես նետ աղեղ,
 Մեռած զորություն մեռած սրբերի:
 Բերդը կիսաքանդ «Աշոտ յերկաթի»,

Վանքը կառուցված յոթերորդ դարում:
 Յեւ ջանդակազարդ քարեր բաղմաթիւ
 Յեւ ընդհատակյա անցքեր ու առու:
 Նույն դիշերն ե մութ և համատարած
 Անտառում, ձորում, պատի ճեղքերում:
 Ու նալթի լամպի լույսն ե անճարակ
 Այդ ամենակուլ խավարը քերում...—
 Բայց աթարածուխ բուխարիկի մոտ,
 Են հին, «հայրենի ոջախի առաջ»
 Նախկին որերի մանուկ հուզումով
 Հիմա չեն պատմում յերկար ու բարակ
 Հտպիտ չարքերի և արնածարավ
 Վիշապի մասին չերեք գլխանի:
 Վողջը սարերից ավելց ու տարավ
 Մի աշխարհացունց յերկաթե քամի:
 Ել չարք ու հեքյաթ չկա սարերում
 Ու կիսակործան մատուռների մեջ:
 Աճում ե այնտեղ անահ մի սերունդ,
 Վոր պայքարներում, կռվումն ե սեփել:
 Աճում ե այնտեղ անաստվածների,
 Բոլեիկների մի կայտառ բանակ:
 Նոր լույսով վառվող նրանց աչքերից
 Փախչում են ահով մութն ու քահանան:
 Կռվում են նրանք այս սարերի գեմ,
 Յեւ այս գետերի ընթացքը փոխում:
 Քանդում են արագ ապառաժ, դժբեթ
 Յեւ կառուցում են դպրոց ու ակումբ:
 Յեւ փոփոխելով սարեր ու ձորեր՝
 փոխվում են իրենք վարկյան առ վարկյան,
 Լցվում են նրանց մտքերը զորեղ

Մարքսի, Լենինի խոր լիմաստությամբ:
 Ել չարք ու հեքյաթ չկա սարերում
 Ու վոչ ել խավար մաուրում կովի:
 Յեւ հիմա այնտեղ ել չի վախենում,
 Ձի խելագարվում և վոչ մի հովիվ:
 Ձի վոր մտերիմ աչքերի նման
 Հեռվից կայծկլտում ու սիրտ են տալիս
 Ելեքտրական լույսերը նրան
 Թե Յերեանից, Թե Քանաքեռից:
 Ձի վոր նա գիտե խանդավառ սրտով,
 Թերթում կապելով, կարդացել ե նա.
 Վոր եղ լույս աչքերն անվրեպ հերթով
 Նրա անտառին ել կմոտենան:
 Կեղնեն ֆշշալով Քանաքեռցեսից
 Ու Գյումուշգեսից հալթական, անդարձ,
 Կեղնեն և խավար գիշերվա կեսին
 Հեղեղի նման կմտնեն անտառ:
 Կլառվեն անհաս են ժայռի ծայրին,
 Ազնիվ մարմարի հարուստ հանքերում:
 Գայլը չի զիպչի ել չար այծերին,
 Ենչքան ել նրանք արած են հեղում:
 Գիտե նա, վոր տեմպ ու թափ կրերեն
 Եղ լույսերն իրեն հայրենի գյուղին,
 Ու վաղն այստեղից գիշեր ու ցերեկ
 Ծչալով կանցնի նա—յերկաթուղին:
 Ել չարք ու հեքյաթ չկա սարերում:
 Յեւ աթարածուխ բուխարու առաջ
 Ուրիշ հարցեր են հիմա քրքրում
 Մտքերը նոր թափ ու նոր թե առած:
 Հարցեր այսուրվա և ապագայի,

Նոր, հարվածային, յերկաթե հարցեր,
Հարցեր, վոր յերեկ, մյուս ուր չկային՝
Այսօր մտքերի հեսան են դարձեր

Լցվում ե հողան ծխով, աղմուկով
Ու նավթի լաժպի մշուշով դեղին:
Կոլլեկտիվ մտած Մաղաքանց Մուքոն
Համոզում ե դեռ քավոր Մուշեղին,
Վոր սա իր եղի ընթացքը շեղի,
Մտնի կոլլեկտիվ, միասին գնան,
Դառնան որինակ ընդհանուր դեղին,
Այլ վոչ թե վերջում ամոթով մնան:
Մուշեղը փափկում, կակուզում ե կարծես.
— Զգրվենք, Լաչին, հա ... ընկեր Հովաս...
Լաչինը գլուխը ձեռներին բարձի,
Դեռ միտք ե անում լուռ ու վրդովված.
Յեւ կոլլեկտիվի բերքը հաղթական
Դարձել ե հուզված մտքերի սունին.
— Ախպիր, ցանեցին, լավ ել ստացան,
Ել սրանց թոփի գյուլլա չի բռնի:
— Հալրաթ կստանանք, — պարծեցավ Վասոն, —
Ցանեցինք գտած, արինք շարքացան,
Վախարին, գիտությամբ, գյուղատնտեսով.
Շրջանն ել տվեց յերկաթե գութան,
Իսկ եկող տարի տրակտոր կտան:
— Եղպես վոր լինի, մամս ել կցանի,
Ասավ հեգնությամբ Թորոյենց Դաբոն: —
Դործերը թողած ամբողջ գարնանից
Բջիջ, կ'մսոմու, գյուղխորհուրդ ու փոկ
Հենց կոլլեկտիվի չվանն են մանում:

— Բա՛ս: Ում չվանը պիտի մանեյին:
Պարզ ե, մեզ համար: Նո՛ր ես իմանում:
Չեյին ոգնելու հո կուլակներին:
Ու սիրտ ե տալիս Մուքոն բոլորին, —
— Յեկ, ուստա-Ֆարձատ, քավոր-Անաստաս,
Մեր պետությունը մեզ չի մոլորի,
Այլ ցույց ե տալիս հաստատ ճանապարհ:
Տեսնում ե Սանթրոսն անգոր չարությամբ,
Վոր նոր վճիռ են մտորում մարդիկ,
Ու փչում ե հողն իր վտոքերի տակ,
Վոր նրանց համար ճանապարհ հարթի:
— Թերթն լինչ ե գրում, սանահեր Աբել, —
Հարց ե տալիս նա «անմեղ» ժպիտով:
— Ինգլիզ ու ֆրանգ պայման են կապել,
Կռիվ կլինի՝ ասում են՝ շուտով: —
Ու ձեռքը դրած վոլորուն բեխին՝
Հայտնում ե Աբելն իր կասկածը մութ.
— Վայն ե մեր գլխին, վայ մեր յերեխին,
Բարդ ե դրությունն ու շատ ել խախուտ:
— Ուղում ես անել կոլլսոզ չգրվե՞նք,
Յերբ պատերազմի վտանգ կա հսոր, —
Ճիշտ գուշակելով նրա միտքը նենգ՝
Նետում ե տեղից կոմսոմոլ Վասոն:
— Կոլխոզ կգրվե՞նք, դու մի գիրտա, —
Եդ չեն հարցնի ինձնից ու քեզնից:
Յեա վախենում եմ, վոր Ինգլիզը գա
Ու գրվողի հետ խխտ հաշիվ տեսնի:
Յեւ կարկըտաբեր ամպի պես մռայլ
Նստում ե հոգսը մարդկանց աչքերին:
Մուշեղն ու Մուքոն նայում են իրար,

Հոգոց ե հանում Սանթրոսը խորին:
 Այդ «անմեղ» հոգոցն ավելի ազդու,
 Ավելի խորն ե շփոթում մարդկանց:
 Վաստն մի վարկյան հոնքերը բարդում,
 Փնտռում ե մտքում ուղիղ պատասխան:
 — Մեռած ենք, ելի, ձեռներս կապած,
 Մենք վոչ թոփ ունենք ու վոչ ել բանակ,
 Վոր ինզլիզը գա, հասնի Ալափարս,
 Ու դու ել քո հին դուքանը բանաս:
 — Տո, նրանք շատ են, ուժով են, հարուստ,
 Վաղն Ամերիկան նրանց կմխնա,
 Որական հազար բան են հնարում,
 Իսկ դու ասում ես — «հա, Կարմիր Բանակ»:
 — Մենք չենք հնարում: Մեղանից բացի
 Մենք բանակ չունենք նրանց աշխարհում:
 Նրանց մոտ չկա բանվոր, գյուղացի:
 Հենց գիտես մենակ մենք ենք պայքարում:
 Մի թող սկսեն, թող փորձեն հալած,
 Կտեսնենք դոնախ կերթա ով՝ ում տուն:
 Քո Անգլիացիքն կգա Ալափարս,
 Թե՛ մենք կգնանք նրանց մոտ Լոնդոն:
 Սկսեցին վոմանք ուրախ ծիծաղել:
 — Նեղ լծեց Վաստն, կապեց Աբելին...
 — Կանաչեն, Վասակ, եղպես ասա ե... —
 Կանչում ե Մուքոն՝ սիրտ առած ելի:
 Ու քաջալերված իր հաղթանակից՝
 Շարունակում ե հարձակվել Վաստն,
 — Յերեկ եր հրեն, վոր քո չինացիք
 Մեր հողը մտան շատ մեծ հավասով:
 Դու ել սնդուկից իսկույն հանեցիր

Նախկին քոխվա հորդ արծաթե քամարն
 Ու մեջքիդ կապած շրջան գնացիր,
 Յերեկ քոխվա դառնալու համար:
 Վերջը: Չգառար: Մերոնք չինացոց
 Ենպիսի մի թունդ շրխկոց տվին,
 Վոր ձենը հասավ հարահրոցով
 Լոնդոնում նստած պարոն Լորդերին:
 Բաս... Իսկ դու խեղճիդ շատ զուռ մի անի:
 Ընկեր Ստալինն ասել ե ճառում:
 «Մեր խորհրդային իշխանությունից
 Ավելի հաստատ չկա աշխարհում»:
 — Յես չեմ հավատում թերթի գրածին, —
 Պատասխանում ե Աբելն անճարակ:
 — Դու հակամտքեր շատ մի տարածի,
 Կուլախի դուդուկ, իսկական կուլախ:
 — Կուլախն ել դեռ յես, «հական» ել, լակոտ,
 Վոր հալածում ես ինչ պես միջակին:
 — Միջակ ես դառել մարդկանց քամակով,
 Նրանց դիմակն ել մի որ կճաքի:
 Ու խոսողտում են ձայները քիչ-քիչ
 Հողի գարշահոտ, գաղջ մթնոլորտում:
 Իսկ դրսում, ձորում գետն իր անհանգիստ,
 Իր հավերժական ճառն ե վորոտում:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿՅԻՒՆՆԵՐԸ ԽՃՃՎՈՒՄ ԵՆ

Յեւ զինամիտն անտառում առավոտյան վորոտաց,
Սանթրոսի տան քարաշին պատերն անով դողացին:
Տանձենու տակ թափառող արջը փախավ չորեքթաթ:
« Ել ահ չկա » մուտաց փայտ հավաքող գյուղացին:
Ու վեր թռան մարմարի մանր ~ ապիտակ կտորներ,
Ողում թափով պարեցին ու շաղ յեկան չորս բոլոր:
Արձագանքը դրդաց ու սլացավ սարն իվեր,
Անտառում իր հաղթական արշավանքը յերգելով:
Արձագանքը դրդաց ու սլացավ սարեսար,
Հասավ խոփող ձորերին, քարափներին արևոտ,
Ու մոտակա գյուղերին յերգի նման խանդավառ
Հաղորդեց նոր մի կյանքի աղմուկից առավոտ:
Յեւ գյուղացիք, վոր անգործ պատերի տակ պղծված,
Քաղում ելին դուլասար ու ծուլաբար հորանջում, —
Վոտքի յեկան փնջալով՝ թողած հորանջը կիսատ
Ու դեպ անտառ նայեցին արտասովոր յուրանգով:
« Լեռ իմարդն է » — ասացին ու գնացին բանելու:
Սակավարյուն գյուղերում բաբախեց նոր մի յերանգ:
Կալ ու կուտից վերջացած՝ վերցրին լոմ ու քուռնի:

Ամբարված ույժը գտավ նոր հուն, նոր յեղք ու յեռաց:
Դեպի անտառ գնացին սալակները շարեշար
Ու յետ յեկան՝ մարմարի ձյունանման բեռներով,
Դեպի քաղաք քեցին վերցրած խոտ ու պաշար՝
Ճամփին իրենց բեռների ծանրությունը յերգելով:
Ճանապարհին յերեւաց յերիտասարդ ինժիներ:
Նա կածանները հափեց տեխնիկական խստությամբ:
Թուփերի պես կտավի նորակառույց շոսաներ
Քաղաքներից ձգվեցին ու անտառները մտան:

Ու զինամիտն անտառում ելի ուժգին վորոտաց:
Սանթրոսն անով ցնցվեց: Կաղնիները դողացին:
Կոմսոմոլիստ Վասոյի խոսքը հնչեց հաղթական,
Ու մարմարի հանքերում բանվոր դառավ գյուղացին:
Յեւ նրանք, վոր փախել դատ, պահվել ելին փոսերում,
Դուրս վազեցին՝ զիրքերից գրոհ տվող վորքի պես:
Աշխատանքը հանդաց, ու հանքերից քիչ հեռու,
Մոտիկ ձորում գնդացին աղջիկների յերգը թեփ:
Մերն է նրանց յերգերում ու շողողուն ապագան:
Մերը ջահել բանվորի, վոր աշխատում է հանքում:
Յերգում են սիրահար կոլխոզալոր աղջկան
Ու յերգելով՝ վայրի տանձ ու խնձոր են հավաքում:
Ժողովում են տանձ ու խնձոր, վայրի մասուրը ձորի՝
Գյուղում բացված մրդի նոր չորանոցը տանելու:
Յեւ յերբ ձմրան ձորերում բուռն իր պոչը վոլորի, —
Քաղաք կերթան կոնսերվի գործարանում բանելու:

Խանդավառվեց Ալեքսանն ու քուռնը վերցրեց,
Պոկեց տեղից մարմարի հսկայական մի կտոր:
Հսկայի պես հեվալով սայլերի մոտ հասցրեց:

Հետո սրբեց լաշն ճակատն ու յերեսը քրտնաթոր:
 Լաչինն ել իր սալակով յեկավ մարմար կրելու:
 Ալեքսանը բարևեց, բայց բարևը նա չառավ:
 Ոտարի պես եր նայում՝ մոռալ թախծն անքերում,
 Ու յերեսը շուռ տվեց Ալեքսանին հակառակ:
 Ալեքսանը գունատվեց: Բայց չխոսեց: Հեռացավ:
 Նստեց հեռու ծառի տակ ու մտքերում շվարեց:
 Սրտում կասկածն անավոր ոձի նման ծառայցավ
 Ու մի սև ամպ ծրարեց անտառ, յերկինք ու արև:
 Ժամանակը անց ե կենում գինամիտի վորոտով:
 Նա չի տեսնում սիրածին: Չի յերեվում: Չի դալիս:
 Տուն ե դառնում ամեն ուր լեռնակուտակ կարոտով,
 Բայց նա չկա հայաթում... հերն ել բարև չի տալիս:
 Մեկն անտառում ծիծաղեց... հումն եր արդյոք ձեն

տվին:

Նա եր արդյոք, թե քամին... մեկը կանչեց՝

— Ալեքսան:

Ասես անձրև հրեղեն դարկեց սիրող են տղին,
 Յեվ նա տեղից թռչելով դեպի ներքև սլացավ:
 Քրքջացին ալջիկներն ու շող յեկան ծերպերում:
 Տանձենու մուծ ստվերում սպասում եր միայն նա:
 Ալեքսանին եր նայում վորպես յերկչոտ յեղջերու,
 Վոր վորսորդի դեմ կարծես կռվելու յե միայնակ:

— Հերդ ետը բարև չառավ...

Սիրտս չարն ե գուշակում:

Մի թագցընի, վոտքիս առաջ

Փորած փոս կա մի թագուհի:

Նոր փեսա յե ճարել հերդ:

Մի թագցընի, մի խաբի:

Մոռացել ես յերգումներդ
 Դու Ռուշանի քարափի:
 Յես եմ միայն հավատարիմ,
 Անդալճան սիրո տեր:
 Յես եմ միայն յերկու տարի
 Քեզ բանակում կարոտել:
 Յես եմ հիշել ամեն գիշեր
 Պահակության ժամերին:
 Հրամատարն ինձ չի տեսել
 Պոստի վրա քնելիս:
 Լաց մի լինի, չեմ հավատում
 Յես կեղծավոր քո լացին:
 Լավ ե՞ գնա կուլակի տուն,
 Իմ թշնամուն միացիր:
 Յեթե իբոք ինձ ես սիրում՝
 Արի գնանք կոլլեկտիվ:
 Արի մեզ մոտ, մեր շարքերում,
 Մեզ հետ կռվիր, աշխատիր:
 — Ի՞նչ ես ուզում ինձանից,
 Ո՞վ քեզ կանչեց, վոր յեկար:
 Ո՞ք, կփախչեմ յես տանից,
 Տամ գլուխս քարեքար:
 Թող ինձ, գնա քո բանին:
 Ի՞նձ կոլլեկտիվ մի տանի:
 Յես անկիրթ եմ, անուսում:
 Հերն ու մերս չեն ուզում:
 Ի՞նչ եմ անում կոլխոզում:
 Հաղար բերան ու լեզու:
 Հաղար մարդու ձեռքերին,
 Հաղար մարդու լուռ գերին:

Յես սիրում եմ միայն քեզ:
Յեթե սերս կհարկես,
Ինձ կուլեկտիվ մի տանի,
Ուրիշի կին մի անի...

— Յեթե աղջիկ ես ուզում, — կուլեկտիվ մի տանի:
Յեթե գնում ես, — գնա, աղջիկ չունեմ տալու: —
Պատասխանեց վերջնական կաշին Ալեքսանին,
Թախտի վրա ծալսլատիկ՝ ծանր ծմրտալով:

Ալեքսանը վեր կացավ ու ախուր տուն գնաց:
Կրկին հորը համոզեց.

— Ի՞նչ ես ասում՝ ա հեր...:

Միենուշն ե, դու չգաս, յես կգնամ մենակ:

Հովասն ելի իր նախկին պատասխանն եր պահել:

— Ես մի տարի թող մնա, են աչառս լծեմ,

Են վերի հանդը վարեմ իմ սեփական չլթով,

Հարսանիքիդ ել մի փարչ անուշ արագ պցեմ,

Ես խաբարեն ել քանդեմ, շինեմ յերկու կտուր, —

Նոր դալ տարի կգրվենք ամբողջ տնով տեղով:

Կուլեկտիվն ել կտեսնենք, վոնց ե իսկականում:

Խալիսը մտիկ ե անում... տատանվում ե Սողոմ:

Ախար, ջրին չհասած՝ յես հեր եմ մերկանում:

— Դու չկո ուզում մերկանալ... Իսկ յես կմերկանամ:

Գո քեֆը չեմ հարցնի, քեզ նման հեր չունեմ:

Մեր պետություն միջոցով առել ես մի դանա,

Վոր կուլակի հեթ գնաս, վոր մեզ դավաճանես:

— Ձենդ կտրի, շան լակոտ... — պուսց Հովաս քեռին,

Բարձրացրեց կատաղած բահի կոթը ձեռի:

Ալեքսանը սառնասիրտ յեղավ կանգնեց վոտի:

Մայրը ճչաց ու թռավ, իրեն մեջտեղ նետի:

Բայց բահի կոթը սառեց ողում մի ակնթարթ:
Սպառնադին նայեցին նրանք իրար յերես:
Հայրը հետո մեղմացավ ու հանցավոր ժպտաց,
Ու վերելում քարացած հարվածը վար բերեց:

Ձգայնացավ Ալեքսանն ու դուրս յեղավ տանից:
Նա հանդիպեց փողոցում ընկեր Գարսևանին:
Գարսևանի հանդեպ նա հարգանք ուներ շատ մեծ
Ու պատմությունը նրան մանրամասն պատմեց.

— Հերս ինձ հետ չի գալիս,

Սևան, յես ի՞նչ անեմ:

Արուսին ել չեն տալիս,

Յեթե կոլխոզ տանեմ:

Հորըս մոտից յես սիրով

Կբաժանվեմ, կգամ:

Բայց չեմ ուզում, չեմ կարող

Թողնել եդ աղջկան:

Խոսք են տվել Բեյրութին,

Կնշանեն շուտով:

Նա կտանի, կմարսի,

Ուշ կլինի հետո:

Կցնորվեմ անպատճառ,

Յեթե մի բան չանեմ:

Ցույց տուր ինձ մի ճանապարհ,

Սևան, յես ի՞նչ անեմ:

Ու Գարսևանը կրկին բացատրեց նրան

Կոլխոզական պայքարի հեռանկարը մեծ:

— Միայն նա կցնորվի մի աղջկա համար,

Ով վոր չունի քաջություն նետվել պայքարի մեջ:

Նա յե հերոսն իսկական, ով վոր չի կարկամի

Դասակարգի թշնամուն հարվածելու ժամին,
 Ով իր վիշտը կուլ տալով կալայքարի համառ
 Վոչ թե իրա, այլ ամբողջ դասակարգի համար:
 Թող Լաչինի աղջկան, մենակ արի կոխող,
 Անաջող սերն անցել է շատ շատերի գլխով:
 Ընկեր չի նա քեզ արժան, կմոռանաս նրան,
 Կծիծաղես դու մի որ քո թշնամու վրա:
 Դու անցել ես բանակից, դու մերվել ես մերոնց,
 Դու պարտավոր ես դառնալ առաջավոր հերոս:—
 Յեւ Ալեքսանն ամոթով նայեց գետնին: Հանկարծ
 Զայրացավ ինքն իրա գեմ, Արուսի գեմ, հոր գեմ:
 Նրա սրտում բռնկվեց հպարտութունը հանգած
 Յեւ արյունը յոռանդով յերակներում հորդեց:

ՎԵՏԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿՈՒՆՈՉԱԿԱՆ ՅԵՐԿՈՒՆՔԻ ՅԵՌՈՒՉՅՈՒՐ

Հետզհետե սաստկացավ, հետզհետե աճեց
 Կոխողական յերկունքի յեռուզիոր գյուղում:
 Քաղաքն իրա յերկաթե բաղունները պարզեց,
 Գծագրվեց գյուղի գեմ գալիքը շողշողուն:
 Քաղաքներից անհամար բրիգադներ յեկան:
 Նրանք յեկան կենտրոնից, գործարանից, հանքից:
 Նրանք բերին իրենց հետ գիտութուն ու յերկաթ
 Ու ձեռ զարկին պատմական բեկման աշխատանքին:
 Նրանք յեկան—յերկաթի մի անընդհատ հոսանք
 Քաղաքներից շարժեցին գեպ գյուղերը բոլոր:
 Սերմադափն մեքենան Զրբուխլույին հասավ:
 Տրակտորները յեկան ճամփեքը նախշելով:
 Ու կուտակված, լեռնացած, հարվածային վոգով—
 Նրանք գյուղերը մտան, մտան գոմ ու խրճիթ,
 Ուր կապված եր մի աչառ, վորոճում եր մի կով
 Ու գոմը յեր տաքանում նրա բարակ շնչից:
 Յեւ նրանց կոչը վառման, նրանց կոչը մի նոր,
 Պլանավոր, լուսավոր, բարձր կյանքի մասին—
 Ընդունում եր գյուղացին սիրով, տատանումով

Ու անձնատուր եր լինում պայծառ աչք յերազին.
Այն, ինչ կաթիլ առ կաթիլ սրակված էր գյուղին,
Կուտակվել էր աննկուն, անդուլ աշխատանքով,
Այսոր բացիլ էր իր լայն գալարավոր ուղին
Ու հուժկու մի շարժում էր դառել գյուղի կյանքում:
Շարժումն աճեց, վարարեց ու գյուղից-գյուղ անցավ
Վերպես անդարձ մի ալիք, կաղմակերպված հեղեղ:
Արմատախիլ շուռ յեկավ մի դարավոր անտառ,
Հազար տարվա կյանքն իր ճանապարհը շեղեց:

Յեվ սկսվեց — անբնդհատ ժողով, ժողով, ժողով,
Միտինգ, զուհնա, նաղարա, միտինգ, ճառ, յերգ,
պարեր:

Յուրաքանչյուր խրճիթում յուրաքանչյուր Պողոս
Ընտանեկան համառ աղիտատուր էր դառել:
Յեվ զուռնայով, նաղարով, յերգով ու ծիծաղով
Մրցականչի գնացին գյուղերն իրար վրա:
Ձեռքը զարկեց սեղանին կուսթեկնածու Վաղոն
Ու վորոշեց մինչև լույս դառնալ համատարած:
Գյուղխորհրդի ժողովում հաստատ նա յերգրվեց,
Վոր մինչև լույս Բարաշամբ գյուղը հեղաշրջի
Յեվ ստեղծի այնպիսի տոկոսային թվեր,
Վոր զրնգան չրջանի ու գավառի միջին:
Նա Շառոյի Մուշեղի դռնից անցավ ձիով,
Բերդի վրա արշավող զորավարի նման.
— Քեռի Մուշեղ, հասկացա՞ր, տալիս եմ քեզ մի ուր,
Կամ կգրվես կուլիկտիվ, կամ կքշեմ Սեան:
Իսկ Մուշեղը խոստացավ, առավոտյան գրվի:
Վաղոն նորից պարավրեց ու արշավեց առաջ:
Վոնց վոր անհավթ զորավար, վոր զնում է կռվի,

Ճանապարհին քաղաքներ և ամրոցներ առած:
Յերեկոյան նա սիրով կնոջը համբուրեց.
— Յեկ ձվածեղ բեր ուտեմ, Անաստասի աղջիկ:
Եսոր գրեկ եմ տվել դիմում - յերեսուն վեց,
Բաս... Վաղարշակ կասես ինձ, ո՞վ կարա յետ փախչի:
Կինը չանչեց կատաղի.
— Իշտահըդ քեզ պահի:
Մի գրվանքա յիդ ունեմ, թող երիխին մնա:
Քեռ ես կրեկ ինձ համար, վստ ես տվել բահի:
Թե կով ունես ու վոչխար փարախոտմըդ ծնած:
— Տո, շաշ կնիկ, հասկացիր, — գոռաց «պուճուր»
Վաղոն, —

Համատարած է հիմա, սոցիալիզմ է յեկել:
Հո չէս մնա չքավոր, մի գրվանքա յեղով:
Բոլոր կովերը գեղի քոնն են այսուհետև:
Կինը չանչեց.
— Չեմ ուզում խալխի վոչխար ու կով...
Տեսնես, վոնց են անիծում, վոնց են ուշուց տալիս:
«Պուճուր» - Վաղոն ծիծաղեց ուրախ և ինքնագոհ,
— Շաշ, վերջապես չիմացար, թե ինչ է սոցիալիզմ:

Իսկ վոմանք ել ինքնագոհ նիւթյգների նման
Պատրաստ եյին սլանալ քրտնակալած, անդուր:
Դրա համար անցնելով հաճախ չափ ու սահման,
Դիպչում եյին քարերին, ճանապարհը քանդում:
Ճանապարհի վրա գալարվում է թշնամին:
Թույն է թափում կատաղի ու թույն է յամբարում,
Փչում է բամբասանքի խելագարված քամին
Քարաշամբից մինչ Հոռոմ և ամբողջ աշխարհում:
Պրովակացիան — մի անտես, մի անմարմին սողուն,

Վոր խայթում է, պղտորում, թռնալորում արագ:
Վարակում է մինչև իսկ կոմսոմոլիստ Գևոն
Ու հաճախ միտք է անում մոլոր ու անճարակ:
Սակայն վորպես կոմյերիտ՝ անհամար է դգում,
Ամաչում է իր մոտիկ ընկերներին դիմել:
Ու գնում է գիշերով Չաթնանց Սանթրոսի տուն,
«Մեղա կոմսոմոլին» — կրկնելով իր մտքի մեջ:

— Ես մեր մեջ ել կմնա, արխային կաց վորդի:
Ել վիր որվա աղգական, վոր քեզանից պահեմ:
Մնացել է մի շաբաթ, ի՞նչ գործ; ի՞նչ կոլլեկտիվ...
Անգլիացիին է գալու... կապրենք մարգավայել:
Ձի յեք ուզում ամեն որ, վոր «հընկիրը» հեծնի:
Բաս վոր առավ ու փախավ: Ել վիրտելից ճարեմ:
Նա իմ վոտով փախչելու պատրաստություն տեսնի:
Այ, ցորեն հավաքում քաղաքում ամբարեն:
Ինքդ սկի մի վախի: Տեղդ հանգիստ մնա:
Յեկողները մերոնք չեն... կասեմ կոմիտոյին:
Դու մեզ ի՞նչ ես արել վոր... այ մեզ վաղել է նա,
Են Սևանը Մանասի, թե մասսային, թե ինձ:
Են Ռուշանի քարափիս աչք են տնկել դրոանք:
Ատամները սրել են, աքսորել են ուզում:
Պապենական մուլք է դա: Կյանք եմ դրել վրան:
Արունքով եմ ձեռք բերել... ներողություն:
Ախար կյանք եմ մաշել ե: Այ, ձեռներին մոտիկ:
Յես իմ դառն հոտաղից պակամ եմ աշխատել:
Ունեցածիցս տվել եմ խնդճին, ժողովրդին
Յեվ որումըս չեմ դիպել մեծավորի խաթեր:
Յես աշխատեմ, յես դատեմ, հարստություն դիզեմ,
Տամ անամոթ ծույլերի՛ն, հարբեցողներին:

Մի տուն լիքը ընտանիք, կարիք ունեմ յես ել,
Թող յես ապրեմ ինձ համար, քեզ ել տամ ձրի:
Ձեռքերըս մի կապի յե: Թույլ տուր հարստանամ:
Թող շատ ցանեմ, շատ հնձեմ, բաժինդ վերցրու:
Թող ունենամ, վոր տամ ե: Տար կեր, վոր կշտանաս:
Ի՞նչ ես ուզում, ել ի՞նչ ես փետուրներըս ցրում:
Վոչ նամուս է մնացել, վոչ ահ և վոչ պատիվ:
Հո չեմ կարալ քո դռան. չոքանի հետ խոսել:
«Համաձայն չես, ասում է, հեչ ել չեմ աշխատի,
Բատրակիկոմ եմ, ասում է, քո մալին ել, քեզ ել...»:
Եդ ել կուլ տամ, այ ախպիր, պայմանագիր կապեմ:
Հմի յել թե՛ հախս տուր, պիտի կոլխող գնամ:
Ասի առնեմ վոտի տակ, մի տրորեմ, թակեմ...
Բա վոչխարս, շանվորդի, սարում անտե՛ր մնա:
Մուֆթա մածնի ու կաթի հոտ ես առել, լակոտ,
Գևոն բերի կով, վոչխար, դու հավասար լսի՛մս:
Եսպես լիբբ դատաստան, եսպես զուլճում, տրաքոց...
Քա խանչալը չխրեմ փորն ու մորը թափեմ:

Սանթրոսն այնպես է խոսում, վոր կարծես թե Գևոն,
Նրան մոտիկ, դաշնակից, դավադիր է արդեն,
Վորի դեմ ինքն իր սրտի գաղտնիքները դեղում
Ու քննում է նրա հետ ընտանեկան հարցեր:
«Կոմսոմոլիստն» անճարակ, անողնական լուռ
Ու տալիս է աչքերով հավանության նշան:
Բարձրացնում է միայն գինու թասը լեցուն
Հանուն սիրո, հաշտության ու միության...

ՅՈՅԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՋՐԵՐԸ ՊԵՏՈՐՎՈՒՄ ԵՆ

Սարգը հյուսել է անկյունում վոստայնի,
Իսկ ինքը չկա: Սպասում է թագուն:
Գյուղխորհուրդ: Նստել է ընկեր Գարսեանն:
Ու դիմը սեղան, հսկա թղթակույտ:
Դիմումներ են բոլոր նրա առաջին:
Ուրեմըն դառել է համատարած:
Ո՛ւր է, չեն դիմել Հովասն ու Լաչինն:
Ու ելի յերկու յերեք ավարա:
Չաթնանց Սանթրոնը, նա ել է դիմել...
Ես ում ձեռագիրն ե... դրել է Գևոր:
Ու հայհոյում է Սեանը մտքի մեջ. —
«Գետինը մտնես, քեզպես կոմսոմոլ...»:
Սարգը ծածկել է փոշոտ ապակին:
Իսկ ինքը չկա: Սպասում է անտես:
Ժպտում է Սեանն — արդյոք չմաքրի:
Արժե եդ սարգի ծրագիրը քանդել:
Ես վհնց — փախչում են Լաչինն ու Հովասը:
Կուլակն ուզում է մտնել կոլեկտիվ:
Կարծես թե ջրերը մի քիչ պղտորված են:

Այս ի՞նչ յերևույթ է այս ի՞նչ բարդ հաշիվ...
Սանթրոնը դիմել է... ուրեմն առաջուց
Կոլխսդ է ճամփել իրա թայֆային:
Այսինքն հին ցեցը ներկա յե ներսում,
Ներսից նա կուտի է կը քայքայի:
Իսկ մենք փոխանակ արթուն հսկելու՝
Զոռում ենք մարդկանց, սպառնում աշխարհ,
Շրջանն էլ կարծես կորցրելնց գլուխն
Ու հայտարարեց համատարած:

Մըտածում է դեռ ընկեր Գարսեանը:
Յերեք հարյուր յերեսուն ընտանիք:
Կարճ է արդյոք նա տալ պատասխանը,
Կարող է այս մեծ աշխատանքը տանի:
Սողոն — կոգնի՞ վոր: Նա չի՞ խափանի:
Ինչպես վոր արավ գտման ժամանակ:
«Փաստեր» հնարեց ընդդիմ Սեանի:
Ու լարեց հազար տեսակ մեքենա:
Մի անգամ խմել է — առին՝ «միշտ է հարբում»,
«Բեխերը խուզել է, վոր գեղը քանդի»,
«Կին է համբուրել կոլխոզի արտոմ»,
«Խոտ է գողացել... մարագից, հանգից»:
Հանցանքը: Այո, բեխերը խուզել էր,
Պաշտպանել էր խուլ Բադալին: Այո,
Շրջկոմի նիստում նրան պաշտպանել էր
Ընկեր Սողոյի գլխի վրայով:
Բայց թշվառ Բադալն ախար կուլակ չեր:
Ծնունդ էր Սողոն նրան անտեղի,
Ու պաշտպանում էր գործկոմի առջե
Իսկական կուլակ հորեղբոր տղին:

Համառ ե Սեանն — աշխարհ ման եկած:
 Կուսշարքերն անցավ քսան թվին Բագվում:
 Ջուռնի նա գյուղում թայֆա, ազգական:
 Իսկ Սողոն թայֆան հեշտ ե հավաքում:
 Մրան սանահեր ե, նրան՝ քավոր,
 Մեկին՝ աներձագ, մյուսին՝ փեսացու:
 Իսկ շերտավորման գրքում՝ չքավոր —
 Ուրեմն պետք ե անհաշտ մերկայում:
 Գյուղը կիսով չափ նրան ե նայում:
 Յեթե նվիրվի, սրտով աշխատի,
 Կոլխոզը կաճի, կգառնա կայուն,
 Թեկուզ ուժերով իրենց աղքատիկ:
 Բայց Սողոն... կոգնի՞ նա չի՞ «պայքարի»,
 Նա չի՞ քայքայի կոլխոզը ներսից...
 Սողոն չգիտե ե վոչ մի կարիք,
 Բացի իր շահից, սեփական — յեսից:

Թղթերի կույտ ե սեղանի վրա:
 Մարդը հյուսել ե փոստայն ու չկա:
 Մտնում ե Սողոն քիթը կարմրած:
 Այո, խմել ե նա «մեկ ստաքան»:
 — Ո՛ֆ, մեռանք, Սեան, քնից զարթնեյինք,
 Տեսնեյինք արդեն սոցիալիզմ ե գյուղում:
 Նստեյինք հողեն, մի լավ խմեյինք,
 Ել վոչ աշխատանք ու վոչ ել ժողով:
 Դասակարգային պայքարն սղանեց մեզ:
 Ես կուլակաները չին ել վերանում:
 Թույլ տան, բոլորին կոլխոզ ընդունես,
 Հարցը միանգամից փակեա դրանով:
 Հենց գյուղխորհուրդն ել իզուր ենք պահում:

Պետք ե՝ յես կասեմ, ցրել ես տարի:
 Համատարած ե, ել ի՞նչ գյուղխորհուրդ,
 Թող կոլեկտիվը գործի՞րը վարի:
 — Շատ ես շտապում դու, ընկեր Սողո, —
 Ասավ Գարսեանն անչափ հեղինական:
 Լավ ե հրավերիք ընդհանուր ժողով,
 Շուտով շրջանից ընկերներ կգան:

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գ Լ Խ Ա Պ Տ ՈՒ Յ Տ Ը

Կամրջի մոտ մի անգամ կանչեց կատարածուն.
— Կենտրոնից մարդ է յեկել, ժողով է, հե՛յ, ժողով...
Բտվական եր — և անա շարժում, իրարանցում —
Դեպի դպրոցն են հոսում ձյունը կոխկրտսիով:
Շտապում են, աղմբկում ձայն են տալիս իրար,
Ձյունաթաթախ տրեխներն ամուր խփում դեռնին:
Ներս են լցվում, ճխտըվում, ճղմում փոք ու իրան.
Գիչ է մնում, վոք Մուքոն հարևանին հեծնի:

Ու շրջանից գործուղված Սամսոն Սաղաթելյանն
Իր զեկույումն սկսեց տագնապալից խանդով:
Եդ զեկույումն եր արդյոք, թե խոսքերի սեղավ՝
Հաղարամյա լեռների հիմքերը խոր՝ քանդող:
Ձայնը խաղառ կտրված, կոկորդն է խիստ քերում:
Բայց նա ձայնն ինչ է անում. խոսում է նա կրկին
Խոսում է նա քրտնաթոր, գլխով ու աչքերով,
Արագաշարժ գծերով իր ձեռքերի, դեմքի:
Վերջին յերեք որվա մեջ նա տասը գյուղ անցել,
Տասը ժողով հրավիրել, ասել է տասը ձառ,

Ու գրպանում տասական ցուցակ ու բանաձև —
Նա պիտի վաղ առավոտ վերադառնա շրջան:
Այնպես է նա կրակվում, ուղում է նա, կարծես
Այրել իր թեթ խոսքերով ինչ «հին է և քարթում»,
Բոլոր հարցերը խրթին մի վայրկյանում պարզել
Ու կոմմունիզմ կառուցել յերկու ականթաթթում:

Ջեկուցողի մոտ նստած շողում է լուռ Սողոն.
Ու ժողովին է նայում հպարտ, աքլորավիզ:
Կարծես թե ինքն է խոսում այդքան սահուն, վողորկ՝
Ինքն է կարծես խոսողին դիժ, ուղղություն տալիս:
Մի խոր կնճիռ ճակատին, դանդը ջլուռ ձեռքում՝
Խորհրդածում է Սևանն իր մեջ խորասուզված:
Նա քիմիական մատիտով քիթն է կրկին ներկում.
Ու դիմումները թերթում՝ անասելի հուզված:
Գետի Մուքոն կենդանի խողություն է վողջ.
Ջեկուցողին է նայում՝ առաջ թեքված մի քիչ՝
Բերանը լայն բաց արած, վորպես ժայռի խոռոչ,
Բեխ-միրուքի անթափանց մացառների միջից:
Իսկ Շառոյանց Մուշեղի, սրտում յերկու խլուրդ.
Յերկու դիմում ունի նա յերկու գրպաններում —
Մեկը կոխող մտնելու, մյուսը՝ դուրս գալու:
Լսում է նա և առաջժա աչքում ու — համբերում:

Ու վերջացավ զեկույումն անդուլ ծափերի տակ:
«Պոճուր» Վաղոն, հաղթական, քրտինքն իրա սրբեց:
Խաչոն քնից վեր թռավ, ու բռնկվեց ծիծաղ:
Հեռո հարցեր թափվեցին վարար կարկտի պես:

Քննության հերթը հասավ ընկեր Ալեքսանին.
— Իմ հերը չի համոզվում, — ասավ շառագուռած:

Յեա դիմեցի գլուղխորհուրդ, բաժանվեցի տանից,
Գալիս եմ յես, ընկնենք, անկեղծ ու սրտաբայ:
— Թույլ տուր, ընկեր նախագահ:— Վեր ե պատկում

Սողոն: —

Մի շան գլուխ կա եստեղ, շատ խորամանկ հաշիվ...
Մենք կուլեկտիվ ենք մտել ամբողջ տնով-տեղով
Ու չենք կիսվել, չենք դառել յերկու-յիւրեք բաժին՝
Եդ վճնց, ընկեր Ալեքսան, հորդդ տանն ես պահում,
Ինքդդ մենակ ես գալիս չեղալ, ընկեր... հայ հո՛ւ...
Ի՞նչ, գու ուզում ես, ներսից կոլխողդ մեր քանդես.
Ձի կարելի ընկերներ, պետք ե կամ դեն, կամ դես:
Կամ թող իր հորն ել բերի, կամ ինքն ել թող չգա:
Սուտ ե, նրանց մեջ կռիվ, բաժանուլթյունն չկա:
Գլուղխորհուրդը չի քնած, Սողոն խոտ չի ուտում:
Ձի հաստատվի եսպիսի սարքած բաժանուլթյուն:

Հարցը լուրջ եր չափազանց ու խորամանկ դրված:
Այո — պետք չէր ընդունել կեղծ բաժանվողներին:
Սողոն մեջտեղ հր բերել անհաղթ մի պատրվակ:
Ու վոջ վոք սիրտ չէր անում յեկնի, հակաճառի:
Այո: Վոչ վոք չի ուզում, վոր հարեանն ի՞րա
Կիսատ մտնի կուլեկտիվ, կամուրջ թողնի յետև:
Լավ ե գնան միասին, առաջ տալով իրար,
Մինչև ճամփան հարթըվի, բացվի հետզհետև:
Շատ կան այո, — վոր մտել ու մտնում են հիմա
Կուլխողական հոսանքի ջրապտույտի մեջ, —
Հարեանին են նայում, — յեթե գնում ե նա,
Իրենք ել են սկսում դեպի առաջ դիմել:
Իսկ յեթե նա տատանվում ու նայում ե յետև,
Յեա դառնալու նշաններ թողնում ճամփի վրա, —

Նրանք արդեն շտապում են իրենց ավ նետել
Ու յետ դառնալ մի վայրկյան նարեանից առաջ:
Բայց կան մարդիկ, վոր անջեղ տռաջ են ընթանում՝
Պայծառ աչքերը հառած ազատարար ափին:
Նրանք գնում են ընդդեմ ալիքների, քամու,
Վոչ մի արգելք չի կարող նրանց ղինաթափի:
Նրանք են ջուրը ճեղքում, բացում են ճանապարհ
Ու նալն առաջ են տանում համառ ու անղիջող,
Նրանք են լայդ մաքսոռում, քայլում հերոսաբար
Թշնամական կատաղի վռնոցների միջով:

Այն, վոր Սողոն առարկեց Ալեքսանի մասին,
Շատ շատերին պղտորեց.

— Ճիշտ ե ասում, — ասին:

— Իսկ հորն ինչ՞ով չի բերում, ինքն ե մեռնակ դիմել...

— Ինչ իմանանք, ինչ անհայտ խորհուրդ կա սրտի մեջ...

— Յերկու մսուր ե ուզում հոր խելացի վորդին...

— Վոր իր հոր տանն աշխատի, կուլեկտիվում ուտի...

— Վոր եղպես ե լինելու դիմումս յետ տվեք...

— Ըստ հյուլթյան...

— Միք գուռա...

— Միք աղմկի, տղեք...

— Թույլ տուր, թույլ տուր, — տաքացալ

տեղից Հովաս քեռին

Ու գոռ տվալ սրտմտած՝ լեզվին ու ձեռքերին. —

Ձեք ընդունում իմ տղին... Ինձ ուր եք անպատվում,

Եսպես են, համ, ընկերներ, կեղծն ու անկեղծը զատվում

Իմ տղին միք ընդունի, առեք ձեր Սանթրոսին,

Թող կուլակները մտնեն, Սողոն բարեխոսի...

Ո՞վ ե կատեղ հարադատ, յէս, թե Չաթնանց Սողոն,

Ախար, դեմ ե զուխողին նա իր ամբողջ ցեղով...
Հանկարծ ելի բռնկվեց թայֆայական վոգին,
Ել վոչ վոք չի խնայում, չի նայում վոչ վոքի:
Ու վեր կացավ Գարսեանն, ուժգին զանգահարեց:
Զանգը խփեց սեղանին ու ջղային գոռաց:
Տիրեց կրկին լուսթյուն, նա խորը շունչ առավ:
Յեվ սկսեց՝ սե աչքերն Ալեքսանին հառած:

— Ընկեր Սողոն, ընկերներ, հարցը դրեց ուղիղ:
Այո, մենք չենք ընդունի կիսատ յեկողներին:
Միտքը նրա ճիշտ ե: Բայց ընկեր Սողոն հետո
Կոպիտ սխալ կատարեց... ուղիղ տեսակետով:
Ուզում ե նա շարտել յերիտասարդ տղին
Դեպի ուղին հետադեմ, դեպի աշխարհը հին:
Հերը նրա չի գալիս, ծերուկ ե նա համառ:
Աշխարհը չի կործանվի մի ծերունու համար:
Բայց մենք ունենք իրավունք Ալեքսանին վտնել,
Բախտը կապել պառավին, հին աշխարհին գամել
Յես ընավ չեմ կասկածում Ալեքսանի վրա:
Հայտնի յե մեզ, խռովել ու բաժանվել ե նա:
Յեվ կուխողի շարքերում մեզ հետ կը պայքարի:
Զի հեռանա, չի փախչի կիսաճանապարհից:
Յեկել ե նա բանակից, մերվել ե նա մերոնց,
Յեվ նա կարող ե դառնալ առաջավոր հերոս:
Իր հորն ել նա կրերի առ ժամանակ հետո:
Քեռի Հովասն ել կգա անգալաճան սրտով:
Ընկեր Սողոն թոյ իզուր առարկություն չանի,
Մենք կողիկտիվ կընդունենք ընկեր Ալեքսանին:
Ինչպես ամպոտ յերկնքի կախարդական մաղից
Արևախաշ արտերին առատ անձրև մաղի:

Այնպես ազդեց Գարսեանն ուղեղների վրա,
Փափկացրեց չոր կողերն ու համողեց նրանց:
Միայն Սողոն չզիջեց, մնաց անզրպելի:
Յեվ գործն իրա հաստատուն՝ շարունակեց ելի:
Իսկ ժողովուրդը հուզված, անցավ Սեանի կողմն
Ու Ալեքսանն ընդունվեց ծափով ու աղմուկով:

Յերբ աղմուկը դադարեց, կրքերը մեղմացան,
Գրպաններից հանեցին գուլլասարի թուխուն.
Նխտի վերջին շարքերից Արևը վեր կացավ:
— Կարելի չե յերկու խոսք, ընկեր... ներողություն:
Յես իմ կողմից, ընկերներ, պետք ե ասեմ անկեղծ,
Վոր ընկերը լավ խոսեց, կարգին ել հասկացանք:
Դեռ չեմ անցել մեր գյուղով եսպես գիտուն ընկեր,
Վոր մասսայի մեջ տաներ կարգին մի աշխատանք:
Պարզ ե ուրեմն, ընկերներ, վոր մեր իշխանությունն
Ուզում ե, վոր լավ ապրենք, երթանք ուղիղ ճամփով:
Մեր միջի մարդն ե ելի ժողովրդին գցում
Ու գործերը չի վարում իշխանության կամքով:
Այ՛, կողիկտիվ հիմնեցինք... բայց մեր գյուղում կա մարդ,
Վորին հրում ենք հեռու — «Լուլալ ե, ձայնազուրկ»:
Բայց, ընկերներ, թույլ տվեք, որինակի համար,
Մեր տանը տոն ե այսօր, կուլակի տանը՝ սուգ:
Ախար, ախար ի՞նչ կուլակ... դիմում ե նա գրել
Վոր կողիկտիվ ընդունես, ել ո՛ւր ես թաղցընում.
Թե չե ուզում ես հանել թայֆայական վրեժ,
Մարդու վրեն կուլակի անուն ես փակցնում:
— Եդ ո՛ւմ մասին ես այդպես բարեխոսում, Արեւ,
Վրա տվին տեղերից մի քանի ձայն միասին:
— Ինչո՞ւ պիտի չխոսեմ, բերանս չեն կապել...

Պոստամ եմ յես հալածված մեր Սանթրոսի մասին:
Ելի ժողովն աղմկեց: Ելի Հովաս քեռին
Ֆերկու ձեռքերը պարզած՝ «Թույլ տուր, թույլ տուր»
բղավեց:

Ելի՝ սաստիկ սաստելով կոմսոմոլիստներին՝
Ընկեր Սողոմ հարցական զեկուցողին նայեց:
Գարսեանը վեր կացավ. զանգահարեց ելի.
— Հասկանո՞ւմ եք, ընկերներ, առաջարկում ե նա,
Վոր կոլլեկտիվ ընդունենք մորթը փոխած գելին,
Վոր թունավոր վորդն ելի մեր աղիքում մնա:
«Մեր տանը տոն ե այսոր, կուլակի տանը՝ սուգ»...
Լավ ե ասում. իսկ արդյոք, սուգ չի՞ յեղել մեր տան,
Յեվ կուլակը մեղ համար թափել ե արտասուք,
Թե՞ մեր սգովն ե արել և հարսանիք, և կյանք:
Իսկ ով խղճում ե Չաթնանց, խղճում ե կուլակին
Հիմար ե, կամ դավաճան, կորած վոտով-զլխով:
Կուսակցությունն, ընկերներ, ունի լողունդ հալիքձ.
Այժին բոստան մի թողնի և կուլակին՝ կոլխոզ:
Մենք հասկանում ենք նրանց քաղցրամեղրիկ լեզուն,
Նրանց ստոր տաքտիկան, նրանց հաշիվը բարդ.
Նրանք ներսից են հիմա մեղ կործանել ուղում,
Սա դիմում չի, ընկերներ, այլ խորամանկ թակարդ:
— Դե վոր եղպես եք խոսում՝ դիմումս յետ տվեք, —
Գոռաց Աբելը մոլի ու տեղից վեր յելավ: —
Մենք եսպիսի կոլլեկտիվ չենք ցանկանում... տղեք,
Սրանք եղուց բոլորիս կդարձնեն կուլակ:
Կամ գեղովի կոլլեկտիվ, կամ վոչ մի կոլլեկտիվ,
Ով վոր եսպես ե ուղում, թող հետևի նա մեզ: —
Այսպիսի կոչ ուղղելով հուզված ժողովըրդին՝
Իր համախոհ մարդկանց հետ նա դեպի դուրս դիմեց:

Վերջին կանգնած շարքերից հետևեցին նրան.
Նախ առանձին-առանձին, հետո մասսայորին:
Անասելի զայրույթով շիկնեց Սաղաթելյանն,
Ու Սողոմն, խիստ շփոթված, ծոծրակն իրա քորեց:
Մուշեղ ամին հնամաշ արխայուխի ջերից
Կոլլեկտիվից դուրս գալու դիմումը դուրս հանել՝
Վախճանին եր սպասում այս նոր միջադեպի
Յեվ նայում եր դեպի դուրս անվճռական, անել:
Քեռի Մուքոն վեր կացավ սաստիկ տարակուսած:
Յեվ սկսեց յետ կանչել դուրս գնացողներին:
— Ես ինչ քամի յե մտել սրանց փորերն... ասաց
Ու ձեռն ամուր թափ տալով՝ տեղը նստեց նորից:
Մուշեղն ել իր դուրս գալու թույլը դրավ գրպան:
Նա յեվ նստեց ու հետո բոլորը նստեցին
Դռան մոտից ել վոմանք տեղերն վերադարձան
Ու զրսից ել մինչև իսկ վերադարձան կրկին:
Գարսեվանը տագնապով շուրթերն ամուր սեղմած՝
Դրությունը փրկելու փնտռում եր լուռ մի յելք:
«Պուճուր» Վաղոն Սամսոնին ասում եր խիստ կամաց.
— Կհավատան նրանք ձեզ, պետք ե հայտարարեք...
Յեվ Սամսոնը, վոր վերջին յերկու յերեք որում
Չեր հանդիպել այսպիսի ծանր ձախորդության
Ը իր մասին հաճելի այն միտքն եր գուրգուրում,
Թե իր համար ել վոչ մի դժվարություն չկա, —
Հանկարծակի յեր յեկել, շմեկ եր յերկյուղից
Թշնամու այդ առաջին հարձակումի դիմաց:
Ուստի պատրաստ եր բռնել յուրաքանչյուր շյուղից,
Վոնց վոր ծովում ալեկոծ խորասուզվող մի մարդ:
Վերադառնալ պարտված, կոլխոզն արդեն տված...
Պարտությունը շրջկոմի նիստում խոստովանել...

Վեջ. այս միտքը Սամսոնին սարսափելի թվաց։
Ավելի շուտ ինքնիրեն սիրով նա կսպաներ։
Նա այդ խնդրում «ինքնուրույն այն տեսակետն ունեւր,
Թե գոլգոթին ինքնակամ կոլխողը չի մտնի։
Պետք է հուպ տալ մի տեղից, մի կերպ վախեցնել,
Վորպեսզի նա իսկական ճամփան իրա գտնի։
Իսկ Գարսեվանն ինքնիրեն միտք եր անում արդեն,
Թե Աբելի յետելից ով հիմա դուրս գնաց,
Ոգնեց միայն կոլխողին, ողը մաքրեց կարծես
Յեւ ժողովում իսկական կոլիկտիվը մնաց։
Դրա համա զայրույթով շրթունքը նա ծամեց,
Յերբ վոր Սամսոնն սկսեց պաշտոնական դիրքով.
Թե ով գնաց կոլխողից, նա թշնամի յե մեզ,
Թե կզրկենք հողերից ամբողջ ընտանիքով...

Ժամր տասին գիշերվա ժողովն հաղիվ փակվեց։
Ու Գարսեվանը խնդրեց, կոմմունիստները մնան։
Դուրս հոսեցին հազարով։ Դասարանը պարպվեց
Յեւ սկսվեց դռնափակ ժողովն այն ժամանակ։
— Ձի կարելի, ընկերներ, գործել այս ձևով,—
Լուսթյունը խզելով խոսեց Սեվանը խիստ,—
Կուսբջիջի գծի դեմ դուրս ե գալիս Սողոն։
Մաղ մնաց վոր տապալիր մեզ հարազատ տղին,
Իսկ լերբ վոր պետք եր խոսել Չաթնանց Աբելի դեմ,
Ընկեր Սողոն սուս արավ...
— Ի՞նչ է, ընկեր Սեվան,—
Դուռաց Սողոն կատաղի,— յես միտքդ լավ գիտեմ,
Մարդկանց կուշակ ես հանում, բերում ես քո թայֆան։
Յեւ ինքդ ել շատ լավ արիր, նպատակիդ հասար...
Կոլիկտիվից քեցիք խելոք միջակներին...

— Դուք ե Սանթրոսը Չաթնանց միջակ ե քեզ համար,
Դու պատրաստ ես ընդունել գուցե և տերտերին...
Հարկավոր չեն, ընկերներ, մեզ այնպիսի մարդիկ,
Վորոնց Աբելն եր բերել, Աբելն ել յետ տարավ։
Հարկավոր չե, վոր Վադոն մարդկանց ահաբեկի,
Բերի զոռով դիմումներ, զոռով համատարած...
Ընկեր Սամսոնը նուշնպես արավ կոպիտ սխալ.
Հայտարարեց, թշնամի այն տատանվողներին...
Ձի կարելի, ընկերներ, խոսքով այսպես խաղալ,
Թշնամի յե միթե մեզ, ասենք, Հովաս քեռին։
Սաղաթելանը սաստիկ բարկանալուց շիկնեց.
Վճնց թե սխալ կատարեց... ձվ ե քննադատում...
Նա լուկ սիրում եր լսել զովասանքի շշուկներ—
«Վճնց ե խոսում...», «նա հալում, ականջդ ե կաթում»։
Դրա համար գրպանի բլոկնոտն արագ հանեց,
Ինչ վոր գրեց բլոկնոտում շինծու համբերությամբ,
Ծանր լեքց մի բույն ու խիստ պատասխանեց.
— Ինքդ, ընկեր Գարսեվան, առաջ բերիր խուճապ,
Համատարածք տալու վտանգ առաջ բերիր,
Սխալը դու մոռացար, մեզ ես վարկարկում,
Բամբաստում ես շրջանից յեկած ընկերներին։
Հասկանում ես, դոր դրան ասում են աջ թեքում։
— Թե ով ե աջ, ով ե «ձախ», այդ կտեսնենք հետո,
Մենք վաղը դեռ կխոսենք այս բոլորի մասին,—
Պատասխանեց Գարսեվանը կոտրված սրտով,—
Այն ել «ձախն» ել միատեղ այսոր պարզվեցին։

ԻՆՆԵՐՈՐԴ. ԳԼՈՒԽ

ԻՌԻՇԱՆԻ ԲԱՐԱՓԸ

Չաթնանց գերդաստանն անհուշ որերից
Յեղիլ ե գյուղում անվանի հարուստ:
Չավթել ե նա միշտ լավը հողերի:
Յորենն ե փթել Չաթնանց աժըարում:
Աճել ե ժամի ամպ-հովանու տակ,
Վորպես հաստարուն մի ընկուզենի,
Փռելով գյուղում արմատներն անտառ՝
Ծծել ե նրա հյութը վայրենի:
Ծծել ե արյունն, ուղեղը նրա,
Ու ասել փարթամ, կանաչել ե միշտ:
Հետո տարածել մութ գյուղի վրա
Իր շուքը ձուայր, վորպես «հովանի»:
Իշխել ե գյուղում վորպես տանուտեր,
Վորպես մի վայրի կառավարութուն:
Արորն ե խոնարհ նրան սնուցել
Ցարական դաժան կարգերի մութում:
Յեղ կուչ ե յեկել իշվառ գյուղացին
Չաթնանց դարավոր ընկուզենու տակ՝
Աչքերը հառած ավելցուկ հացին,
Իր վողորմելի բախտին անգիտակ:

Ու յերբ վոր մի որ մի Չաթնանց խաթուն
Նրա քրտինքով լցված ամբարից
Նրան, աջ ձեռքով, ձախ ձեռից թագուն,
Տվել ե մի բուռ բորբոսնած գարի,—
Վերջըրել ե նա ու հազար բերան
Որհնել ե նրա բարիքներն անանց:
Ու վողջ գավառում հնչել ինքնիրան
Ջընգացել ե զիլ անունը Չաթնանց:
Ու «Մայր աթոռին» հայտնի ե յեղիլ
Անունը Չաթնանց, հարկը հուրընկալ:
«Վեհափառն» ժանձահ կոնդակ» ե հղել,
Որհնել ե Չաթնանց վար ու ցանքն ու կալ:
Յեղ «Յեբրանելին» Խրիմյան Հայրիկ
Ուրախ շոյելով միրուքն սպիտակ,
Հանգիստ ե առել Սևան զնալիս
Չաթնանց անվանի ընկուզենու տակ:
Գյուղական համեստ սրպաս ե կերել
Այդ կեղծ ռամկասերն եջմիածնական
Ու Չաթնանց բազում մեղքերը ներել:
Փառավոր խղճով անցել ե Սևան:
Իսկ Չաթնանց Սանթրոսն որհնված բահով
Ճեղքել ե զլուխն աղքատ Ռուշանի,
Ու հափտակել պապական մի հող՝
Սովի մատնելով մի խեղճ ընտանիք:
Մեռել ե Ռուշանն այդ վերքից հետո
Ու ման ե չեկել Սանթրոսն անպատիժ:
Դատարան մըտած հիտուն մանեթով
Դարձել ե չհաս, չենթակա դատի:
Գյուղը վողովվել, հուզվել ե սաստիկ,
Անգոր զայրույթով բուռնցքը սեղմել:

Հաշտվել ե հետո արշուճոտ փաստին՝
Յեւ իր անճարակ զայրույթը մեղմել՝
Հետո մոռացել են հեզ Ռուշանին,
Յեւ իրենց հոգու փրկութեան սիրուէն
Հաց են ուղարկել «ազիզ ուրերին»
Ռուշանի թշվառ, մուրացող այրուն:
Չավթել են այդպէս ու կերել-ժարսել
Չաթնանք Ռուշանի հողը բերքառատ:
Սակայն հին անուէն ե վրան մնացել,
Գյուղում ասում են՝ «Ռուշանի Գարափ»:

Գյուղից քիչ հեռու, Չանգվի յեղերքին,
Մի ցից, վիթխարի ապառաժի տակ,
Կար սի գեղեցիկ, մի փարթամ այգի,
Այգու մեջ մի տուն՝ պատերն սպիտակ:
Ռուշանի Գարափն եր այդ անվանի,
Չաթնանց Սանթրոսի ամրոցն անսասան:
Յեւ կոխտելով սալանը ձյունի՝
Նրանք յերեքով կամուրջն անց կացան:
Գամփուր, կատաղի, նրանց դեմ վաղեց:
Չգալով կարծես ահալոր վտանգ:
Փայտի հարվածից վոռնաց, գազազեց,
Բայց ելի համառ պայքարի մտալ:
Սանթրոսն ու վորդին յեւան պատշգամբ
Ալեքսանն ասես ուզեց բարեկեր,
Բայց զսպեց իրեն ու սուր հեզութեամբ,
Գունատված, նայեց պատշգամբն ի վեր:
— Ի՞նչ եք կամենում, — հարցրեց Սանթրոսն, —
Ահից աղճատված ժպիտն յերեսին:
— Յեկել ենք մի խիստ կարեւոր խնդրով:

Նախ շունդ կապիր — ասավ Աղասին: —
Հետո հավաքվիր, քսանչորս ժամից,
Սուս ու փուս, հանգիստ, գնա Ռուշանից,
Ռուշանի Գարափն այլևս քոնը չի,
Դու վոչինչ չունես քարափի միջին:
Ու Սանթրոսն ահից իր գույնը նետեց:
— Աքսորո՞ւմ եք մեզ. — մաւնչաց վորդին:
Նա մոլի բնազդով բահը վերցրեց
Ու անգոր վոխով շարտեց գետին:
— Բահդ քեզ պահի. — Ալեքը Ֆշշաց, —
Վախեցող չկա կուլակի բահից:
Շուտով կհասնի աքսորելու ժամն
Ու եդ ել կանենք, շատ միք շտապի:
— Չե՞ վոր յես դիմում տվի կոխտելին, —
Մրմնջաց Սանթրոսն. — Բեր գնամ, ասա,
Ես սառնամանի ձմեռվա կիսին
Ո՞ւր եք աքսորում, ընկեր Ալեքսան:
Տո, գալիս եմ ե՞, սանահեր Մուքո,
Ինձ ել ընդունեք, միանամ, յեղբայր:
Տամ տասերկու յեզ, յերեք ձի, ութ կով,
Յերկու հարյուր ու յերեսուն վոչխար:
Չաղացս ել արդեն Փոկն ե գրավել:
Ել ի՞նչ եք ուզում սրանից ավել:
Ախար Բեր գնամ սեփական տանից,
Դե մորթեք, ելի, թաղեք կիւղանի:
Յես տուն եմ շինել փափագով բարի,
Բաղչա յեմ տնկել, հասցրել բարի,
Կյանք եմ մաշիլ ե՞, քրտինք եմ թափել,
Եդ վճեց եք ուզում քրտինքս լափել:
Պոռթկաց Ալեքսանն անհատակ վոխով:

Ու պատասխանեց դառն ծիծաղով.

— Եյ, Սանթրոս աղա, եդ վճնց ես ճառում,—

Ո՛ւմ քրտինքն ե ծով՝ լյրել քո առուն:

Ո՛ւմ պապն ե այստեղ քո բահով ընկել,

Ո՛ւմ հերն ե քո ես ծառերը տնկել,

Ո՛վ ե տանջւել շողին ու ցրտին, —

Ի՛մ պապը, ի՛մ հերը, յես — նրանց վորդին:

Մեզնից ես խլիլ, յետ տուր ելի մեզ,

Իսկ դու յել գնա աշխատանք ճարի,

Թող քո ես սիրուն սենյակների մեջ

Կողկեկտիֆն իրա գործերը վարի:

Ալեքսանն անգուսպ վոխով եր խոսում,

Խայթում Սանթրոսին և նրա տղին:

Բեյբուդը հուզված կծում եր լեզուն

Յեվ նրանց լսում լուռ ու կատաղի:

Դիվական ուժով զսպում եր իրեն,

Վոր չվերցընի բահը շարտած,

Վոր ամբարտաւան Ռուշանանց տղեն

Իր պապի տեղում չընկնի թպրտա...

Յեվ զգում եր նա, թոռը Ռուշանի,

Նրա աչքերի թունավոր լեզուն:

Ու ցույց եր տալիս նրան սուր ժանիք

Յեվ ավելի սուր ու խորն եր խոցում:

Չար ծղրտոցով դուրս թռավ տանից

Կինը Սանթրոսի — Հուռմսիմ Չալոն:

Հայհոյեց, թքեց նա Ալեքսանին,

«Կերած աղուհացի» երեսին տալով:

Ու հետըզհետե խառնվեցին վեճին

Սանթրոսի հարսներն անգամ չխոսկան,

Իսկ յերեխեքը շունն արձակեցին

Ու հայհոյելով, լալով մեջ ընկան:

Սանթրոսը սաստեց ճայթող պառավին,

Լեզվանի հարսին ուղարկեց վերև:

Կապեց շունն ելի ծիրանի ծառին,

Յերեխաներին կարգի հրավիրեց:

Ու հետո խոսեց խռպոտ հուզմունքով.

— Ընկեր Ալեքսան, Աղասի, Մուքո,

Յերեխաներիս վիզը միք զարկի,

Միք զրկի աշնան ծառերի բերքից:

Ինձ ել ընդունեք, ապրեմ կոխողում.

Մրանից ավել ել ի՛նչ եք ուզում...

— Ուրիշ վոչ մի խոսք. պապիս Բարափից

Դուք կհեռանաք մինչ վաղ յերեկո,—

Կրկնեց Ալեքսանն անզիջող ու ըրտո,

Ու վերադարձան նրանք յերեքով:

— Շանսատակ կանեմ յես ես լակոտին,—

Ֆշաց մոլեգին Բեյբուդն ու հեաց,—

Յերեկվա գյադեն, տկլորն, անոթին

Ես ի՛նչ ե դառել, աստված իմ, աստված:

Չաթնանց տան վրա բերան ե ծովում,

Վռնդում են մեզ հողից պապական,

Ու վոչ չ՝ոքի դին գետին չի փովում,

Մտիկ ենք տալիս՝ ռեխներիս փականք:

Ես ճւր ենք հասել, այ հեր, այ նանի,

Վայ մեր նամուսին ու գերդաստանին:

Ել համբերելու ույժ ու սիրտ չկա:

Յճրբ, յերբ, վերջապես, մեր հերթն ել կգա,

Դանդենք ես աշխարհն ու կարգը, վորտեղ

Մարդչ բատրակին «ընկեր» ե ասում:

Բատրակ ե, պիտի տրորես, մորթես,

Ճիպոտ տաս մոթին որը քառասուն...

ՏԱՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԲՈՒՔԸ, ՄԱՐԴԸ, ՄԵՔԵՆԱՆ

Բուքն ե պարում ոճազալար,
 Բամին իր պաղ փողն ե ածում:
 Ու բքի հետ, բքահալած,
 Զայն ե տալիս կատարածուն.
 — Սեւմը բերեք, սեւմը զտեք,
 Միացրեք մի ամբարճում,
 Ամբարդ բաց, քափուր Մուշեղ,
 Հորըդ հանի, ուստա Հարսեթ...
 — Վա՛յ, քու անխիղճ Գարսեանին.
 Ո՞վ ես բքին հոր կհանի,—
 Պատասխանեց ուստա Հարոն
 Ու ներս մտավ սրթսրթալով:
 — Լավ, սերմացուս, ասեմ, բերի՛,—
 Պատասխանեց Մուշեղ բիճան,—
 Ո՞վ կաշխատի ես ցրտերին,
 Դրսումը դառ բուք ու բորան:
 Հրեն Գևոն ու Աղասին
 Սերմը նորից յետ բերին տուն:
 Սարսափելի ցուրտ ե, ասին,

Տրյերն ետուր չի աշխատում:
 Համ՝ հարցրի, ասին՝ Սեանն:
 Ու Սողոն սերմը չեն զտեր:
 Տես, յեթե կա եղպիսի բան,
 Յես չեմ զտի վոչ մի հատ ել:
 Իրենք նստած իրենց բանին՝
 Խեղճին են հենց առաջ դցում:
 Մինչև Սողոն հոր չհանի,
 Յես չեմ հանի... ներողութ՛յճւն:

Սերմագտման կամպանիայի
 Ժամկետն արագ անց ե կենում:
 Մինչ վոռնոցով զազանային,
 Առանց մի ժամ ընդհատվելու,
 Բուքն ե գյուղի ճամփեք լիզում
 Ծածկում, ծեփում դուռ ու տանիք:
 Ու բամբասանքն հազար լեզու,
 Թե ե առնում բուք բորանից:
 Ու վոչ մի մարդ մոտ չի գալիս:
 Սերմագտիչն անգործ կանգնել՝
 Մինչդեռ գալիս են շրջանից
 Տագնապալից հրահանգներ:

Սեանը լուռ կանգնած բակում
 Նայում ե պաղ մեքենային:
 Ամպ ե կապել նրա հոգում,
 Մի տխրութ՛յուն գերմարդկային:
 Անիջներով ձյան մեջ խրված,
 Բորանի դեմ հպարտ, մենակ,
 Ասեա գյուղից վիրավորված,
 Միտք ե անում այդ մեքենան:

Զգում ե նա մեքենայի
Մտքերը սառն ու իմաստուն:
Այդ սեփական մտքերն եյին
Տարերքի դեմ կռիող մարդու:

Վերադարձավ կատարածուն՝
Բեխից կախված սառցի լուլան:
— Ախպիր, վոչով հոր չի բացում,
Բղավելով հոգիս ելավ:
Ու հավաքվեց տրիերի մոտ
Բրիգադը լուռ ու հոգնատանջ:
Նրանք մեռան վորոնեկով,
Վոչ մի հարմար տեղ չգտան.
— Մնաց սիայն մի դուռ մի յեղ,—
Ասավ տխուր քեռի Մուքոն.—
Մի ընտանիք տանից հանենք,
Զուլ-փալասով ուղարկենք գոմ,
Կամ թե հողան հարևանի,—
Ել ճար չկա Է, ինչ անենք —
Սերմազտիչն այնտեղ տանենք,
Գիշեր ցերեկ թույ հա բանի:
— Ա՛յ, լավ ասավ քեռի Մուքոն,—
Վրա տվին ժիր աղմուկով:
— Լավ եմ ասում, գլխիդ մատաղ,
Բայց ո՞վ հիմի մեզ տուն կտա:
— Քեռի Մուքոն, քեռի Մուքոն...
— Իր խելացի համոզմունքով:
— Ձեռ միք առնի, շուն շան վորդիք,
Խորհուրդ տվի, խաթմ ընկա:
Ա՛յ, Սողոյի տունը մոտիկ,

Ինքն ել—Սողոն—կուսակցական:
Ու Սողոյին դարձան շտապ.
Զղայնացավ Սողոն սաստիկ,
Հետո ճնշող հանգստությամբ
Ասավ.— Իր հերն համաձայն չի:
Իսկ Ալեքսանը մի վայրկյան
Պիտի ասեր՝ մեր տուն բերեք,
Նետի նման գլխով անցավ:
Նա բաժանվեց տանից յերեկ:
Զյունը փայտով փորփրելեն
Դեռ տատանվում եր Աղասին:
Սիրտ եր տալիս նա ինքնիրեն,
Վոր խոսք բանա իր տան մասին:

— Հարկավոր չե ուրիշի տուն,—
Ասավ Սեանն արհամարհոտ.—
Տեղի համար զուր ենք վիճում,
Յես տուն գիտեմ հարմար և մոտ:
— Ո՞ւմ տունն ե այդ,—գեղնեց Սողոն:
— Իմ սեփական,— պատասխանեց —
Դե, ընկերներ, Բնչ եք զողում...
Շուտ մեքենան փողոց հանենք:
Վրա ընկան աղեք բոլոր
Ու մեքենան փողոց բերին:
Քեռի Մուքոն կարմրելով.
Ձեռքը դրավ տրիերին.
— Ընկեր Սեան... ներողություն:
Մխալիցի յես խայտառակ...
Թող մեքենան բերեն մեր տունն,
Ինձ են ասել նախ և առաջ:

— Վնաս չկա, քեռի Մուքո,—
Ժպտաց Սեանը սիրալիրո—
Դարդ մի անի, լավ ե, դու քո
Ամբարը բաց, սերմը դտիր՝
— Գնամ բերեմ, գլխիդ մատաղ,
Ջուրն ել կընկնեմ քո յետևից—
Ու վոտքերով ձյունաթաթախ
Վազեց Մուքոն՝ փայտը թւին։

Կեսը հողում, կես հարկանի,
Մի կոնաձև յերդիկ ուսին,
Թոնրի վրա հնոց քուրսին —
Եսպես ե տունը Սեանի,
Սակայն յեթե մի քիչ մնա,
Ու աչքերիդ դեմ լուսանա,—
Դու կտեսնես հին քուրսու քով
Հայանառից գնած վարկով
Մի գեղեցիկ պրասիկան՝
Մոմաշորե սփռոց վրան,
Հետո լինին՝ յերկու հատոր,
Վիեննական մի թիկնաթուռ
Մնում ե դեռ մրոտ պատին
Հին հիշատակ մի պլակատի։
Հետո կրկին ե՝ պլակատներ,
Յե՛վ նկարներ մեծ դեմքերի,
Վորոնք դեղնեւ են, գունատովել
Հնադարյան թոնրի մրից։
Ու խայտաբղետ պլակատներից
Վար, անկյունում, պատի տակին,
Կան կճռճներ հազարամյա,

Տարբեր ձևի ու հասակի։
Յե՛վ նրանց մոտ, վորպես տեսիլ
Դեռ չհայտնված մի թշնամու,
Վորպես ոտար քաղաքացի,
Պպզած ահա մի սև պրիմուս։
Թիկն են տվել գոմի դրոան
Յերկու սաժեն տաշած քարի։
Ու հացենու տասը գերան՝
Գնված ելի Հայանառից։
Այդ Գարսևանն անցյալ տարի
Դեռ ցանկացավ ջինեւ նոր տուն,
Դուրս գալ խավար գետնափորից
Ապրել առողջ, մաքուր ողում։
Սակայն, յերբ վոր մեջ տեղ յեկավ
Կոլխոզացման հարցը գյուղի,
Նա թույեց տունը սեփական,
Գերեց նրան այլ մի ուղի։
Վե՛չ թե ջինեւ փոքրիկ մի հյուղ
Խառնափնթոր կույտերում աֆն,
Այլ կառուցել նոր տիպի գյուղ՝
Պլանավոր, լուսավոր, լայն։

Այդ կիսահարկ խրճիթի մեջ
Ապրում են, կան մեկմեկու խառն,
Իրար ձուլված, իրարամերժ
Յերկու սերունդ, յերկու աշխարհ։
Ու նստոտած հին քուրսու քով,
Գեռի Բարթոն, Թեգուշ բաջին
Իրենց կրտսեր վորդիներով
Սպասում են դեռ Գարսևանին։
Գարսևանի կինը, Ջարեն,

Քուրսուց հեռու՝ սեղանի մոտ
 Նոր կենցաղի վոգուս վայել,
 Գիրք և կարդում մի անձանոթ:
 Մըլավում և բուքը դըսում
 Կատվի նման զարհուրելի,
 Հուպ են դալիս նրանք քուրսուն,
 Նազլ և անում Բարթոն ելի
 Իր հովվական արկածների
 Գալլարնակ սարի մասին,
 Ու խեթ նայում սուտ տեղերին
 Չհավատացող ջահել հարսին:
 Վից գալլ արդեն նա սպանել,
 Մոտ եր արդեն յոթերորդին,
 Յերբ Նովրուզի, Ալեքի հետ
 Խրճիթ մտավ ավագ վորդին:
 — Դեհ, վեր կացեք քուրսու տակից:
 Ինչ կա-չկա տարեք հողան:
 Ա՛հ եր, դու յիլ նազլդ փակիր
 Ու ժանդոտած ուրագդ առ,
 Բակի սյունը մի քիչ տռչի:
 Դեմ ե առել մեքենային:
 Ջարիկ, արագ տունը քաշի,
 Թող յերեսին այան նայի:

Ծերուկ Բարթոն ուրագն առավ,
 Պապի տնկած սյունը տաշեց:
 Հին եր արդեն, տեղից թռավ:
 Քեռի Բարթոն խոր ան քաշեց:
 Ու ներս մտավ այդ մեքենան
 Լոնց վոր մի սև հսկա մոզես:

Մի կարասի ուշքը գնաց,
 Հողե թմբից վար գլորվեց:
 Կարասի մոտ կանգնած թզուկ
 Այն պրիմուսն ուրախ խնդաց:
 Նայեց մտնող մեքենային,
 Վորպես հերոս մի սուրհանդակ:
 Հնադարյան թոնրի կշտին
 Կանգնեց հտպիտ այդ մեքենան:
 Ու կուլ տալով կուլմը վշտի,
 Պառավ խեթ նայեց նրան:
 — Վոտքդ կոտրեր, չգայիր,
 Չդիպչեիր կարասիս:
 Ա՛խ, իմ կարասը կարմիր,
 Վախ իմ կարասն եր ազիզ:
 Տեսա՝ գիշեր չերազում
 Կարասըս տաղ եր ասում:
 Չար յերազ եր, կատարվեց,
 Տես, կարասըս կոտրվեց:
 Սևան, վորդի, դուրս արի
 Եդ գործերից ես տարի:
 Յես վախում եմ, յես դողում,
 Դու՛ման ունես դու գյուղում:
 Սողոյին չեն բամբասում,
 Քո մասին են բան ասում:
 Ասում են նա յի արի,
 Նա յի կոլխոզ հնարել:
 Փսփսում են ամեն տեղ,
 Թե կփախչեք ես գիշեր:
 Դու յիլ գիշեր չես գալիս,
 Յես նստում եմ ու լալիս:

— Նախ և առաջ յես կղտեմ,
Ասավ Ալեքն, — իմ սերմացուն։
Ու մեքենան գործի ղրին
Վորոտմունքով ամենացունց։
Դիրդացին ոճորք ու դուռ,
Ու մուր թափվեց առաստաղից։
Յեւ վորպես նոր մի կյանքի լուր՝
Ձայնը հասավ հեռու թաղին։
Արդեն գլուղում, այստեղ, այնտեղ,
Սկսեցին հորեր բանար։
Շալակներով կամ սելերով
Սերմ են բերում, մարդիկ, կանայք։
Սերմ են բերում, պիտի դտեն
Ու միացնեն մի ամբարում։
Այդ առաջին քարն է արդեն
Մի նոր աշխարհ կառուցելու։

Հորն է հանում քեռի Մուքոն՝
Բեխից կախված սառցի լուլան։
Խորախորհուրդ մտածմունքով
Շունչ է առնում քուլա-քուլա։
Ինքն էլ գիտեր, վոր բուքը չեր
Պատճառ, վոր նա հոր չեր հանում։
Ինչքան էլ բուքն ուժեղ փչիր,
Կար մի ուրիշ, խոր տատանում։
Նա պարզապես սիրտ չեր անում
Սերմը գտել ու միացնել։
Կարծես թե նա մի անանուխ
Մազե կամուրջ պիտի անցներ։

Հեշտ եր գրվել թղթի վրա։
Բայց հերթը յերբ հասավ գործին,
Մարդիկ նայում էին իրար
Յեւ սպասում մեկի փորձին։

Յեւ յերբ Մուքոն իր սերմացուն
Ջտելուց յետ ամբար տարավ,
Ու դատարկեց պարկը լեցուն
Համայնական շեղջի վրա, —
Ասես պոկվեց կրծքից մի բան
Ու խառնվեց ցորենի հետ։
Ասես ընկավ մի ճանապարհ,
Վոր չի տեսի ել ղեպի յետ։
Յեւ նա յերկաթ, յերկաթ նայեց
Իր ցորենի հատիկներին,
Մինչև հասավ ուրիշի հերթ
Յեւ հարիշի սերմը բերին,
Լցրին վրան... ելի, ելի...
Ու ծածկեցին հետզհետե...
Վոնց վոր ճամփորդ մի սիրելի
Անհետացավ սարի յետև։
Գործում է դեռ շափշափելով
Սերմադտիչ այն մեքենան։
Ու հավաքված նրա բոլոր՝
Ձայն են տալիս ջահել կանայք։
— Նովրուզ, դու ել կոլխոզ մտար...
Նովրուզ, ել հիւ աղջիկ կտա
Մոլի համար հարամ հային,
Տերտերի մոտ՝ թյուրք տղային։
— Նովրուզ, աղջիկ ունենայի

Աստված վկա, քեզ կտայի.
— Նովրուզ, գիշերն յերազ տեսա:
Դու կդառնաս հայի փեսա:
Ժպտում ե լուռ Նովրուզը քաջ
Ու դարձնում կոթը չարխի.
Տեսնում ե նա աչքի առաջ
Դեմքն աղջկա տրտմաթախիծ:
Ա՛խ, անխժված մոլլան խառնեց,
Թե չե Ասլին նրան կառներ.
Ասավ՝ ով վոր կոլխոզ մտնի,
Հայի աղջիկ պիտի գտնի:

Դրսում դեռ բուքն ե վրնջում:
Բքի յերգով գյուղն ե քնած:
Բայց շափշափում ե դեռ անդուռ
Սերմադտիչ աչք մեքենան:
Աշխատում են նրանք հերթով՝
Յերկու սիրող յերիտասարդ,
Յերկու ազգով, բայց մի սրտով
Ու միևնույն գործով հպարտ:
Առավոտյան դադարեցին:
Սերմադտիչն ելի կանգնեց:
Չնայած պարզ յեղանակին՝
Սերմը չեյին բերում այլևս:

— Ընկեր Սողո, սերմդ բեր քե:
Պարապ կանգնած ե մեքենան:
Չե՞ վոր պիտի գիշեր ցերեկ
Բանի, վոր մենք յետ չմնանք:
Կետը գյուղի նայում ե քեզ,

Պրովոկացիա կա քո մասին:
Ինքդ պիտի գործով հերքես,
Վոր թշնամին չբամբասի:
— Ի՞նչ են ասում, ընկեր Սեան:
— Ինչ են ասում... Ի՞նչ չեն ասում:
Այ, ասում են այսպիսի բան.
Իբրև թե դու քո սերմացուն
Չես ուզում տալ կուլեկտիվին,
Վախենում ես անգլիացուց,
Վոր իբրև թե ասել ես դու,
Թե կոլխոզը կքանդվի:
— Ընկեր Սեան, սուտ են ասում,
Կուլեկային ասեկոս ե:
— Սուտ են ասում... դու սերմացուն
Միացրու, վոր չխոսեն:
— Ճիշտ ե, — ասավ գործարանից
Գյուղ գործուղված ընկեր Կարոն, —
Յուրաքանչյուր մի կոմմունիստ
Պետք ե լինի ղեկավարող:
Բայց վճնց պիտի ղեկավարես —
Քո անձնական որինակով:
Թե չե, ինչքան խելոք ճառես,
Չի հավատա ճառիդ վոչով:
— Հերը նրա համաձայն չի, —
Հեգնեց մի կոմյերիտական: —
Սերմի համար հորը կանչիր,
Սա իրավունք չունի այնքան:
Նայեց Սողոն, խորը դադված,
Ամբարտաժան եղ լակոտին,
Բայց բան չասավ, միտքը շաղված

Ու գլխիկոր՝ յեկալ վոտքի:
Ու դուրս յեկալ ընկեր Կարոն,
Վոր ստուգի, անձամբ նայի
Զտած ցորենը ամբարում,
Վիճակը նոր մեքենայի:

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՊՐՈՎՈԿԱՑԻԱՆ

Մեծ բազմություն ե հալածել գյուղամիջում:
Մեկը լալիս ե սրտաճաք և անիծում:
Տղերքն արագ դուրս վազեցին գյուղխորհրդից
Դեպի այն կողմն ուր ամբոխն եր ժողովրդի:
Տեսան՝ Սանթրոսն իր ծղրտան պառափն առած,
Իր մեծ հարսի, յերկու փոքրիկ թուռների հետ
Գյուղամիջով անց ե կենում լալահառաչ,
Պատառոտուն ու կեղտակուր շորերի մեջ:
Հաց են լինում մայր ու մանուկ սրտապատառ:
Հալիս են ձեն ձենի տված հարս ու կեսուր:
Ձեների մեջ, ժողովրդով ջրջապատված,
Վեր են կալել անասելի մի վայնասուն:
— Այ գեղացիք, հարևաններ,
Ունեք, յարաք, խիղճ ու հոգի,
Ձեն հանեք ե, լճն էք կանգնել:
Այ ուղտս ձեր դրոան չոքի:

Շշմեց Կարոն ես խաժամուժ տեսարանից
Ու հարցական նայեց ընկեր Գարսեանին:
Գարսեանի սրտով ցասման սարսուռ անցավ:

Ուզեց խոսի, սակայն Սանթրոսը մոտեցավ:
 — Դու, քաղաքից յիկած ընկեր,
 Գլխիս վրա տեղ ունես դու,
 Չարըդ տանեմ, վոտքդ ընկնեմ,
 Ման եմ գալիս քեզպես մարդու:
 Բան չթողին, գլխիդ մատաղ:
 Վոչ հաց, վոչ շոք, վոչ կարկատան:
 Յերեք հոգով տունս մտան,
 Լիրբ, անզգամ խոսքեր ասին,
 Ձահել հարսի սպառվին դիպան
 Են Ալեքսանն ու Աղասին:
 — Սուտ ես ասում, այ հալևոր,
 Բացակայեց քեռի Մուքոնս —
 Յես նրանց հետ եյի չէ՞ վոր...
 Շատ խելացի արարմունքով
 Քեզ մասսայի վճիռն ասին:
 Ձեռ չտվին վոչ քո հարսին,
 Վոչ ասացին ավելորդ խոսք,
 Վոչ ել առին տանից մի չովի...
 Ե՛հ, Ռուշանի Քարափն ել հո
 Ապուպապիդ քյավջանը չէ՞ր:
 Մենք վեր կալանք գեղի կամքով,
 Գեղի մասսան եր վորոշեր
 Դեռ դու գյուղում տներ ունես,
 Եդ տներում ապրիր ելի:
 Ի՞նչ ես ընկել ձների մեջ,
 Հավար կանչում, թրե գալի:
 Ազմըկեցին ամեն կողմից, իրար անցան:
 Չարթնեց ելի թայֆայական քնած վոգին,
 Կապը կարեց հազարլեղու պրովոկացիան

Ու հին ու նոր վեճերն իրար խառնըվեցին:
 — Լավ են արել, աչքը հանել...
 — Սովոր եր նա մարդ սպանել...
 — Պրովոկացիա յե ուղակի...
 — Քշիլ գյուղից լիրբ կուլակին...
 — Ո՞վ ե կուլակ... կուլակ գտար...
 — Կովդ կերար... կովխոզ մտար...
 — Ո՞վ թույլ տվեց Ալեքսանին...
 Մարդ աքսորի ու թալանի...
 — Սոցիալիզմ ե կառուցում...
 — Պապի վրեժն ե լուծում...
 — Լաչինն աղջիկ չովեց...
 — Խեղճվե՛լ ե խեղճ տղեն...

Ով պաշտպանում եր, հավատում Ալեքսանին,
 Արդեն գտել ու միացրել եր սերմացուն:
 Ով չեր հանել վոչ մի հատիկ իրա տանից,
 Նա Սանթրոսին եր պաշտպանում, հավատ տածում:
 — Յես էլ քննեմ հարցը սրա, — ասավ Կարոն, —
 Իսկ մինչև այդ, այս գեղեցիկ արև ուրով,
 Յերբ կատաղած բուքը հաղիվ ե հանդարտվել:
 Պետք ե շտապ հորիս բանալ, սերմը գտել:
 — Ի՞նչ եք գոռում մասսային...
 — Հեռագիր կա Մոսկվայից...
 — Վոր կոլեկտիվը ցրեն...
 — Կոմ կուսըջիջն ել վրեն...
 — Խաբում եք, մեզ թալանում...
 — Սերմն ու տավարը տանում...
 — Յեթե Սողոն չի ստում, —
 Ինչո՞ւ ինքը չի գաում...

— Սողոն գտում ե հրեա ..

— Ձեա հավատում, գնա՝ տես...

Աղմկելով պնացիւն դեպի Սեանենց տուն,
Ուր անդադար սերմագտիչն եր աշխատում:

Սողոն, իրոք, իր սերմացուն գտել, հետո
Լցրել հատուկ իր ջվալները սեփական,
Դարսել եր ջոկ ու քիւլական հաստ մատիտով
Բոլորի վրա գրել — «Սողո Աբրահամյան»:

— Իմ անունս ել գրեք վրեն, —

Բացականչեց Մուշեղ ամին. —

Վոր եղպես ե — սերմս բերեմ: —

Ու դուրս թռալ վոնց վոր քամի:

— Յեթե անուն կար գրելո՞ւ...

Բաս եդ վոնց եք իմս խառնել: —

Խաչոն հուզված շարժեց գլուխն.

— Ե՛... ես չեմ, բարեկամներ...

Ու Գարսեվանը հոգնած ու տրտում

Ուշ յերեկոյան տուն վերադարձալ:

Դեռ զնգում ե զիլ այրը՝ ող գլխում

Աղմուկը կանանց վորպես սուր մի ցավ:

Նիստը խառնեցին մի ակնթարթում

Ու հարձակվեցին դոմերի վրա:

Վոնց եյին իրար մազերը փետտում,

Վոնց եյին գոռում, գզգզում իրար...

Արեւի կիւնն եր՝ ամենից առաջ

Յեղներն արձակեց, քչեց դեպի տուն:

Այդ նա յեր՝ նա յեր, բարձրաձայն գոռաց.

«Կորչի կոլլեկտիվ, բայլընիկություն...»:

Ներս մտան հուզված Նովրուզն, Ալեքսանն,

Մուքոն, Աղասին, Վասոն ու Շիրինն.

— Ե՛հ, ընկեր Կարոն դուր գնաց շրջան,
Նա կհամոզեր կատաղածներին:

— Վճնց կհամոզեր, ընկեր Աղասի, —

Հեգնեց Գարսեանն, — ինքներս ենք անում:

Յեա հազար անգամ Վաղոյին ասի.

Ախպեր, մոռացի Սիրիւրի անունն:

Իսկ նա բոլորին՝ «Սիրիւր կքշեմ»,

«Կամ կոլլեկտի հետ, կամ կուլակներին»:

Իսկ կատարածուն, են կակազ Նշեն

Տներն եր մանում՝ շամփուրը ձեռին:

Յեւ խուզարկել եր նա միքանի տուն.

«Թթթագցրել եք. հհհհհհնեք սերմացուն»:

Խաչոյի կիւնն ել տվել եր գլխին

Ու դուրս եր արել կակազ յերեկին:

— Ո՞վ ե թույլ տվել, — ասում եմ, — Նշե,

Վոր դու շամփուրով տուն ես խուզարկում:

— Բըբ... բրիգադն ե եղպես վորոշել, —

Ալեքսանը թե՛ «վոչ մի վորոշում»:

— «Յեա վորոշեցի, — ասում ե Նշեն, —

Բա հերիք չեմ կուլակին լսեն»:

Եսպես ե ահա մեր դիւցիպլինան:

Եսպես, ընկերներ, հեռու չենք գնա:

Կուլակն ել հիմա հենց այդ ե ուզում,

Վոր մասսաները մեր դեմ գրգռի.

Հենց այդ եր այսոր կանանց ժողովում

Մտքեր խմորեց, բորբոքեց կռիվ:

— Հապա, Սողոյի ջվալները... հե՛չ...

Դարձել ե գյուղում մատի փաթաթան, —

Պոռթկաց Ալեքսանն. — Ու ինքն ել ճղեց,

Յերբ ծղրտալով կանայք զոմ մտան:

Յեվ յեթե Ջարին վրա չհասներ,

«Պուճուր» վաղոյին կքրքրելին:

Վոնց ելին ճչում... վայ, անիծվածներ...

Բայց լավ են լսում ընկեր Ջարեյին:

Մուքոն բորբոքելեց.

— Ինչքան ել ճչան՝

Մենք մեր կոլլեկտիվն առաջ կտանենք:

Արելի կինն եր՝ են քած կշկշան՝

Կանանց գրգռել ու խելքից հանել:

Բայց յեթե ինքը — սղամարդն ուզի,

Կարող ե իրա, կնկան հասողի:

Բաս վոնց ե, իմ կինն աղմուկ չի հանում,

Շատ ել տանը հա չեմ-չում ե անում:

— Ախար Արելին թվ հանեց միջակ,—

Մղկըտաց Շիրինն ու կանգնեց վոտի —

Վոսկի ունի նա թաղած, մարի տակ,

Չարչին ե հերվա տխար, շանվորդին:

Հիմի թաղցրել, միջակ ե գրվել,

Ու կոլլեկտիվի աղիքը խրվել

Վոր թունավորի, քանդի, քայքայի,

Բերի, դուրս հանի իրա թափային:

Բն արաղ ծախող Ժամհարի Սամոն,

Բն մուլթա-խորակ Չուռնաչի-Չաքին,

Բն Չաթնանց Գեվոն, են ել կոմսոմոլ —

Այ թե ովքեր են խորթ ու խառնակիչ:

— Չե, պետք ե, Սեան, կատարել զտում —

Պնդեց Վասակն իր տեսակետն ելի:

Ավելի լավ ե մնա հարյուր տուն,

Բայց իրար կպած ու անդրդվելի:

— Ժիշտ ե, յիս դեմ չեմ զտումին, Վասակ,

Կարոն այդ գործով գնաց Ալափարա:

Հարցը շրջկոմում նա լավ կքննի.

Հենց վոր յետ յեկավ՝ կանցնենք զտումին:

Այո, կոլլեկտում կան մի շարք տարրեր,

Վոր կոլլեկտի դեմ թույն են խմորում.

Պետք ե անպայման զտում կատարել

Նաե քջիջում ու կոմսոմոլում...

Յեվ նստած անքուն մինչև լուսաբաց՝

Քննում են զտման թեկնածուներին:

Բորանն ե դրսում վոռնում զաղաղած՝

Չարկվելով փայտե խարխուլ դռներին:

ՏԱՍԵՐԿՈՒՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գ Լ Խ Ա Պ Տ Ո Ւ Յ Տ Ի Յ Հ Ե Տ Ո

«Ափսոս, դժուար է աշխատել, դժուար է լինել... ընկեր Ստալին...» —
Ստալինը մտքում կրկնում է վշտահար, —
«Դե արի յետ նահանջի և ես զարմացալիս
Խոստովանիլ ամեն տեղ սխալ, սխալ, սխալ...»:
Ու լրագրի ճակատից նայում են խստադեմ
Այն անողոք հողվածի տառերը վիթխարի:
Ցեղ ինչ վիրավորական վերնագիր է գտել:
«Գլխապետ» (հասկացա՞ր) հաջողություններից:
Ցեղ տեսակետն է հայտնում նա շրջումի նիստին:
Պետք է, այո, նահանջել բոլոր կոլխոզներում:
Իսկ կենտրոնի ցույց տված սխալների մասին,
— Պետք է ասել, վոր դրանք մեզ չեն վերաբերում:
Չենք կատարել այնպիսի քաղաքական սխալ,
Վոր բանաձև ընդունենք, բարձր խոստովանենք:
Չի կարելի ամեն ուր խոստովանանք խաղալ,
Ավտորիտետը գցել ու վտանակոխ անել:
Սակայն ընկեր Սամսոնի կարծիքը չանց կացավ
Իր սխալները բոլոր շրջկոմը այսպանց
Ցեղ ակտիվի ժողովում կարդաց բարձրաձայն՝
Ազգանունը Սամսոնի հոլովելով անվերջ:

Ու կենտրոնը յետ տարավ նաև քարտուղարին՝
Նրա մի շարք կոպտագույն սխալների համար:
Նա հրահանգ եր տվել գյուղեր մեկնողներին.
«Քսանչորս ժամվա ընթացքում... համատարած»:
Ու հեռավոր եր հղել ընկեր Ստալինին,
Իսկ պատճենն էլ ուղարկել Հայաստանի կենտրոն,
Թե հասել ենք ու անցել Վոլգյան շրջաններին
Ալափարսի չքավոր-միջակների կամքով...
Ու գյուղերում, ժողովներում,
Փողոցներում, թերթերի մեջ
Կոլխոզական կյանքն է յեռում
Հոսանքներով իրարամերժ:
Նոր է ծնվել ընկեր Սողոմ,
Ու դեկն առել գյուղխորհրդի.
— Ցեղ են գլխից եյի գոռում,
Ձոռ միք անի ժողովրդին:
Քսանն է, հիմա քավոր Մուշեղ,
Տար ու կթիր կովդ ծնած:
Ընկեր Ստալինն է վորոշել.
Ուղես, կոլխոզ ել չես գնա:
— Հա, քեզ մատաղ, ընկեր Սողոմ, —
Գոչեց Մուշեղն ուրախ-ուրախ —
Հենց շրջանում ունեմ բողոք
Եղ Մանասի տղի վրա:
Նա յեր, ախպեր, վոտքի հանել,
Ո՞վ եր թե չե կոլխոզ չեկող:
Մի գիր գրի գործկոմ տանեմ,
Նախագահին տամ իմ ձեռքով:
Գարսեանն է, ասեմ պիտի

Գլխապտուկս ու քյալագոյո՞ղ:
Իսկ մեր Սողոմն ժողովրդին
Ձի ել ասել՝ արի կոխո՞ղ:
Պխտի ասեմ՝ Գարսեանին
Գյուղից քշեք, վոր դինջանանք:
Հերիք զոռով կոլկո՞ղ տանի,
Խեղճից հանի խալխի կանանց:

Յեւ անհանգիստ գյուղի վրա
Գիշերը սև նստել ե թուխս:
Վիճում են դեռ քնահարամ
Ամեն գյուղում թե խոճիթում:
— Աչք ես տնկել, համ սրիկա,
Մանասի շոռ Գարսեւանին: —
Տեղաշորում կնկա վրա
Փշշում ե դեռ Մուշեղ ամին:
Կանայք ենոք ասլան դառած
Իրենց տավարը յետ բերին.
Իսկ դու, սարսաղ, տանդ սառած,
Աչք ես տնկել խալխի ձեռին:
— Ի՞նչ ես ուզում, մարդ, ինձանից: —
Աղաղակեց կինն անհամբեր: —
Յես կոխո՞ղից դուրս չեմ գալիս:
Քո տավարն ե — դու գնա բեր:
Մուշեղ ամին խիստ վրդովւած՝
Տվեց քացով կնկա կողին.
— Հաւամ լինի եսսլիսի հաց,
Եսսլիսի կին ու անկողին:
Վեր կըկենամ — կաղնի փետով
Կողն ու մողդ կտրորեմ:

Ինքս բերեմ համ, վոր հետո
Կուլակ ասեն ու աքսորեն...
Եգուց կերթաս ե — հասկացար —
Յեզնւրս յետ կապահանջես:
Կասես, մարդս չատ ե հոժար,
Ինքս, կասես, համաձայն չեմ..

Գոմի հողում, ամբողջ գիշեր,
Բուխարիկի կրակի մօտ,
Քեռի Մուքոն խոսում ե դեռ,
Ու համոզում՝ համառ կնոջ:
— Լսիր, ան գիժ, դարդ մի անի,
Թող բացատրի ընկեր Կարոն.
Յես քեզ ախար հո չեմ տանի
Կորստաբեր ճանապարհով:
Խարթիկ եմ քեզ յերբ ե իցե,
Կամ ցանկացել եմ վատը քո.
Ինքս ախար մի բան գիտեմ,
Գործ եմ անում համոզմունքով:
Այ, ես մարդուն հանել բանից,
Ուղարկել են մեզ ոգնելու:
Լսիր, թող նա պարզաբանի,
Թե կոլկոտի՞ն ինչ ե բերում:
Ու փախսի վրա նստած
Մուքոյի պես ծալապատիկ՝
Ընկեր Կարոն ուրախ ժպտաց,
Պատմեց հետո հատիկ-հատիկ:
Պատմում ե նա մաշինի մեծ,
Աղատարար ուժի մասին,
Բանվորը յերբ նրան տիրեց

Ու կոլխոզնիկ նոր գյուղացին,
Պատմում է նա միասնական
Աշխատանքի ուժի մասին,
Վոր գետերին նոր հուն կտա,
Ձեռք ու իմաստ ապառաժին:
Մինչ ուշ գիշեր պատմում է նա:
Ու հարևան յերկու կանայք
Համառ նստած լսում են դեռ՝
Տալով կրկին ծանոթ հարցեր
— Ասա, ախպիր, չի՞ կարելի,
Տրակտոր, մաշին ելի բերեն,
Տան չքավոր-միջակներին
Ու կոլեկտիվ ել չգրեն:
— Ձեռք ալ քույրիկ, մի տրակտոր
Գեղի կեսին հերիք կանի:
Ել վճնց կարա մի չքավոր,
Թեկուզ միջակ, գլուխ հանի,
Նա կամ անգործ պիտի գցի,
Ու ժանգոտի պատերի տակ,
Կամ թե մարդկանց շահագործի
Ու մի տարում դառնա կուլակ:
Եդ հո չեւով, ընդհակառակ —
Մենք վերացնում ենք կուլակին,
Վոր մեր ազատ հողի վրա
Մարդը մարդուն չպլոկի:
Ձեռք — մեքենան մեծ, միացյալ
Տնտեսություն է պահանջում,
Հող է ուզում լաֆնածավալ,
Վոր մեջ ընկած բանի անդուլ:
— Եհ, ձեր լեզվին չենք դիմանա,

Մարդիկ եք դուք ուսումնավոր: —
Ու հարևան յերկու կանայք
Դուրս են գնում ծիծաղելով:
— Ձեռք, — կրկնեց Մարթա աղին, —
Յես կոլեկտիվ չեմ գա, ասի:
Ձեռք բաժանվի իմ կթանից,
Կբաժանվեմ յես քեզանից:
Ու վեր կացավ շորորալով
Տեղաշորեր բերեց տնից,
Փռեց վառվող բուխարու քով,
Վոր բեղարած հյուրը քնի:
Ու դիմացի թախտի վրա
Փռեց ուրիշ մի անկողին:
Փչեց ուժգին նավթի ճրագն
Ու մեկնրվեց մարդու կողքին:
— Ասում ես, բա կբաժանվեմ, —
Հանաք արավ Մուքոն մթնում: —
Ահ ես տալիս ցերեկն անլերջ,
Գիշերն ելի տեղս մտնում:
Կոպերը պինդ փակեց կարոն,
Վորպեսզի շուտ քունը տանի:
Բայց ցնորում է խավարում
Դղիւղը խուլ՝ գործարանի...

Կողն է քերում Հովաս քեռին,
Շուռ-մուռ գալիս տեղաշորում,
Բայց չի գալիս քուն աչքերին,
Ջար մտքեր են գլուխը փորում:
Դրո՞ւմ շներն աղմկալից
Մարդահաջ են տալիս անվերջ:

Ո՞վ ե գյուղում գնում գալիս
 Ես ցուրտ ու մութ գիշերվա մեջ,
 Չարագուշակ ե մարդահաջն
 Ուշ գիշերվա՝ եդ շների:
 Հիշում ե՝ տաս տարի առաջ
 Եսպես եյին հաջում ելի:
 Եսպես եյին ելի հաջում
 Ու կատաղած վրա տալիս:
 Ամբողջ գիշեր գեղամիջում
 Մարդիկ եյին գնում գալիս:
 Յերբ մութ ու լուս առաւոտյան
 Գյուղը հանկարծ գրավեցին
 Ու կատաղած տներ մտան
 Յերկու Արամն Արգաթյանդցի:
 Տներ մտան, ումը գտան,
 Հայոցիւղով դուրսը բերին:
 Ձեռքը գոռով տվին հրացան
 Ու գոռացին,
 — Հայդա, կռիվ...
 — Ո՞ւմ դեմ, ախար, այ ձեզ մատաղ, —
 Հարց եր տալիս Հովաս քեռին,
 Ու յերերում քնաթաթախ՝
 Անգլիական զենքը ձեռին:
 — Գաա կռվի, ու կիմանաս, —
 Փշաց Աբելն ու կատաղի՝
 Ձին մտրակեց՝ առաջ գնաց,
 Մարդ հավաքի վերի թաղից:
 Ու Դամաշին դեռ չհասած,
 Դեռ չկռված, ընկան գերի:
 — Այստեղ բերեք, — են մեկն ասաց, —

Եդ խմբապետ — դաշնակներին,
 Լավ վոր Սևանն այնտեղ եր դեռ
 Բաղնիկյան եդ բանակում:
 — Թողեք գնան, — ասավ, — ախպեր,
 Յես սրանց լավ եմ ճանաչում:
 Ու բռնեցին միայն մի ռուս
 Ոֆիցիրի և Աբելին:
 Իսկ Արամներն արդեն վաղուց
 Իրենց խմբով ճղել էյին:
 Իսկ Ժողովուրդը մոլորված,
 Անվնաս տուն դարձավ նորից:
 Ազատ շնչեց քեռի Հովասն
 Ու կարծես, նոր ծնվեց մորից:
 Նույն մարդեկ են ելի այսօր
 Ուշ գիշերով գնում գալիս:
 Ինչ վոր մի չար, խորհրդավոր
 Լուր ե դրսում շրջում ելի:
 Չաթնանց Բեյրութն ու չիլ-Մանուկն
 Ես մի շաբաթ գյուղում չկան:
 Ասում են՝ կապ են սրահպանում
 «Կենտրոնի» հետ դաշնակցական:
 Նախկին զոռքեք փրփրակալած
 Ման են գալիս շրջաններում:
 Ամբողջ գիշեր շահալած
 Գնում գալիս, զենք են բերում...
 Կոլխոզի դեմ են կատաղել,
 Մի որ հանկարծ վրա կտան...
 Հովաս քեռին փշաքաղվից՝
 Նախազգարով մի մութ վտանգ:
 Յեթե վտանգ ե սպառնում

Խորհրդային իշխանության...
 Միակ վորդին կոլլեկտիվում...
 Ինքը՝ ակտիվ փոկի անդամ...
 Յեթե հանկարծ են ատելի
 Հայկ — Արամները դան, տիրեն...
 Կը գոռաբանան Չաթնանք ելի,
 Քաբափն ելի յետ կը խլեն:
 Գուցե իրան և իր վորդուն
 Հենց Քարափում տան սպանեն.
 Վարկով առած յեղը թոսուն
 Դեռ չլծած՝ գոմից հանեն:
 Սև տեսիլն եր... ու շների
 Մարդահաջը սիրտ ե քերում:
 Վեր ե կենում Հովաս քեռին
 Նստում ելի տեղաշորում... —

Ցուրտ ե, ցուրտ, գիշեր: Մութ համառարած:
 Ու ժայռերը ցից, մոտիկ ու հեռու,
 Առնում են հաճախ մարդու կերպարանք,
 Վոր մոտենում ե կարծես խավարում:
 Ու գյուղի ծայրին՝ ամուր փաթաթված
 Վոչխարի մաշված մուշտակների մեջ,
 Ճամփի յեզերքի փոսերը մտած,
 Սպասում են մի խումբ կոմսոմոլիստներ,
 Հայացքները սուր բեռած միթին,
 Հրացաններն ամուր սեղմած ձեռներում,
 Սպասում են նրանք Չաթնանց Բեյբուլթին
 Վոր սողոսկում ե միթին լեռներում:
 Գնացել ե նա, վոր զինք ձեռք բերի:
 Այդ մասին գյուղում բոլորը գիտեն:

Գիտի զենք բերի, վոր կուլակներին
 Չինի արշավող սոցիալիզմի դեմ:
 Պահել ե, գիտեն յերեսուն հրացան:
 Չեն կարող, սակայն, հաստատել վրան:
 Ուրեմն պետք ե բերելիս բռնել:
 Հենց դրա համար նրա մութ ճամբան,
 Բռնել են մի խումբ կոմսոմոլիստներ:
 Բայց չի յերևում միթում դեռ վոչով,
 Ցից, մարդանման ժայռերից բացի:
 Քամին ե միայն սառցահար պոչով
 Մարից արշավում վորպես վայրի ձի:
 Ու Վասոն հենված հրացանի փողին,
 Խավարն ե զննում ուրախ տապնապող:
 Ու միտքը վորպես քամին կատաղի,
 Թռչում ե հեռու կայծակի թավով
 Դեպի հեռավոր յեղերքներն իրա
 Սոցիալիստական մեծ հայրենիքի,
 Ուր շողջողում են զիրքերի վրա
 Սվինները սուր կարմիր բանակի:
 Ուր դեռ յերեկ եր, վոր հերոսական
 Հարված հասցրին Չին-Արեելյան
 Դեղին, սպիտակ գեներալներին:
 Ու Խորհուրդների հանրապետության
 Փառք ու զորավոր հաղթանակ բերին:
 Վողջուն ե տալիս ընկեր Բլյուխերին
 Կոմյերիտ Վասոն արթուն յերազում
 Յեվ աչքը հառած ճերմակ խավարին՝
 Մարտական գրոհի ժամին ե սպասում:
 Հիմա կհրեա միթում թշնամին —
 Չաթնանց Բեյբուլթի խումբը սրկիա,

Վորը չի թեպետ գեներալը չին,
Սակայն հեռավոր մասնիկն է նրա:
Նույն է թշնամին — Չին-Արեւելյան
Ճակատից մինչև այստեղ — Քարաշամբ:
Դասակարգային նույն արյունը վա
Պայքարն է սրվում նույն ատկութեամբ:
Յեւ այդ պայքարում, ամբողջ աշխարհում,
Պալքարի բոլոր հրապարակներում,
Բարիկադներում, գործարաններում
Ու կոլխոգական անալի գաշտերում —
Բանակը Կիւմի քայլում է հրապարտ,
Վորպես պայքարի արթուն ավանգարդ:
Ու Վասոն մտքի պայծառ աչքերով
Տեսնում է վորոգ, վոր Խորհրդային
Իր հայրենիքի բոլոր կողմերում —
Հենված հրացանին, գրչին, դադգյահին —
Նույն կովի արթուն գիրքերն են բռնել,
Նույն բայլչիվիկյան խանդով են յեռում
Հաղար ու միլիոն կոմսոմոլիստներ:

Իսկ այդ ժամանակ Գարսեանն արթուն,
Լամպի լույսի տակ, լարված ու լռին,
Յերկրորդ յերկաթե հողվածն է կարդում. —
«ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ ԿՈՂՍՈՉՆԻԿՆԵՐԻՆ»:
Քուրսու չորս բոլոր — ճառագայթաձև
Փռած շորերը հողե հատակին,
Հաստ վերմակներում ամուր փաթաթվել,
Քնել են վաղուց յերկրա ու կին:
Որորոցի մոտ քնել է Չարեն:
Բայց նա չի յուզում խանդարել նրան:

Զարուհին այսոր շատ է բեղարել
Կանանց ժողովում հուզված, փրփրած:
Ու ծերուկ Բարթոն խոմփում է բամփ,
Մեկ-մեկ քնի մեջ քամակը քորում:
Կարդում է Սեանն անդուլ տքնութեամբ,
Հեան էլ ձախ վոտով մանկանն ուրորում:
Կարդում է համառ և նրա մտքում
Նորից է բացվում պայծառ առավոտ:
Սե ամպի նման կասկածը ցնդում,
Ժպտում է ուղին կրկին արեդու:
Կարծես Քարաշամբ գյուղումն է գրել
Արթուն զեկավարն այդ տողերը կուռ:
Կարծես Սեանի մտքերն է սրել,
Դարձրել ափելի հստակ ու մաքուր:
✓ Ո՞վ է դուրս գնում, իրավ, կոլխոզից,
Ամենից առաջ մեռած հոգիներ:
Զուռնաչի — Զաքին, հայանի պարագլու
Յեւ նրա նման մի շարք Զաքիներ:
Յեւ հիմ «կորցրեց» կոլլեկտիվն ելի.
Խորթ, թշնամական մի քանի մարդու,
Թագնւլած կուլակ Զաթնանց Արեւին,
Վոր կուլակների ճամփան եր հարթում:
Այո, գնացին Մուշեղն ու Գարսան,
Անաստաս քիձան ու Վարդան ամին:
Յեւ չի կարելի անվանել որանց
Վոչ մեռած հոգի, վոչ էլ թշնամի:
Նրանց հեռանալն, այո, կոլխոզի
Կորուստն էր ծանր, բայց վոչ մշտական:
Մենք նրանց այսոր դեռ չենք համոզել,
Վաղը կհամոզենք և նրանք կգան:
Այո, այսօր ամառը չեր լուկ Հաբիք:

Այլե բարերար, կաղզուրիչ ժաղում:
 Սպասիր, Սողո, նա կծիծաղի,
 Ով վոր ամենից վերջն է ծիծաղում:
 Ու Սեանն արթուն, լամպի լույսի տակ,
 Հափում է թերթի սյունակները նեղ,
 Յեվ նրա գլխում դառնում են հստակ,
 Վառվում են վորոշ — մտքեր, ուղիներ:
 Վաղը նա կելնի ու գինված արի —
 Մեծ դեկավարի պայծառ մտքերով՝
 Շարժումն անսասան կը դեկավարի,
 Կկազմակերպի վճռական գրոհ...
 Ու հետզհետե քունը ծանրաթե
 Գոցում է կապտած կոպերը նրա:
 Ու Գարսեանը քնում է արդեն՝
 Գլուխը դրած հոգւածի վրա:
 Յեվ այդպես հիմա ամեն խրճիթում,
 Ամեն ժողովում լարված ու լռին
 Այն հոչակավոր հոգւածն են կարդում.
 «ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ ԿՈՒՈՋՆԻՎՆԵՐԻՆ»
 Ամեն մի բանվոր, ամեն կոլխոզնիկ,
 Ամեն կոմունիստ, կոմյերիտական, —
 Կրում է այն իր գրպանում հիմի,
 Վորպես գրոհի կանոն ու պատգամ:
 Այդ դասակարգի փորձն է հարաճուն
 Կենտկոմի հզոր ձեռքում կուտակվել.
 Այդ մեր լենինյան հանճարն է հնչում
 Ընկեր Ստալինի ձայնում պողպատե:
 Այդ դասակարգի հանճարն է հստակ,
 Վոր վորպես հսկա, պայծառ լուսարձակ
 Լուսավորում է պայքարի ուղին,
 Հավատ ներշնչում պայքարողներին:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԲՈՒՆՅՈՒՆԵՐԸ ՍԵՂՄՎՈՒՄ ԵՆ

Գիշեր է մութ, համատարած:
 Փռվել է դյուղը ցիր ու ցան.
 Բերդի յեան, բերդի առաջ,
 Գետի ամբողջ յերկարությամբ:
 Այդ մութ ու խուլ գիւղում հիմի
 Չափում են լուռ, միաժամանակ
 Իրենց ուժերը — թշնամի
 Յերկու աշխարհ, յերկու բանակ:
 Ու հավաքված Արեւի մոտ
 Տերերը հին՝ Քաջաշամբի
 Դեռ սպասում են լուռ, թունոտ,
 Սուղիեցի տեր-Արշակին:
 Կլանչում է շունն ելի մթնում:
 ✓ Դուրս է վաղում Արեւն արագ:
 ✓ Տերտերն ահա ներս է մտնում՝
 Չեռքին լեցուն ատրճանակ:
 Միւրուք չունի, նոր է սափրել
 Ու բաց նամակ հղել թերթին,
 Թե չի ուզում ելի խափել
 Աշխատավոր ժողովրդին:

Պահել ե մոռթ սրտում, սակայն,
Ատերությունը թունալի,
Ու գալիս պես հալածական՝
Նա գյուղից-գյուղ ման ե գալիս:
Շրջում ե նա այժմ թագուն,
Վորպես դաշնակ քարոզախոս:
Իրենց ուժերն ե հավաքում
Տերտերական իրա վոխով —
Այն աշխարհի դեմ, ուր չորանն
Ու տավարածը գրիչ առել,
Ու յերեկվա հեգ ու անբան
Վոչխարն ահա գայլ ե դառել...
Ընդդեմ այն պիղծ իշխանության
Վորը ժանիք տվեց գառին,
Յեւ այն սրում ե անդադար,
Վոր նա բռնի ու պատառի...

Նա հառաչեց մշտով խորին
Լռեց կրկին չարագուշակ,
Հետո նայեց ներկաներին
Գավաղրական զգուշությամբ.
— Բարդ ե, ասի, անհուսալի:
Կենտրոնից նոր խաբար չկա:
Խաբում են մեզ ու չեն գալիս
Այդ բանակները յեկրոպական:
Հիմա ամեն տեղ ել անվերջ
Խառնակություն ե, ճգնաժամ.
Այդ նղովյալ բայլիկներն
Ահ են լղբել ամեն աշխարհ...
Հայ հեռ... մինչև նա իրա տանն

Ահ տա ու մահ — իրա ցեցին,
Մինչև հասնի մեզ ոգնության —
Մեր խաչապաշտ յեկրոպացին. —
Սրանք իրենց այս նղովյալ
Կոխոգն արդեն կամրացնեն:
Կառնեն մեզնից տավար ու մալ
Ու մեզ գյուղից կթուցընեն:
Են վախտ ել վոչ մի տերություն
Սրանց ուժին չի դիմանա:
Թեկուղ հանեն Մոսկովի դեմ,
Ինչքան կուգեն թոփ ու բանակ:
Վայ մեր որին, վայ աշխարհին,
Վայ հավատին, յեկեղեցուն,
Յեթե սրանք ամրացըրին:
Համատարած կոլխոդացում:
Վոչ, յեղբայրներ, կյանքի, մահի
Որհասական ժամն ե հասել:
Հավատացյալ Յեկրոպային
Մենք շատ իզուր ենք սպասել:
Նա կհասնի այն ժամանակ,
Յեթե մերոնք ապստամբեն:
Յեւըը այսոր այս ե միակ,
Կենտրոնն ե այս հրահանգել:
Չպետք ե մենք թողնենք, վոր այս
Գարնան սրանք վարեն, ցանեն,
Ամեն միջոց ի գործ դրած՝
Պետք ե քանդել ու կործանել:
Յեթե սրանք իրենց գարնան
Ծրագրները կատարեն,
Հացը հանդում սրանց մնա,

Հանգիստ քաղեն ու ամբարեն —
Անհաղթելի ուժ կդառնան,
Ուշ կլինի այնուհետև,
Չպետք է, չե՛ս, սրանք գարնան
Մի հատիկ սերմ արտը նետեն:

Շունն է հաջում դրսում ելի:
Լըռում է նա փշաքաղված:
Աբելն զգուշ զուրս է գալիս,
Մարդ է կարծես մթնում պահված:
— Ե՛յ. հեռացիր, թնչ ես անում,
Ո՛ւր ես յեկել ուշ գիշերին,
Ինչո՞ւ յես շան հերսը հանում...
Վահ, դժւ յես եղ, Հովաս քեռի:
Վախեցըրի՛ր, այ հալւոր,
Յես ել ասի, գող է յեկել:
Ինքս ել վաղուց քնած եմ խոր...
Ես շճւն ինչու չիմ արձակել:
— Յես եմ, Աբել, մի վախենա. —
Պատասխանեց Հովաս քեռին... —
Ու բնազդաբար յետ-յետ գնաց՝
Պինդ սեղմելով փայտը ձեռի. —
Շները փիս հաջում եյին:
Չեյի կարում հանգիստ քնել:
Ասի՝ չլինի ուշ գիշերին
Գողն է նորից մտնում տըներ...
Քե, յես գնամ, գիշեր բարի,
Գուցե մի կերպ լուսացընեմ:
Գիշեր չելավ, ելավ տարի,
Այ անիծված, անքնւն շըներ...

Իսկ այդ ժամանակ գյուղի դպրոցում
Գյուղկուսըջիջի և կոմսոմոլի
Խառն դանափակ ժողովն է ծեծում
Մարտական հարցերն ելի ու ելի:
Բոլորն են ներկա՝ Սողոյից բացի:
«Հիվանդ եմ» — ասավ ու յելավ գնաց:
Ու կոմսոմոլից Գևորն ներկա չի,
Չնայած նրա հարցն ել է դրված:
Յեվ ընկեր Կարոն խոսում է, կարդում,
Պարզում պատասխանն ընկեր Ստալինի,
«Մեր յեվ կուլակի միջեվ հաճոքյուն
Չի յեղել յերբեք յեվ չի յել լինի»:
Իսկ ընկեր Սողոն, վ-ր հերոսությամբ
Ջրկում եր ձայնից միջակ Հաչինին,
Ասխախտ է պահել կուլակի ամբարն
Ու «հիվանդացել», քնել է հիմի:
Չեղավ, ընկերներ... — մինչև յիրեք ու
Կուլակին տրված պլանն ավարտել:
Թերացողներին հուպ տալ որենքով,
Թագցըրած հացի տեղերը պարզել:
Վաղը հրավիրել կոլխոզի, գյուղի
Չքավորական անհապաղ նիստեր,
Գարնանացանի թվերն ստուգիչ
Քննել նիստերում, պարզել, հաստատել:
Վաղն հարվածային կհայտարարի
Մեր կոմսոմոլի բջիջն ինքնիրան.
Ու բայլընիկյան առաջին վարին
Հանդը դուրս կգա մի մարդու նման:
Վաղն Ալափարսի կոլտնտեսության
Սոցիալիստական մրցման կկանչենք,

Առաջինը ով կըծի գութան,
Ով կկատարի պլաններն անթեք:
Ճիշտ ե, ընկերներ...

— Ճիշտ ե... — Շողացին

Աչքերը նավթի լամպի մշուշում
Ու գծագրվեց գիմպի պատին
Դեպի վեր ձգված բռունցքի մի շուք:
Ու կոմսոմոլի քարտուղար Վասոն
Հարց բարձրացրեց Գևորգի մասին.
— Գեոն, ընկերներ, չի յեկել այսոր,
Ձնայած նրան հատկապես ասի,
Թե յեկ, կարևոր նիստ ե այս գիշեր,
Թե պիտի քննենք հարցը անպայման:
— Դասարիք ե նա...

— Վտարել ..

— Քշել...

— Նա ել ե «հիվանդ» Սողոմի նման:

— «Նա միայն հիվանդ ու զասարիք չի

Այլ յենթակուլակ, ալի դավաճան:

Այդ նա յեր, յերեկ մասսայի միջին

Գոռում. — «Մեր գյուղում կուլակներ չկան»:

— Ընկերներ — ասավ Սևանը կրկին

Կուլեկտիվն եր այն հայելին հստակ

Վոր ցույց ե տալիս յերեսն ու հոգին

Սմեն մի մարդու թե կեղծ, թե շիտակ:

Հարցը Սողոմի վաղուց ե հասել:

Կոլխոզումն ե նա, թե կոլխոզում չի:

Դրսում, մասսային, մի բան ե ասել,

Այլ բան ե յերգում ներսում, բջիջին:

Բայց վաստ ե համառ. նա իր սերմացուն

Դեռ մինչև այսոր պահում ե իր տանն,
Իսկ հայրը գյուղում սոռտ ե տարածում,
Թե Ռուսաստանում կոլխոզներ չկան:
Յեվ ընկեր Կարոն ամփոփումն արավ.
— Վաղն յերեկոյան, դռքաց նիստում,
Միջակ-չքավոր մասսայի առաջ
Անարգ, խայտառակ, նրանց քշել դուրս
Կուսակցությունից ու կոմսոմոլից:
Ճիշտ ե ընկերներ...

— Ճիշտ ե... — Շողացին

Աչքերը լույսի մշուշում դեղին.

Ու պատի վրա հզոր դողացին

Ձիւք բաղրակների շվաքները խիտ:

Յեվ կուսըջիջի քարտուղար Սևանն

Առաջարկ արավ բյուրոյի կողմից.

— Դավաճաններին փոխարեն՝ ահա

Ձեզ մի անձնվեր, մի նոր կոմունիստ:

Աշխատում ե նա հերոսի նման

Հացամթերման հանձնաժողովում:

Այն որվանից՝ ինչ կոլխոզումն ե նա,

Ձի ցուցաբերել ե վոչ մի շեղում:

— Մենք յերաշխավոր ենք Ալեքսանին,—

Բացահանչեցին Ջարիկն ու Վասոն,—

— Յոթ Սողոմի գործ ուղենաս կանի:

— Բոլշիկ ե նա հարյուր տոկոսով:

— Պետք ե ընդունել կուսակցության մեջ

Նաև Մուքոյին:

— Նաև Նովրոզին:

— Նրանք ել վաղուց գիմում են տվել...

— Սյուններն են կայուն նրանք կոլխոզի:

— Վաղը կոլխոզի ընդհանուր նիստում
 Նրանց հանդիսով կտանք բջիջին:
 Այսպես, ընկերներ, մեր կուսակցությունն
 Ընտրում է լավեր լավերի մեջից:
 Յեւ խիտ սեղմելով շարքերն անսասան՝
 Մենք կհարձակվենք կուլակի վրա:
 Կոլխոզից յերեկ վոմանք դուրս յեկան,
 Այդ մի քիչ պնդեց դիրքերը նրա:
 Բայց, ինչպես ընկեր Ստալինն է ասում,
 Մենք գիտենք, ովքեր՝ ինչու դուրս յեկան,
 Այժմ մաքրված, ամուր կոլխոզով
 Առաջ կը տանենք գործը հաղթական:
 Ճիշտ է, ընկերներ:

— Ճիշտ է... — Շողացին

Աչքերը լույսի ու ծխի մուգում:
 Շվաքները խիտ պատին դողացին:
 Մարդահաջ տվեց հայաթում մի շուն:
 Մի ստվեր յերեւոյց պատուհանի մոտ:
 Հետո անվստահ դուռը թակեցին:
 Տիրեց ժողովում լռություն, շփոթ:
 Մեկը ձեռ տարավ ատրճանակին:

— Յես եմ, տղերք, դուռը բացեք,
 Գաղտնիք ունիմ կարեւոր: —
 Ու ներս մտավ Հովաս բիձեն՝
 Գուշնը թռած, հեալով: —
 Աբելի մոտ ժողով արին
 Վողջ կուլակներն ես գիշեր:
 Ախր, յես մեր խորհրդային
 Իշխանության դեմը չեմ:

Դեզի տակին տափ եմ տալիս,
 Շնչակտուր աչք ածում,
 Տեսնեմ, մեկ-մեկ դուրս են գալիս
 Ու ծլկվում տնետուն:
 Խնքս տեսա իմ աչքերով
 Հայկարամենց Յերամին:
 Հետո անցավ Չոփուռ Սերոն,
 Վաղ եր տալիս վոնց քամին:
 Իմ աչքերով տեսա Չաթնանց
 Բելբութի հետ տերտերին:
 Մեկն էլ դեպի Սոլակ գնաց
 Ու հրացան կար ձեռին:
 Յերեկ գյուղում ասում եյին...
 «Սարեկներ կան սարերում...»:
 Նրանք իրենց բանդիտներին
 Հենց «Սառեկներ» են ասում:
 Իսկ Բեյբութին տերտերն ասավ.
 — Սառեկների մոտ գնա,
 Հենց վոր ցանքի վախտը հասավ,
 Վրա տվեք անխնա... —
 Վոր լսեցի, սիրտս թռավ,
 Մազերս բիզ կանգնեցին,
 Ու վաղ տվի վոնց վոր կրակ,
 Մերոնց ասեմ եդ մասին:
 Վերջացրեց Հովաս քեռին,
 Ու լռեցին մի վայրկյան:
 Ռեվոլվերի կոթը ձեռին՝
 Կանգնեց Կարոն հաղթական:
 — Կեցցես, — ասավ, — ընկեր Հովաս,
 Կատարեցիր պարտքդ դու:

Քուէն չենք մտել դիրքը թողած,
Մի վախենա, գնա տուն:

Ասում ես, թե կուլակային

Սառեկներ կան սարերում...

Հալ... Մենք ել մեր բազմներին

Մար կուղարկենք բերելու:

Մի վախենա, Հովաս քուր:

Կոլխոզ արի, հաշովիր:

Շուտ կվորսա սառեկներին

Անվախ բազմ բայլեհիկ...

— Կգամ, կգամ, ընկեր Կարո,

Տեսնում եմ վոր պիտի գամ:

Յես ել ոգնեմ իմ ուժերով,

Մեր հարազատ պետութայն:

Գիշերն ե փովել գյուղի տներին

Սե, հսկայաթի չղջիկի նման,

Ու գրգռելով խռպոտ շներին՝

Յեռյակն ե շրջում հացամթերման:

Ջարիկն ե, դինված, Ալեքն ու Վասոն:

Անցնում են վորպես մրրիկ թաղեթաղ:

Հիմա կուլակներն անքուն, վազով:

Հացն են թաղցնում բարեկամի տան:

Ու Հայկարամենց Յերամը կուլակ —

Հենց վոր տուն յեկավ գաղտնի ժողովից,

Յորենը թաղեց գոմում, մարի տակ

Ու խաչ հանելով մտավ անկողին:

Յերբ լսեց մոտիկ շների կլանչ,

Միտը թռթռաց աչից մի բոպե: —

Ու Փշշաց մթնում. — «հաց չեմ տա նրանց»

Կվառեմ թագուն, Ջանդուն կթափեմ...»:

Ժողովից հետո Աբելը մի պահ
Կանգնած մութ բակում՝ նայեց դեռ ու դեն:

Ավտոյի դռնոցն ականջին դիպավ,

Նա շունն արձակեց, ներս մտավ հոգեն:

Հմլվող սրտով լսեց... ահա նա —

Մոտեցավ աղմուկն ավտոմոբիլի:

Վորոշեց փախչել, գյուղից հեռանալ,

Բայց շունը բակում վռնաց սոսկալի...

Ել ուշ եր արդեն... դուռը թակեցին,

Նա դուռը բացավ խելագար դողով:

Ահավոր մի լույս դիպավ աչքերին:

Մեկը մոտեցավ նազանի փողով:

— Այստեղ այս գիշեր յեղե՛լ ե ժողով...

— Սուտ ե... ինձ վրա հնարել են շառ...

— Սհաւ ե... կտեսնենք, — ասավ նա վոխով,

Իսկ այժմ նստիր, ընկնենք ճանապարհ...

Ու ավտոն կաշուն ցեխերի միջով

Դուրս յեկավ գյուղից արագ, մանեման.

Հուլյսերը մթնում վառ շողացնելով

Յերկու ահագին սրերի նման:

Առավոտ կանուխ կատարածուններն

Յերամին շտապ տարան Գյուղխորհուրդ:

Նա զոհի խոնարհ յերես ընդունեց՝

Ջապելով սրտի չարութայունը մութ:

— Ե՛հ, ընկեր Ջարե, դադար չեք տալիս, —

Կմկմաց կամաց՝ սարսափը սրտում: —

Դե տարեք ելի՞, խփեք միանգամից,

Ի՞նչ եք կենդանի-կենդանի մորթում:

— Պլանդե հացի դու չես կատարել:

Եդ մասին խոսիր. — ընդհատեց Զարիկը: —
 Դու պետք ե տալիր հարյուր փութ ցորեն,
 Տվել ես մի քիչ բորբոսնած գարի:
 — Հաց չունեմ, չկա, աստվածը վկա,
 Տվել եմ տուրքի, աղուհավարձի:
 Լինե՞ր՝ կտալի, եդ հացին թքած,
 Իմ հացը ձեռն ե, հո ինձ համար չի...
 — Կեղծ լաց մի լինի... կեղծավոր լացով
 Կխաբես միայն դու պառավ կանանց:
 Իսկ ինձ պատասխան տուր միայն հացով:
 Թե չես ցանկանում գյուղից չքանաս:
 — Չկա, այ կնիկ...
 — Թագցըրել ես, բեր...
 — Վոր թագցըրել եմ, գտիր, ինքդ բաց:
 — Կբանձմ, — ասավ Զարեն: անտարբեր: —
 Տղերք, վերցրե՞ք սրան Ալափարս:
 — Կաց, Մանասի հարս, կաց, կվճարեմ...
 Կնկաս, յերեխիս, կծախեմ, կտամ:
 Անխոս գան եյիր, ասլան ես դառել
 Ու գյուղը, շրջանն առել վոտի տակ:
 Իսկ Մանասի հարսը, մեջքին նազան,
 Կարմիր թաշկինակն առատ մազերին,
 Հացամթերման ցուցակը ձեռին,
 Սառն ու անողոք նայում ե նրան:
 Ու հին, ազդեցիկ, հարուստ քեդխուհան,
 Դաժանաբարո «քավորը» գյուղի,
 Վորի դեմ տարեց կանայք ել անգամ
 Կարմրում եյին, փախչում յերկյուղից, —
 Նայում ե հիմա ընկճոված, անուժ
 Յեռյալի ջահել կին նախագահին.

Նայում ե նրան և չի դիմանում
 Նրա աչքերի քինոտ քուրային:
 Յեղ մուլթ բնազդով հասկանում ե նա,
 Վոր գուր ե, չկա լող մի փրկություն,
 Յերբ կինն ե խոսում, կինն ել ե զինված,
 Կինն ե անխնա վճիռը կարդում:
 — Կտամ... Ի՜նչ արած... կճարեմ, կտամ... —
 Մամըռում ե նա կարծես ինքնիրեն: —
 Տակն եմ մնացել քո իշխանության,
 Ինքս կդառնամ քեզ համար ցորեն...
 — Ստորագրիր, — համառեց Զարեն, —
 Վոր բերես եզուց մինչև յերեկո:
 Նա ծանր տնքաց, ստորագրեց,
 Ապա դուրս յեկավ խորտակված հոգով:
 Յերբ գյուղխորհրդում Զարիկն անողոք
 Սեղմում եր ելի կուլակ Ոհանին,
 Յերամն ահամա մտավ ելի գոմ,
 Վոր մսրի տակի ցորենը հանի:

ՏԱՍՆՅԵՎԱԶՈՐՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԽԱՓԱՆՎԱԾ ՀԱՐՍԱՆԻՔ ՈՒ ԽԱՓԱՆՎԱԾ ԶՈՒՔ

— Հա-հա-հա-հա... համատարած կողքկտրիվ...
— Հի-հի-հի-հի... քամատարած կողքկտրիվ...
Սանթրոսի տան կա հարսանիք ես գիշեր.
Շրրխկացին իրար թասեր ու շշեր...
— Համատարած կոլխոզը վճնց քանդըվեց...
— Յերեքհարյուր յերեսունից... ութսունվեց...
— Քավոր Մուշեղ դու յեղ հասնես մուրազիդ,
Հանդ դուրս եկար կոլխոզական յերազից:
— Խնամի Լաչին, արադ ածեմ, թե գինի, —
Ձայն ե տալիս Սանթրոսը՝ լուռ Լաչինին, —
Խմենք, ախպեր, Մայր Աթոռի սուրբ կենաց,
Կարճ ե ճանփեն, շատը գնաց, քիչ մնաց,
Խնամի Լաչին, խմելուց յետ մի մնա,
Կուլակ ես, դե, կուլակի հետ ել գնա...
Շատ եմ խնդրում մեր «կոմսոմոլ» Գեոյին,
Վոր մի յերգով խնամու թասը գովի:
Գևոն կարմիր գինու թասը դատարկեց,
Բարձր հազաց, բորկը մաքրեց ու յերգեց.
— Դու կուլակ ես — վոտի տակ ես,
— Դու միջակ ես — հրեշտակ ես,

— Ջրավոր ես — թագավոր ես,
— Կոմսոմոլ ես — դատավոր ես,
— Կոմբլիճ ես — ամեն ինչ ես,
— Կոլխոզնիկ ես — հի հասնի քեզ,
Թղթակից ես գիտակից ես...

Հարբած ուստան դարկեց ուժով նազարին...

— Ո՞ւր ե հարսը...

— Հարսը...

— Հարսը...

— Թող պարի:

— Հարսը... չկա...

Հարսը գնաց...???

— Լիկկայան...

— Ի՞նչ...

— Լիկկայան...

— Սուս...

— Փեսացուն չիմանա...

Ու ներս մտավ, գույնը թռած, փեսացուն:
Սրտից արյուն, դեմքիցը թույն ե կաթում:
Սարսուռ անցավ հարսանիքի սեղանով,
Միսը մնաց տերտերի բաց բերանում:

— Դուք քեֆ եք անում, կենաց եք ճառում...

Բայց մեզ քեֆ, պատիվ, կյանք ե մնացել:

Ել ինչո՞ւ համար ապրենք աշխարհում,

Շուռ տվեք գինին, յիկեք, գնացեք...

Յերեկ խլեցին Ռուշանի Քարափն,

Ետը ել տարան լիրբ նշանածիս.

Չաթնանց Բեյբուլթին արին խայտառակ,

Կյանքս ու պատիվս առան, գնացին:
Վաղը կխնդա Ռուշանանց գլադեն,
Կոլխոզում «կարմիր հարսանիք» կանի.
Ես թնչ եր արիք, այ հեր, այ ադե...
Վայ մեր նամուսին ու գերդաստանին...
Ել համբերելու չկա սիրտ և ուժ,
Շուտով, վերջապես, մեր հերթն ել կգա,
Կքանդենք ես կարգն, ես աշխարհը փուչ,
Ուր նոքարն ե քեզ «ընկեր նախագահ»...

Հյուրերն անշարժ՝ ձայն ու ծպտուն չեն հանում՝
Միսն ե սառել տեր-Գալուստի բերանում:
Միայն պառավ մերն ե մոռում ու լալիս
Ու խորտակված վորդուն ահով սիրտ տալիս.
— Գնաց Լիկկայան, կդառնա, բալա,
Գնաց վարժուհուն հարսանիք կանչի:
Շորն ել պսակի չի հագել հալա,
Գնա յետևից, խնամի Լաչին:
Յես են վարժուհու աղիզը թաղեմ.
Եդ նա ե հարսիս արել խելքահան:
Սպասիր տեսնեմ, մի տեղ պատահեմ...
Յես ցույց կտամ եդ լրբին լիկկայան:

Ռուշանանց Հովասը տրտում նստել ե դռանը,
Մտածում ե լուռ իր անել վիճակի վրա:
Աջառը հրեն խամացել, ընկել ե գոմում,
Անցնում են որերը, իսկ արտը խոպան չորանում:
«Դու թնչ չութ լծող ես, Հովաս, դու ով ես հերդ» ով-
Կմեռես, Հովաս, սեփական չթի կարոտով
Դու թնչ ես ուզում եդ մենակ, մատղաջ աջառից:

Կարձղ եր աջառն ահագին յեզան հետ վարի:
Անխիղճ Աթաբեկ, սրտիդ մուրազին հասար,
Դալար աջառին քեցիր յեզիդ հավասար:
Աջառիս գլուխը կերար, ու հրեն գոմում
Պառկած ե անշարժ, վոչ խոտ ե ուտում, վոչ խմում-
Հովաս, են աջառն ել քեզ յեզություն չի անի,
Ինչո՞ւ չմտար կոլխոզ, ընկար մի յանի:
Յերը ելիր կյանքում սեփական չութ հանել տանից,
Դու ինչո՞ւ զրկվեցիր վորդուց ու հարեանից...»:
Ռուշանանց Հովասը տրտում նստել ե դռանը,
Ու միտք ե անում, վարանում իր խելքի վրա:
Շուրջը գարուն ե: Հողի մեջ արյուն ե յեռում:
Կոլխոզն աշխատում ե գյուղի մոտիկ արտերում:
Տասներկու գութան վարում են հրեն թեթեկ:
Արագ սեանում են արտերն իրար յետևից:
Դաշտը լցված ե նրբանց ուրախ աղմուկով:
Հրեն հորովել ե յերգում Մաղաքանց Մուքոն:
Եդ հին հորովելը չի, անցյալ, նախ անցյալ տարվա-
Այդ նոր ե ասես, մի նոր իմաստով ե վառված:
Առաջ առանձին եր յերգում Մուքոն ու կամաց:
Իր մենակ արտում: Իր մի զույգ յեզների համար:
Այսոր նրա հետ յերեսուն հոգի յեն յերգում:
Լսում են յեզները հարյուր ինսուն և յերկու:
Յերեք յեզ այսոր խամացել են: Հրեն տուն բերին:
Յերեք յեզ չկա կոլխոզի անթիվ յեզներից:
Բայց նորից բանում են անդուլ տասներկու գութան-
Յերեք յեզ չկա — բայց հո չեն պարապ նստի տանը:
Յեզներից մեկը Մուքոյինն ե, յերկուսն՝ Արեթին:
Բայց նրանց լծերը խափան չեն ընկնել գետին:
Չեն նստում նրանք շվարած, դեմ առած քարի...

Ահա թե ինչու յեն ասում՝ կողքիցիմ արի:
 Ռուշանանց Հովասը տրտում նստել է դռանն
 Ու միտք է անում իր մենակ վիճակի վրա:
 Յերկինքը կապույտ: Շողշողուն կեսոր է գարնան:
 Գյուղում հարսանիք է: Ուրախ զլզլում է գուռնան:
 Լաչինի աղջիկն են տանում Չաթնանց Բեյբուլթին:
 «Բո հարսն եր, Հովաս, վճնց, ախար, քեզնից խլեցին»:
 Այսոր առավոտ քո վորդին լալով հանդ գնաց:
 Քո խեղճ պառավի մուրազն իր սրտում մնաց:
 Ես թնչ եր բերիք արևիս, հեյ, նամարդ Լաչին,
 Վորդուս մորթեցիր, աղջիկըդ տվիր կուլակին:
 Պահանջում եյիր, վոր վորդիս կոլխոզ չգնար,
 Դիտակից վորդին նոր կյանքի հոգին չիմանար:
 Աղբյուրից գալիս յես տեսա չինար Արուսին.
 Սիրուն եր վորպես քարափի բուրած լուսին:
 Նայեց յերեսիս, արտասուք շողաց աչքերում:
 Այդպես են թերթերը վարդի՝ շաղով շողշողում:
 Ե՛խ, Չաթնանց Սանթրոս, հորիցըս Քարափն առար,
 Ինձնից ել հարսիս խլեցիր ու վորդուդ տալար,
 Կոլխոզը Քարափըդ խլեց, հալալ վայելի:
 Քո որն ել հասել է, Սանթրոս, վերջն է քո յելի:
 Յես ել կգնամ կոլխոզ, Սանթրոս, տրաքի:
 Յես՝ ել յեղ կաձեմ քո սիրտը վառող կրակին:
 Կմտնեմ կոլխոզ, թող վորդիս մենակ չամաչի:
 Սարի պես կերթամ կ'կանգնեմ վորդուս քամակին...»:
 Ռուշանանց Հովասը մենակ նստել է դռանն
 Ու միտք է անում, չարանում թշնամու վրա:

— Ընկեր Ասողիկ, ընկեր Ասողիկ, դուռը բաց...
 Ու ներս մտավ. Արուսն ասես ցնորված:

— Ընկեր ասողիկ, սիրտըս թրով են կիսել...
 Մի նեղանա .. քեզ մոտ մնամ ես գիշեր:
 Ուսուցչուհին շուտ հասկացավ աղջկան:
 Դուռը փակեց: Հրավիրեց նստելու:
 Պատուհանից նայեց, տեսավ՝ մարդ չկա:
 Ու շողշողաց ուրախ հուզմունքն աչքերում:
 — Լավ արիր, Արուս, իմ հերոսուհի:
 Դե լաց մի լինի, մի վախենա:
 Յես գիշեր ցիրեկ քեզ ասում եյի —
 Յեղիր համարձակ, անկախ, անահ:
 Դու իզուր թողիր ուսումըդ կիսատ,
 Դու իզուր թողիր Ալեքսանին:
 Դու իզուր դառար կուլակի տան դարդ,
 Բանդ հասցըրիր մինչ հարսանիք:
 — Ա՛խ, ընկեր Ասողիկ, դու չգիտեմ, վոր
 Գեղջուկ աղջկա վիճակն է չար:
 Դու թնչ կանեյիր, յեթե ամեն ոք
 Մերըդ անիծեր, հեղդ փնչար:
 Ասու եյին՝ քեզ կոլխոզ կտանի
 Ու բաց կթողնի մի ոք հետո,
 Կոլխոզում չկա սեր ու ընտանիք,
 Բուրն իրար հետ կապրեն հերթով:
 Չեյի հավատում սուտ-սուտ խոսքերին,
 Վորոշում եյի փախչել տանից:
 Բայց մեկ ել, կարծես, հավատում եյի
 Ու փախչում եյի Ալեքսանից:
 Յես միշտ եմ ասել Չաթնանց Բեյբուլթին,
 Աչքերը չառձեղ դախ յեղան:
 Նա չարժի նրա մատի ճկութին.
 Քառասուն Բեյբուլթ — մեկ Ալեքսան:

Իմ հասակակից աղջկեքք բոլոր
 Մտան կոմսոմոլ, դպրոց մտան:
 Իսկ յես կի՞նամ կորած ու մոլոր,
 Ձխոսկան մի հարս կուլակի տան:
 Յես չեյի գնում, ինձ զոռով տաբան:
 Անցնելիս տեսա Ալեքսանին:
 Կանգնած եր մենակ դպրոցի դռանն
 Ու ձեռքին մի թերթ՝ նայում եր ինձ:
 Նայեցի թաքուն քողի արանքից.
 Ծիծաղ կար ասես սև աչքերում:
 Ա՛խ, եդ ըոպեյից կորեցրած հանգիստ,
 Նրան եմ անվերջ մտաբերում:
 Շուտով կատաղած կգան, կտանեն...
 Ձեմ ուզում գնալ Ձաթնանց տղին...
 Յես թույն կխմեմ... յես ինձ կսպանեմ...
 Ոգնիր ինձ, ոգնիր, Աստղիկ:

Կիտած նոթերն ամպոտ, մթին ձորի պես
 Լաչինը լուռ, մռայլադեմ, մտավ ներս:
 Թշվառ աղջիկն ահից գրկեց վարժուհուն:
 Նայում ե հոր ահեղ դեմքին ու դողում:
 — Ես հեր ես յեկել, աննամուռ աղջիկ,
 Ի՞նչ կարկուտ բերի ծեր գլխիս վրա:
 Հարսը պսակի սեղանից փախչի՞
 Ու հորը շինի գեղում մասխարմ...
 Դե, առաջ ընկիր, գնանք, սեբեռ,
 Ասա — գնացիր վարժուհուն բերեռ:
 Թե չե ձենը, հա՛, գեղում զընգաց,
 Այ դու դժոխքի դեկից վեր ընկած:
 — Ձեմ ուզում, հայրիկ, չեմ գնա մարդու,

Ինչո՞ւ յես զոռում, ինչո՞ւ յես մորթում:
 — Ձենըդ, անդգամ, եդ վհնց չես ուզում:
 Ո՞վ ե քեզ տվել եղպիսի ուսում:
 — Ե՛յ, Լաչին ամի, ձեռըդ քեզ քաշի,
 Ես քու իմացած ժամանակը չի:
 Ձես կարող զոռով աղջիկ տալ մարդու:
 Ի՞նչ իրավունքով տունս մտար դու:
 — Ինչ իրավունքով... այ լիրբ անդգամ,
 Դու յես խելքահան արել աղջկան,
 Ասում ես հալա «ինչ իրավունքով»...
 Լեզուդ կկտրեմ... մազերդ... հումմ... քո...
 — Ձեռդ քեզ քաշի, ասում եմ, ծերուկ,
 Յես չեմ վախենում քո փնչոցներից:
 Մեր խորհրդային ազատ կարգերում
 Դու կլի՞ս ես թակում, փնչում ես նորից,
 Հասկանում ես, վոր քեզ թանկ կնստի,
 Հենց վոր ցանկանամ դիմել դատարան:
 Հո կարիք չունե՞ս յերկար հանգստի
 Ես գարնան որով, դեռ ցանքըդ չարած:
 Տղին չի սիրում, չի ուզում գնալ
 Ու վոչ հեր, վոչ մեր, վոչ իշխանություն
 Ձեն կարող նրա կամքին բռնանալ,
 Ձոռով տալ նրան չսիրած մարդուն:
 Մեկ դո՛ւ, չուզեցիր՝ չմտար կոլխոդ,
 Ո՞վ քեզ ստիպեց, փնչաց, սպանեց:
 Ինչո՞ւ յես ուզում աղջկադ գլխով,
 Աղջկադ սիրով առևտուր անել:
 Յեվ չե՞ս ամաչում, մատաղ աղջկադ
 Տաս ես տարիքն առած այդ մարդուն:
 Ավելի լավ չե՞, վոր թեկուզ աղքատ,

Բայց յերկտասարդ լինի փեսացուն:
 — Յես աղջիկ չունեմ, վոր տամ շներին,
 Տանեն արուորից ու պատվից հանեն,
 Տանջեն որական յոթ մարդու ձեռին,
 Իսկ հորը ճնշեն, ձայնազուրկ անեն:
 — Վհ, Լաչին ամի, իզուր ես խոսում:
 Բամբասանք ե դուտ ստից դուրս ընկած:
 Դու յեւր ես տեսել՝ մեկը կոխողում
 Ծուռ աչքով նայի ընկերով կնկան:
 Քեզ ձայնից զրկել կամեցավ Սողոմ:
 Էվոր չհաստատից կոմիտեն: Ախար՝
 Մեկը յես եյի կովում անողոք
 Մեկն Ալեքն եր, վոր պաշտարեց համառ
 Սողոմի ստոր արարքների դեմ:
 Ե՛... Լաչին ամի, բոլորն ել գիտեն,
 Վոր դուր աղջկադ սիրտը կտրեցիր,
 Զուր անկեղծ սիրտ կապը կտրեցիր:
 Յեվ դու յել իզուր կոխող չմտար:
 Ինքդ ծերացած, մենակ ու տկար,
 Տղա յեկ չունես, վոր ցավըդ տանի,
 Տավարըդ պահի՝ վար ու ցանքդ անի:

Լաչին ամին սիրտը լեղի, անհամբեր,
 Ուսուցչուհուն լսեց, լսեց ու ամպեց:
 Ու մի կաթիլ ամպերից վար գլորվեց՝
 Բեխ-միլրուքի թավ անտառում մոլորվեց՝
 Նախ նայելով լուռ արտասովող աղջկան՝
 Խուլ մարտաց.

— Այսորվանից տուն չգաս:
 Լսեց նրա հեկեկանքը կցկրտուր,

Նորից փնչաց ու շուռ յեկավ դեպի դուռ:
 Այն ժամանակ լսվեց մի սուր ճղավոց,
 Ու սենյակի դուռը դիպավ պատեպատ:
 Ներս սլացավ Չաթնանց պառաջի ահավոր,
 Անիծելով ու թքելով անընդհատ:

— Տղիս գլխին ես ինչ բերիր,
 Մաղդ կտրած անամոթ:
 Վարժուհի՛ յես, թե լրբերի
 Հովանավոր, խնասող:
 Թհք քո պատիվին, հար ես խաբել,
 Տունդ բերել աղջըկան,
 Վոր դարձնես քեզնից ավել
 Հազար մարդու սիրեկան...
 Եսնեց հարսի սիրտը խորեմ,
 Այ խայտառակ, անարու... —
 Յեվ Արուսի մաղն ոլորել՝
 Քաշ ե տալիս դեպի դուռ:
 — Թող յերեսին, ցնդած պառավ, —
 Ճչաց Աստղիկը մոլի
 Ու վագրի պես վրա թռավ,
 Վոր աղջըկան յետ խլի:
 Չաթնանց պառաջի իսկույն թողեց Արուսի
 Հյուսքերը հաստ ու մի վայրկյան կարկամեց,
 Հետո թռավ ուսուցչուհու յերեսին,
 Վոնց վոր փքված հսկայական թխսամեր:
 Յեվ այս անգամ բռնած նրա մազերից՝
 Ելի սկսեց քաշել, թակել, ծղրտալ.
 — Ա՛ռ, սրտամեռ, Չաթնանց Հոռոմ կասեն ինձ,
 Հարս ես տանում խելքից հանում... առ, հա, տար...

Բայց այդ ժամին մեկը հասավ յետևից,
 Բռնեց թևից ու շարտեց դեպի դուռ:
 Պոկվեց պառափն ուսուցչուհու մազերից,
 Աչքին արյուն, բերանին՝ թուփ ու փրփուր:
 Դիպավ դրանք ու յետ փովեց հատակին,
 — Ամա՛ն, հասե՛ք, այ գեղական,
 Սպանեցին, մորթեցին...
 — Շառ մի գրցի, ջադու պառավ,
 Վեր կաց .կորի, գնա տուն:
 Ինքդ եյիր ուրուր դառած
 Աղջիկներին ծվատում:
 Մեռած հո չեմ, սառած հո չեմ,
 Վոր դու թակես վարժուհուն:
 Ես Զարիկն ե կանգնած քո դեմ,
 Ի՞նչ ես աչքերդ ճղում:
 Հմբս ես ուզում զոռով տանել,
 Քո ուզած հարսն ել չկա:
 Յես եմ հիմա համ քույր, համ մեր,
 Մեր կոլխոզի աղջկան:
 Հետզհետե հավաքվեցին գյուղացիք.
 Շարժվելու ել հնար չկա սենյակում:
 Վտաքի յերավ պառափն ելի ջղածիգ,
 Ելի գոռում ե, անիծում ու թքում:
 — Տուր, աննամուս, տուր սևասիրտ,
 Տուր Բեյրութի մատանին:
 Վոնց իմ արևը սևացրիր,
 Մերդ սև նազդ տանի:
 — Ա՛ռ, ագատվիմ, — ջիկնեց Արուսն
 Ու շարտեց մատանին:
 — Հան շորերըս, հան, աննամուս:

— Շոր չեմ բերել քո տանից:
 — Շոր չես բերե՞լ... բաս սա շոր չի,
 Հորդդ չենի՞ց ես բերի:
 Ո՞ւմ շորն ե սա, գողի աղջիկ...
 Դո՛ղ, տկուր մեքդ ե կարել:
 — Թո՛ղ, — ձիգ տվեց Արուսն ուժգին
 Աչքում ագահ մի կըրակ, —
 Ինձ ես դեյրան նվեր բերին
 Նըջանդրեքի ժամանակ...
 — Արճւս, իսկույն շորերը տուր, —
 Ասավ Զարեն հորդորով, —
 Հո չեմ ծախել պատիվդ դու
 Յերեք արջին կտորով:
 Տուր թող տանի իրեն հաճմար
 Ուրիշ հարսի հագցընի:
 Հավը կառնեմ յես քեզ համար,
 Դու խելքդ մի կորցընի:
 Կախեց գլուխն Արուսը լուռ, սրտմըտած:
 Հետո արագ հանեց դեյրան վրայից:
 Հաչին ամուս սիրտը ցավից մղկտաց.
 Նայում եր նա, կանգնած մոռյլ, սըրահից:
 — Ո՞վ ե յանի գողի աղջիկ, ո՞վ ե գող... —
 Ու բաղմուկոյունը ճեղքելով ներս յեկավ, —
 Ձե՛ս ամաչում խալխի առաջ, ցերեկով,
 Մերկացըրիր յերթասարդ աղջկան:
 — Բարձ՛վ, — ճչաց պառավը խիստ. —
 «Սիպտակերես խնամի»...
 — Շան խնամին... խեղճ յերեխիս
 Շանը տվի միամիտ:

Ու դուրս յեկավ Զաթնանց աղեն կատաղած՝
«Հարսից» խլած չլթե դեյրան թևի տակ:
— Զարմանալի մի հարսանիք...

— հան — հան — հան...

Ու յետևից են վազում ծաղր ու կատակ:

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Տ Ր Ա Կ Տ Ո Ր Ը

Վերջին տագնապոտ ուրերն են գարնանացանի:
Հազիվ են շարժվում ակոսում յեզներն ուժասպառ:
Դեռ հիսուն տոկոսն է հասել ցանքի պլանի,
Գրեթե այդ մասին կոլխոզնիկ ամեն մի ռանչպար:
Դեռ հիսուն տոկոսը: Այդ թիվ չե լոկ չոր ու ցամաք,
Գրված միմիայն հնգորյա տեղեկագրում,
Այլ նրանց առջև տարածված խոնավ հողամաս,
Վոր ամեն վայրկյան չորանում ու սերմ է գոռում:
Լսում է կարծես հողի ձայնը խորին հուզմունքով
Դաշտավարական սեկցիայի նախագահ Մուքոն:
Յեվ անգուշ, անհանգիստ անցնում գութանից գութան,
Կանչում, հորդորում ե՛ք ջեն, յեզներին ուժ տան:
— Ուժ չի մնացել յեզների վրեն,
Ուժով չի լինի, ընկեր նախագահ:
Ո՞ւր է, խոսք տվին՝ տրակտոր բերեն,
Քաղաք գնացին ու ել յետ չեկան:
— Նգպես միք խոսի, սխալ է, տղեք:
Տրակտորն ուղացավ: Ել չի գա հիմա:
Բայց պետք է ցանենք: Քշեք, ուժ տվեք,

Ամեն մի ըրպեն կամ կյանք ե, կամ՝ մահ...
 Ու խլում ե մաճը Մուքոն հոգնած մաճկալից,
 Շարժում ե հուժկու փնչոցով, յեռանդի գալիս,
 Ողում պտտվում են ուժով ճիպոտ, խարաղան,
 Շաշում են ուժգին ու դիպչում ուժասպառ յեղան.
 Տնքում են յեղները, պրկում մկանները նորից.
 Աչքերը ուռչում են, թռչում են ասես կոպերից:
 Նայում եր Հովասն իր ձգված, վտիտ աչառին:
 Մորթին չպայթի, դուրս չտա և փոր և աղիք...
 Իսկ Մուքոն հարբած սև հողի խոստումով շռայլ,
 Ավելի ուժով ե ընկնում գութանի վրա:
 Գնում ե գութանն ու հողը շերտում թումբ առ թումբ:
 Գնում ե գութանը կարծես Մուքոյի սրտում:
 Բայց խփը թփին դեմ առավ, ակռկեց նորից,
 Ու հետ շարտեց թափով՝ լարված յեղներին.
 — Կուլակն ե, տղեք, հուպ տվեք, արեք քոքահան.
 Կրկին շաչեցին ողում ճիպոտ, խարաղան:
 Ու հորիկ քշողն ահագին ճիպոտն ոլորեց,
 Թափով հարվածեց Հովասի յեղան վոսկորին:
 — Ո՛ւֆ,—տնքաց Հովասն իր անխոս յեղան փոխարեն
 Ու ներքև թռավ, բարկության կրակն աչքերին: —
 Ծո՛, թույլ տուր, լակոտ ինչո՞ւ ես թակում:
 Աչառիս վրեն քո գոռը գնաց:
 Դու հորըդ յեղան մաժում ես կակուղ,
 Իմի՛նն ես քշում, սատանի ծնած:
 Տարավ բերեց խարաղանը Հովաս քեռին
 Ու պինդ փաթաթեց Տիկոյի տկլոր ծնկներին:
 Պատանի ցավից կազկանձեց:

— Ամոթ ե, Հովաս... —

Ձայն տվին գութանավորները՝ սաստիկ վրդովված:

Յեվ մյուս գութանի մոտից ֆշշալով հասավ
 Գալոն՝ կայծակն աչքերում, ձեռքին՝ խարաղան:
 — Ինչո՞ւ յես թակում տղիս, դավաճան, —
 Մոնչաց. Կալոն ցուլ գոմեշի պես, —
 Կոլխոզ ես բերել սատկած մի աչառ
 Ու մի աչառով մեզ պիտի ուտե՞ս,
 Ինձ Գալուստ կասեն... վորձ եմ յես, տո թո՛ղ...
 Հովասն ո՞վ ե, վոր դիպչի իմ տղին:
 Ստոր մտքերով մտել ե կոլխոզ,
 Վոր կռվի գցի ու գործը չեղի...
 — Տո թույլ տուր դրա դիմակը պատռեմ, —
 Գոռում ե Հովասն ու բաց չեն թողնում, —
 Տո՛, ինքդ չեյի՛ր, մառազներ վրեդ,
 Դաշնակի որով հավեր գողանում...
 Հիմի լավ ե, հա՛... կոլխոզ ես մտել,
 Կոլխոզում անտեր աչառ ես գտել,
 Վոր տղեդ թակի ու սատկացնի՛,
 Ախար թանկ ե սա երեսիդ գնից:
 — Ամոթ ե, Հովաս...

— Ամոթ ե, Գալո...

— Յերկուսդ ել ակտիվ կոլխոզի անդամ... —
 Հանդիմանում են մարդիկ մոտ գալով: —
 — Ձեզ չի վայելի կռվել. իրար տալ... —
 — Յեզը չստակեց, տղեն չմեռավ:
 — Ինչ եք գողգողում իրար հակառակ...
 Հիմա վոր լսեն, գյուղում ի՞նչ կասեն...
 — Եսպես եր...
 — Ե՞ս եր...
 — Միություն ու սեր:

Կեսոր եր արդեն: Յեվ ընկեր Մուքոն հրամայեց
 Յեղներն արձակել, ուղարկել ներքև ջրերու:

Իսկ ճաշից հետո, սեկցիայի ժողով գումարեց՝
Կովով կողմերի հարցը տեղնուտեղը քննելու:
Հովասն ու Գալոն նստեցին իրարից հեռու:
Դամակ քամակի ու թթված, մռայլ դեմքերով:
Ու շրջանաձև, ծալպատիկ, բոլորը նստան:
Վեր կացավ Մուքոն ու խոսեց խոհուն ու հստակ.
— Ընկերներ, կոլեկտիվն եսպես
Չի կտրի ճամփան:
Գյուղում ի՞նչ կասեն հիմա մեզ
Բարեկամ, չարկամ:
Փթում ե այնտեղ սերմացուն —
Ամբարում անշարժ:
Իսկ սրանք հին սանդն են ծեծում,
Հին կռիվն ու շառն:
Բրիգադում բանում են բոլորը
Խիստ հարվածային,
Իսկ ընկեր Հովասն ու Գալոն
Սարքում են ոյին:
Տարեկ եր բրիգադը վարի
Սոցմրցման դրոշ:
Իսկ սրանք խայտառակ արին
Մեզ իրանց կռվով:
Ո՞վ ե մեղավոր ավելի.
Յես կասեմ — Գալոն,
Հովասը դիպավ Տիկոյին
Մի խարաղանով:
Հոր տեղ եր, ավելց մի անգամ,
Իրավունք ունեի:
Ել Գալոն ինչ՞եւ մեջ ընկավ...
Պարզ ե, ընկերներ:

Յերկուսին ել չենք ազատում
Արժանի պատժից.
Հովասին — նկատողություն,
Գալուստին — շատ խիստ:
— Վնչ, դեմ եմ, — հուզվեց Ալեքսանն, —
Եդ վորոշումին:
«Շատ խստին» իմ հերն ե արժան,
Այլ վոչ թե ամին:
Պինդ խփեց աչառին Տիկոն.
Պետք չեր իհարկե.
Բայց իմ հերն ի՞նչ իրավունքով
Յերեխին զարկեց:
Կոլխոզի յեզն եր, կոլխոզն եր
Պատասխան տալիս.
Իսկ հերս ձեռ չի վեր կալել
Դեռ հին անցյալից:
Առաջարկ — իմ հորը շատ խիստ
Նկատողություն.
Գալուստին և նրա աղին՝
— Առայժմ ի ցույց:
— «Ի ցույց» դու յես, —
Կատաղի

Մոնչաց Գալոն: —
Եդ հեմն ես այդպես ցույց տալի՝
Լեզվիդ զոռ տալով:
Չաթնանց Բեյրութի՞ն ես տեսել,
Վոր խլիս՝ կնոջ.
Կարծում ես կուլակ եմ յես ել,
Կամ կին փախցնող...
— Տհ. թույլ տուր, թույլ տուր. —
Վեր թռավ

Հովասը տեղից. —

Տեսնո՞ւմ ե՞ք վոնց ե խայտառակն

Անպատվում տղիս...

Հակառակորդները կրկին իրար դեմ յեկան:

Մի վայրկյան նորից բռնկվեց վոխը պապական:

Կարող եր կրկին կամ գլուխ կամ թև կտարվե:

Կամ, ինչպես տասնեկինն թվին, մեկի դին փռվել:

Բայց տղերքն ամուր բռնեցին ծեր աքլորներին

Յեմ ուժով, ամոթանք տալով նեղները բերին:

Նորից նստեցին վրդովված Հովասն ու Գալոն:

Յետև յետևի, իրարից հեռու. փնչալով:

Բայց հանկարծ ուրիշ մի փնչոց լավեց այդ ժամին:

Ու հեռվից նավթահոտ բերեց սրընթաց քամին:

Դադարեց աղմուկն: Այն կողմ նայեցին մի վայրկյան:

Ու թռավ մի խենթ աղաղակ.

— Տրակտորն յեկավ...

Շոֆերն եր, Սարոն, Գարսեանն ու ընկեր Կարոն:

Գլխարկներն ուրախ վերցրին, կանչեցին.

— Բարով...

— Այ հազար բարով, — ձեն տվին բոլորը միասին

Ու խորին, անհուն հարգանքով գլուխները բացին:

Յեմ շրջապատված կոլտոզնիկների բազմությամբ՝

Տրակտորն առաջ շարժվեց՝ նախշելով ճամփան:

Հասավ ու կանգնեց կիսավարտ հերկի յեզերքին:

Շուրջը կիսվեցին՝ նայելու կրկին ու կրկին:

Նայելիս դիպան մեկմեկի Հովասն ու Գալոն,

Բայց ձեն չտվին, շուռ յեկան՝ թաղուն ժպտալով:

— Նու, սկսում ենք, — մոնչաց շոֆերը խրոխտ

Ու զեկը բռնեց յերկաթե վոսկրոտ ձեռքերով:

— Մաքրեցե՞ք ճամփան, — հրամայեց նախագահ Մուքոն:

Ու գործի անցան նրանք խանդավառ աղմուկով:

Ուժ տվին խմբով, փնչացին լարված, կատաղի,

Բոլի մեջ վռված գութանը հանեցին տեղից.

Տրակտորն ակոսում շարժվեց, հասավ այդ քոլին,

Խոփը խոր խրեց, հոնդաց ու փնչաց մոլի:

— Բաշի հա, քաշի... մատուռիդ մատաղ, տրակտոր: —

Ու ձեն են տալիս, ուժ անում ձեռքով, ճիպտով:

Յերկաթե յեզը մի բոպե դանդաղեց, տնքաց,

Հզոր պճեղները խրեց փխրուն հողի մեջ,

Հսկեց մի խրթին հոնդյուն, ֆշշոց... ու հանկարծ

Շուռ տալով հողի մի լայն շերտ, առաջ շարժվեց...

— Ես ի՞նչ եր, տղե՞ք...

Ու տրեց դարմանք ու սարսափ:

Բոլի արմատի հետ, արմատից ել հաստ, մի սև ոճ

Կիսված եր միջից և գլուխն ու պոչը դատ-դատ

Գալարվում եյին, թռչկոտում, շաչում ահավոր:

Մի բոպե փախան խուճապով: Հետո յետ դարձան:

Ջախջախեց Վասոն մահամերձ թռևալոր ոճին:

— Ջգուշը կաց, Վասո, — ձեն տվավ Հովասափ բիձան,

Ընկեր կուռենա, քեզանից վրեժ կլուծի...

— Ընկեր կուռենա... եհ, յես ել ունեմ ընկերներ...

Արեքսանի պես, ենպես չի, հորոխպեր Գալո:

— Ա՛յ եդպես, սիրով մնացեք, ձեր հոգուն մեռնեմ,

Կանչեց աշխուժով Մուքոն, յեռանդի գալով:

Արդեն յերեկո յեր: Արևը թիկնել եր սարին:

Հերկերը ներկել եր լույսի իր վոսկե մշուշով:

Միայն մի ակոս ել, միայն մի ակոս ել վարի:

Հերիք ե. կանգնիր, հոգնեցիր, տրակտոր քշող:

— Քշիւր դեպի տուն, անցիր կամրջի մոտով,
Հասիր գեղամեջ, փնջալով գնա, ձեն հանի:
Ասա վոր յեկար ու հասար, չթողիր ամոթով,
Խոսում եր Մուքոն, — թող ձենը լսի թշնամին:
Շրջանը կանչել ե, ափսոս, ընկեր Կարոյին:
Մի գնա, Կարո, կաց մեզ մոտ, կաց մեզ զեկավար:
Տրակտորը չեր գա, յեթե դու մեզ հետ չլինեցիր,
Դու շատ բան արիր, շատ աշխատեցիր մեզ համար:
Մենք թուղթ կգրենք, կխնդրենք քո գործարանին,
Վոր քեզ նվիրի կոլխոզին, վոր ֆասս մեզ մոտ:
Առանց բանվորի ոգնության չեյինք բաշարի,
Մենք այսոր հաղթանակ տարանք քո շնորհիւ, քեզնով:
Ու ժպտաց Կարոն հաղթողի հպարտ հուզմունքով:
— Վհչ, ընկեր Մուքո, դուք պինդ եք, ամուր եք արդեն
Դուք ունեք Սեվան, Ալեքսան, Վասակ ու Մուքո,
Կարող եք առանց ոգնության ճանապարհ հարթել:
Իսկ ինձ շրջանն ուղարկում ե ուրիշ կոլլեկտիվ,
Ուր գործը դժվար ե գնում և ուժեր չկան:
Իսկ յեթե կանգնի ձեր դիմաց դժար մի խնդիր
Յես կգամ, քաղաքից ուրիշներ կգան:

Ու յերբ բոլորած յերկաթե թանգազին հյուրին՝
Պատրաստվում եյին աղմուկով շարժվել դեպի տուն.
— Ընկերներ, — ձայն տվեց Գալոն հուզմունքով
խորին —

— Ընկերներ, մի խնդիրք ունեմ յես... Ներողություն:
Եսոր յես ընդեմ գնացի մեր դիսցիպլինին:
Ընկերոջ սիրտը կոտրեցի փուչ բանի խաթեր.
Հովասն իմ մոտիկ հարեանն, ընկերն ե հընից.

Ալեքն իս զավակն ե, Տիգրանից ել շատ առավել...
Սրանից հետո թե մեկ ել մի ծուռ բան ասի,
Յերեսիս թքեք, ինձ կոլլեկտիվից վռնդեք:
Միայն մի խնդիրք ունեմ... ես կովի մասին
Թերթում միք գրի... եղ անտեր «ի ցուցը»... ջնջեք:

Յերեք որից տրակտորն ուրիշ կոլխոզ պնաց.
Մնաց Մուքոն իր նիհար, հոգնած յեղների հետ:
Բայց անիվի նախը լայն, ճանապարհին մնաց,
Ու նոր, անշեղ մի յեռանդ մնաց սրտերի մեջ:
Յեվ չնայած վոր Գալոն բոլոր ժողովներում
Աղմկում եր, բողոքում, թե չենք կարող ցանել,
Հովաս քեռու նիհար յեղն ապացույց եր բերում
Յեվ առաջարկ եր անում վոր սերմը բաժանեն,
Սակայն հաղթում եյին միշտ Սեանը և Մուքոն,
Առավոտյան կոլեկտիվն ելի գնում եր հանդ,
Աշխատում եր հրատապ, հարվածային հոգով
Ու հորովել եր յերգում Հովասն ելի սրտանց:

Յերբ վոր արևը հոգնած թիկնեց ելի սարին,
Ու նարնջն քրտինքով ներկեց յերկինք ու հերկ,
Յերբ վոր վերջին ակոսից գութանը դուրս լերին
Վորպես ծանր, տանջալից հաղթանակի մի յերգ, —
Մուքոն նայեց դեպի յետ և հուզումով դգաց
Հողի յերկունքը լեղուն, ճայթումը սերմերի:

Կարծես վոչ թե արտը, այլ նրա սիրտն եր հերկված,
Նրա սրտումն եր ցանված իր սերմացուն լրիվ:
— Մնաց յերեք որվա գործ, յերեք որվա լարում, —
Ու Գարսեանը սրբեց ճակատը քրտնաթոր, —
Ձուր են Գալոն, Աղասին սրտները պղտորում
Յեվ ամեն ժամ լեղաճաք աղաղակում — «տրակտոր»:
Տրակտորը մենք ենք բերում, տրակտորն ույժ ե հսկա,
Ու վորպեսզի նա լինի, վոր դա նա գալ տարի, —
Մեզ հարկավոր ե լարում, մեզ հարկավոր ե կամք
Ու միացյալ աշխատանք չթի ու յեղների:
Յեվ չնայած, վոր վոմանք հոգնել եյին սաստիկ,
Ել վոչ խոտ եր մնացել և վոչ ուտելու հաց,
Բայց յերբ խնդիրն իրիկվան գնում եյին նիստին,
Հաղթում եր կուսբջիջի գիծը կազմակերպված:
Ձգում եյին, վոր առանց լարման ու տանջանքի
Հաղար տարվա ծոված կյանքը չես կարող ուղղել:
«Ցանել, ցանել մինչև վերջ, քարն ել թեկուզ ճաքի...»
Այս վճիռն եր վորոճում յուրաքանչյուր ուղեղ:

Փովեց բարակ մթնաշաղ: Յեղներն արձակվեցին:
Ո՛վ կպահի այս գիշեր... Տիվ կմնա սարում...
Չաթնանց Բեյբուլթը փախել դարձել ե չար բանդիտ.
Նա լծկաններ ե քշում խոտի դեզեր վառում...
Նա սպառնալիք ե տվել, վոր իր «առեկեկեռով»
Կհարձակվի մի գիշեր Բարաշամբի վրա:
Յեվ իրբ թե Սողոյին նամակ ե միշտ գրում,
Վոր սա գյուղից հեռանա, չխանգարի նրան...
Ու պատվում ե գյուղում այդ մուլթ ասեկոսեն
Հետգհետի ափելի ու ափելի համառ:
Նամանավանդ, վոր Սողոն սիրում ե շատ խոսել,

Թե գնալու յե քաղաք բժշկվելու համար:

Յերկյուղայի յե սաստիկ գիշերը մնալ սարում...

Այդ մասին են մտածում, չնայած չեն խոսում:

Քեռի Մուքոն ճակատին կնճրոներ ե կուտակում,

Բայց առաջարկ անելու չի պատվում լեզուն:

— Յես կգնամ, կմնամ գիշերն յեղներին մոտ, —

Բացականչեց Ալեքսանն ու հրացանն առավ: —

Ի՞նչ, մեզ սարսափեց ե տալիս մի կուլակի լակոտ:

Յեվ մենք պիտի տան գնանք պլան չկատարած:

Հովաս քեռին կախ ընկավ վորդու հրացանից.

— Թույլ տուր, թույլ տուր յես գնամ:

Բայց չթողին նրան:

Նովրուզն իսկույն միացավ լուրաջ Ալեքսանին

Ու յերկուսով միասին լծկանը սար տարան:

Մութ: Մութ: Անտառ: Զխոսկան համր հարսերի պես

Ծառերն ահա մութ հագած՝ կանգնած են լուռ վոտի

Մի վիթխարի, ահավոր, անհայտ կեսուրի դեմ,

Վոր վորոճում ե մտքում զարհուրելի վոճիր:

Սկսեցին արածել յեղները խիստ սոված,

Գիշերային անտառում, սովերների ներքո:

Նովրուզի սիրտը խոնավ յերանությամբ դողաց

Լծկանների լիաթոք փնչոցների յերգով:

Այդ կանաչը հյութավետ, ժամերը լուռ հանգիստ,

Վոր վայելում են հիմա անասուններն ուժատ, —

Վաղն առավոտ կփոխվի լարված աշխատանքի,

Վաղը կհերկեն, կցանեն նրանք ավելի շատ:

Իսկ Ալեքսանը, հայացքը խավարին գումած,

Ու հրացանը սեղմած վոսկրոտ իր ձեռքերով,

Իր ընկերոջ ականջին ասում ե խիստ կամաց

Կարկաչանոս պատմությունն իր յերջանիկ սիրտ:

Լեռնանում են Նովրուզի յերիտասարդ սրտում

Անպատմելի մի կարոտ, անհաղթելի ծարավ:

Նա յիլ ուներ սիրային այրող մի պատմություն:

Բայց նա տխուր վերջացավ... նրա Ասուն տարան:

— Իսկ քո սիրածն, Ալեքսան, վերադարձավ կրկին:

Քեզ սպասում ե հիմի... Գուցե դեռ չի քնած:

Մտածում ե քո մասին թաշկինակը ձեռքին...

Յես յեղները կպահեմ, դու յիլ ու տուն գնա:

— Վոչ-վոչ, Նովրուզ, չեմ գնա: Քեզ չեմ թողնի մենակ

Զարհուրելի անտառում, Զաթնանց Բիյուրթի դեմ:

Նա կերևա այս գիշեր... Նա հանգիստ չի մնա:

Նա վրեժ ե վորոճում հիմա, յես լավ գիտեմ.

Սուս... Դու շուկ լսեցիր... Յես լսեցի կարծես...

Պարտոց եր, թե շուկ... մարդ կա տանձնեռ տակ...

Ե՛յ, դուրս արի, մոտեցիր, թվ ես... ով կա այգետեղ...

Պատասխանը վորոտաց.

— Թրախք... Թրախք... Թրախք...

Ու թույլ ե տնկտուն կայծակահար այդ լուրն

Այդ ահավոր արյունոտ կարմիր առավոտի:

Հետզհետե հավաքվում ու կուտակվում են լուռ:

Գյուղն արթնացել գիշերով կանգնել ե քար, վոտի:

— Արի, կաչին, մոտ արի, ել մի մնա խռով,

Արի փեսիկ համբուրի, ասա՝ «գնաս բարով»...

Թեղում այան մղկտում, լալիս ե բարձրաձայն,

Ու մոտենում ե կաչինն ինչպես քարե արձան:

Գյուղխորհրդի դռան մոտ, կանաչ խոտի վրա

Դրված ե նա — հերոսի արնաշաղախ դին:

Վերքը վողորկ ճակատին՝ վորպես կարմիր կրակ՝

Ցավ ու մորմոք ե սալիս հուզված ժողովրդին:

— Թուշլ տուր, Թուշլ տուր, յես պառկեմ կանաչ
 խոտերի մեջ, —
 Թփրտում ե Հովասափն ու չեն Թողնում նրան...
 — Գլխի յարեն յես առեք, իմ գլխի մեջ գըրեք,
 Թող իմ արյունը Թափվի ճանապարհի վրա:
 Իսկ Արուսի յերեսին վիշտը Թուխալ ե դրեր
 Այգեպես յերկինքն ե մթնում արհավիրքից առաջ:
 Վոչ միայն խոր վիշտ ե այդ, այլ քանդակված վրեժ,
 Աղաղակող լուսթյուն ու քարացած Թառանչ:
 Հասկի նման կոտրված, հե՛ ված ուսուցչուհուն,
 Արտասուքները սառած Թարթիչների ձերին,
 Նա լայնացած աչքերով վերքին ե դեռ նայում
 Ու մրմնջում ինքն իրեն, ներսում, անլսելի:

— Վեր կաց, վեր կաց, Ալաքսան...
 Չե՞ս իմանում... չե՞ս լսում...
 Չե՞ վոր յես ել հիմա կամ...
 Միասին ենք կոլխոզում...
 Վեր կաց... գնա ժողովի...
 Մոռացիլ ես դու մի՞թե...
 Նիստ կա եսուր ակտիվի...
 Կանչե՛լ ե քեզ կոմիտեն...

Ու վողբազին անեծքի, վայնասունի միջից
 Հանկարծ հնչում ե հուժկու ձայնը Գարսեանի.
 — Այս արյունը, այս զոհը նրան մենք չենք Ղիջի:
 Չի խուսափի վրեժից անարգ մեր Թշնամին:
 Չաթնանց Բեյրութն այս գիշեր իր անելիքն արավ.
 Խից նա մեր շարքերից մեր ամենալավին:
 Բաց մենք յես չենք նահանջի, մենք կզնանք առաջ

Ձենք վախենա գնդակից ու չենք ել տատանվի:
 Կամենում են արյունով մեր նոր ուղին փակել,
 Վոր մենք տնից դուրս չգանք, ցանքը մնա կլաւտ,
 Վոր սովը մեզ կռացնի, կոլխոզը խորտակեն,
 Վոր ճխլտի մեզ ելի կուլակային մի Թաթ:
 Հարվածում են նրանք մեզ աշխատանքի ժամին,
 Կամենում են ջլատել ուժերը մեր համառ...
 Բայց, զիպի դաշտ, ընկերներ, զոհված Ալեքսանի,
 Մեր Թանգագին հերոսի հիշատակի համար:
 Մինչև ցանքը Հավարտենք, չենք հեռանա հանդից,
 Այս ե վրեժն արժանի, հարվածը մեր հատու: —
 Տարերային ցասումով ծառս են լինում մարդիկ,
 Յերիտասարդ զոհի դին նորից շրջադառում:

Շրջանային կենտրոնից յեկավ նվազախումբ
 Ու կատարեց հերոսին հանդիսավոր Թաղում:
 Իսկ Լաչինի աչքերից հոսեց աղի առուն
 Ու մոլորվեց միբուքի վայրի մացառներում:
 — Գնա՛ս բարով, Ալեքսան, — ասավ Մուքոն.
 հուզված, —

Դու բրիգադի սյունն եյիր, աշխատանքի հերոս:
 Քո քրտինքով են ազնիվ արտերը մեր բուսած
 Ու կհասնեն քո արյան վառման կաթիլներով:
 Հարվածային աշխատեց, հերոսի պես զոհվեց
 Բայրեիկյան առաջին մեր գարնանացանին:
 Մեր բրիգադի անունից առաջարկում եմ յես
 Տա՛լ հերոսի մականուն ընկեր Ալեքսանին:

Առավոտյան մութ-լուսին Լաչինը լուռ դարձանց:
 Գոմից յեղներն արձակեց ժլատ արտասովորով,

Քչեց դեպի կողքիկտիվն ու տխրութեամբ հայտնեց.

— Ինձ ել դրեք, ընկերներ. յեկա ձեզ ոգնելու...

Սողոն քաղաք եր փախել. նա քաղաքից չեկավ,
Մինչև Չաթնանց Բեյութին ձերբակալեց Չեկան:

Նա գյուղ մտավ գիշերով, գաղտագողի, լռին:

Վախենում եր հանդիպել նախկին ընկերներին:

Այդ ուր մինչև յերեկո նա դուրս չեկավ տնից:

Ի՞նչ հնարով որերի անիվը դարձնի:

Յերեկոյան, յերբ մի դառն ու չար նախազգացում

Սրտի խորքում ճնշելով միտք եր անում Սողոն,

Կամըջի մոտ չարագույժ կանչեց կատարածուն.

— Նոր գյուղխորհուրդ ենք ընտրում...

Ժողով և հեյ...

Ժողով...

«Տեսնես թմն են ընտրելու...» — միտք եր անում տխուր

Ու իր սրտի թուշնի պես դառը թութուն ծխում,

Նա սովորել էր գյուղում մենակ զեկավարել

Վորպես «կարմիր» տանուտեր՝ հին թայֆային հենված,

Սանթրոսի տանն՝ արաղի թասը ձեռքին՝ ճառել

Նախ բջիջի և հետո «մայր աթուրի» կենաց:

Իսկ յերբ հանկարծ զորացան ծիւրը նոր գյուղի,

Յերբ վոր տակին յերերաց պապենական թայֆան,

«Ընկեր» Սողոն հասկացավ, զգաց գաղտագողի,

Վոր չի կարող նա թողնել կենցաղն իր հնավանդ:

Դրա համար բնազդով նա վորոշեց կռվել

Ընդդեմ այդ նոր, անսովոր, կորստաբեր չարժման:

Բայց պարտվեց: Յեվ ահա աստղը նրա ծովել

Դեպի անդունդ է սուրում անդարձ և անգուման:

Այո, նա չեր հավատում՝ թե գյուղը ծանրաքայլ

Ընդունակ եր փոխվելու այդքան արագ թափով:

Թե կարող է կոլեկտիվն ուժեղ հոսանք դառնալ

Ու տանել իր յետևից աները գետնափոր:

Նա կարծում եր, թե միայն ճառերն են տաք, դատարկ

Փոթորիկներ են միայն ժամանակավոր:

Հովաս քեռին չի կարող իր աչառից տալ թարգ,

Ձեն փոխվելու աշխարհի հիմքերը դարավոր:

Նա կարծում եր, կպարտվի կուսակցությունն ահա,

Ելի գյուղում կշահի Արամների դամշին:

Արտոն հոտաղ կմնա, Սանթրոսն՝ ելի աղա,

Ռուսաստանում ել դուցե տիրի անպլիացին:

Այդ եր պատճառը, վոր նա կռվում եր միշտ համառ

կոլեկտիվի, Սեանի բոլոր քայլերի դեմ:

Ու վորպեսզի տեղ անի սև որերի համար

Այցելում եր գիշերով մեկ-մեկ Չաթնանց հողին...

Բայց սխալվել եր Սողոն: Սեանն արդեն տարավ:

Կուսակցությունը հաղթեց: Ցանքը կատարեցին:

Դառնալու յե վաղ թե ուշ գյուղը համատարած:

Դարսեանի յետևից գնում է գյուղացին...

Իսկ նա իր հոր յետևից կոլխուզից դուրս յեկավ.

Յեվ իր դիրքը զորավոր՝ զիջեց Գարսեանին:

Այժմ գյուղում անարգված և անկուսակցական

Պիտի մի կերպ խոնարհված գլուխը պահպանի:

Ի՞նչ է մնում Սողոյին... Ի՞նչ կա, վոր ինչ անի:

Հուլիսի վոչ մի ճառագայթ, վոչ մի հեռանկար:

Պետք է ուրեմն զղջա, պետք է խոստովանի...

Ձեն հավատա... վոչ մի յեղք ու փրկություն չկա:

Նա ջարդված վեր կացավ ու վաղուց տուն բերած՝

Գյուղխորհրդի մատյանից պոկեց մաքուր մի թերթ.

Ու քիմիական մատիտով գրեց թղթի վրա

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

1. «Հրանուշ» (սյուեմ) 1926 թ.
2. «Ջրամցեմերի կապույտ յերկրում» (բանաստ. ժողովածու) 1926 թ.
3. «Նոյեմբերյան որերին» (սյուեմ) 1927 թ.
4. «Զիմ Աղջիկ» (սյուեմ) 1928 թ.
5. «Ռուշանի Բարավիլ» (հսկոսեա) 1930 թ. առաջին հրատարակ.

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ Ե ՀԱՆՁՆՎԱԾ

3. «Հարվածները» (բանաստ. և սյուեմերի ժողովածու)

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

7. «Բրեգադիբի բլսկնոտից» (վեպ կոլխոզարժոււմից)
8. «Դոնբաս» (սյուեմ)
9. «Պատկերներ» (կոլխոզ շարժումից և արդյունաբերությունից)

ՀՀ Ազգային գրադարան



NL0338656

29457

966C2A

602UC 10.